դաշտային թնդանօթները որոտացին, հարւածելով թուրքերին, որոնք շուտով թողին իրենց տները եւ քաշւեցին ձորն ի վայր, Ուրուտի (Ուրուտնայ) վանքը եւ համանուն գիւղը : Զօրամասը գիշերեց լաց դաշտում : Գորիսից եկան սուրհանդակներ, որոնք նամակ բերին Անդրանիկին, որով յայտնուում էր, թէ թուրքերն արդէն դրաւել են հայկական Խոզնավար գիւղը, եւ խնդրւում էր շտապել օգնութեան : Հայկական Խոզնավար գիւղը, եւ խնդրւում էր շտապել օգնութեան :

Զօրամասը Սեպտ. 29-ին Գորիսի մօտերքումն էր, Շաքար-Զուր կոչւած վայրում, երբ հասան նոր սուրհանդակներ եւ աւետեցին, թէ թուրքերը 15 վերստ նահանջել են : Զիաւորներն արագացրին ընթացքը : Երեկոյեան զօրամասը Գորիս մտաւ ուրախ հրացանաձգութեամբ, տեղացիք մէծ հանդէսով դիմաւորեցին մարտիկներին :

Սեպտ. 30-ից մինչեւ հոկտ. 10-ը մենք ապրեցինք անորոշ եւ տարտամ վիճակ . մէր գլխաւոր, եթէ չասեմ միակ անելիքն էր՝ ինքնապաշտպանութեան կազմակերպումը : Ուրքա՞ն զէնք եւ ուզգմամըթերք կայ, որքա՞նն է անհատական : Քաղաքում գտնւած բոլոր ռադմամթերքի պահեստները հարկաւոր էր միացնել եւ ենթարկել կենտրոնական մէկ իշխանութեան, տեղական երիտասարդներին զօրակոչի ենթարկել, կազմել կանոնաւոր վաշտեր, որոշել դիրքերը եւ կարգաւորել զինւորների եւ ձիերի ուտեսատը :

Զմեռը մօտենում էր . Երեւանից դէպի Դարալագեազ ու Ղարաբաղ տանող ճամբաները չուտով ծածկելու էին ձիւնով : Այդ օրերին Երեւանից հասնում են Գորիս երեք սպաներ, եւ երկու ծանօթ հասարակական գործիչներ՝ փոխ - գլխապետ Ստեփան Սարգսեան, փոխ - գլխապետ Մելիք-Հուսէյնով, սպայ Խուրին Նարինեան . հասարակական գործիչներից յիշում եմ միայն կոստիա Աթայեաննին : Դրանց բերած թերթերից տեղեկացանք, որ Սեպտ. 14-ին տաճիկները գլրաւել են Բագում եւ Միանան ու Թաւրիզն էլ գտնւում են տաճիկների ձեռքում : Այդ լուրերի ազգեցութիւնը շատ ուժեղ էր . լաւ է, որ առաջ չէին ստացւել, եթէ ոչ կարող էին վատ ազդել թէ Անդրանիկի եւ թէ մանաւանդ ժողովրդի վրա եւ գուցէ այն ժամանակ տեղի չունենային Հրթօքիւլի, Զօրամասլուի եւ Արակեսի, ինչպէս եւ Աղուտու եւ Վաղուտու վերջին արշաւանքները, որոնք այնքան բարերար եղան Սիսիանի եւ Զանգեզուրի համար՝ թէ քաղաքական - ռադմական եւ թէ տնտեսական - հաղորդական տեսակէտից :

Վերոյիշեալ հինգ հոգու Գորիս գալլ մէծ կասկածների եւ մտատանջութեան մէջ ձեզ Անդրանիկին, մանաւանդ որ նրանք եկել էին Երեւանի Հանրապետական կառավարութեան կողմից եւ որոշ առաքելութեամբ : Յայտնի է, որ Անդրանիկին անձնական գրդապատճառ-

Այդ կոչի մէջ յիշւած էր, որ Անդրանիկը իբր թէ կաշառւած է անդ-լիսկան ոսկիներով եւ ժողովուրդին դէպի կորուստ է տանում: Պատ-ւիրակութեան տւած զեկուցումից յետյ՝ քաղաքական կացութիւնը ճանաչւեց լուրջ եւ ծանրակշիռ, ուստի որոշեց հրաւիրել ընդհա-նուր ժողով, ուր գաւառի բոլոր զիւղերի ներկայացուցիչները պիտի ծանօթանային ստեղծւած վիճակին եւ վճռէին իրենց անելիքը: Դըժ-րախտաբար, տեղական վաշտերի զինուրները, որոնք գտնուում էին Գորիսի զօրանոցներում, բռնեցին դասալքութեան ճամբան, հէնց որ իմացան կացութեան լրջութիւնը: Հոկտ. 13-ին Զինուրական Խոր-հուրդը անհրաժեշտ համարեց ուժեղացնել Սիսիանի ճակատը, ուստի եւ Առաջին ու Երրորդ հեծեալ վաշտերը ուղեւորւեցին դէպի Սիսիան:

Նոյն օրը Զանգեզուրի շրջանի գիւղական ներկայացուցիչները հաւաքւեցին Գորիս. ներկայ էին 61 պատգամաւորներ եւ կոմիսար-ները: Ժողովի սկզբում ընդհանուր տրամադրութիւնը դիմադրելու կողմն էր, մանաւանդ մարտական կեցւածք ունէին Տեղի, կոռինձորի, Խանածախի եւ այլ գիւղերի պատգամաւորները: Ժողովի ընթացքում, յանկարծ, կոռինձորից յայտնեցին, որ իբր թէ 1100 թիւրք զինուրներ թնդանօթներով հասել են Ղարաբղաղ: Այս լուրն իրարանցում ձգեց ժողովականների մէջ, մանաւանդ որ նախաղահն էր թժ. Մինաս Տէր Մինասեանը, մի տարտամ անձնաւորութիւն, իսկ ժողովականների շարքում կար հետագային մեծամասնական յայտնի զործիչ Արմենակ Ղարաբեզեանը, որ համամիտ էր Զանգեզուրը Ազրբէջանին կցելու գաղափարին, քանի որ կարմիր բանակը գալու էր նախ Ազրբէջան, այսինքն՝ Բագու եւ Գանձակ, ապա Ղարաբաղ-Զանգեզուր: Այդ օրը մի կրակոտ ճառ ասաց Անդրանիկը, սակայն արդէն շատերի մտքերը պղտորւել էին. Գորիսի ներկայացուցիչներից ոմանք առաջարկում էին դիմադրել, եթէ եկողները անկարգ զօրք են եւ բաղկացած են տեղական թիւրքերից, իսկ եթէ կանոնաւոր զօրք են՝ անձնատուր լի-նել: Ոմանք էլ ասում էին, թէ Բագուն, Գանձակը եւ Շուշին անձ-նատուր լինելուց յետոյ մենք էլ նոյնը պէտք է անենք, որ չկոսոր-ւենք: Գիւղացի պատգամաւորները առաջարկում էին բոլոր դէպե-րում դիմադրել, քանի որ տաճիկները կոտորել են Բագու հայերին, իսկ Գանձակում եւ Շուշում տակաւին չեն կոտորում, որպէսզի ընկ-ճեն գաւառները՝ Լեռնային Գանձակը, Գարստմանը, Զրաբերդը, Խա-չենը, Վարանդան, Դիղակը, ապա եւ Զանգեզուրը: Երեկոյեան դէմ պարզւեց խորհրդակցութեան արդիւնքը. Ժողովը 27 ձայնով ընդէմ 21-ի որոշեց դիմադրել եւ կատարեց Զօրակար Անդրանիկի բոլոր պահանջները: Նման կարեւոր ժողովում 13 հոգի ձեռնպահ էին մը-

նացել. դրանց եւս հաշւեցինք դէմ. նման պայմաններում ձեւական մեծամասնութեան որոշումը իսկապէս փոքրամասնութիւն էր:

Անդրանիկն անմիջապէս իրեն մօտ հրաւիրեց Շուշու եւ Գանձա-կի գնդերի հրամանատարական կազմին, սպաներին եւ իր նշանաւոր վաշտապետներին. տեղի ունեցաւ զինուրական խորհուրդ, ուր միա-ձայնութեամբ որոշեց դուրս գալ Գորիսի փոսից եւ սպանական դիրք գրաւել Ուչթափալարներում: Խաղմամթերքը պէտք էր փոխա-դրել Սիսիան, իսկ եթէ չկարողանալինք այդ անել, պէտք էր պայ-թեցնել, որպէսզի թշնամու ձեռքը չընկնէր: Դուրս գալու վայր-կեանին պէտք է կոչ ուղղւէր տեղական զինւած երիտասարդութեան հետեւելու Զօրամասին եւ բարձրանալու Ուչթափալարները: Ամբողջ դիշերը տեսնոտ աշխատանք տեղի ունեցաւ:

Հոկտ. 14-ին, առաւտուեան արշալոյսին, զօրքերը կազմ ու պա-տրաստ էին: Մի մասն արդէն նախորդ օրը մեկնել էր Սիսիան, իսկ մանացածը հաւաքւել էր Գորիսի հրապարակը: Պարզ նկատելի էր հասարակութեան բարոյալքւած վիճակը: Զօրամասի մեկնելուց ա-ռաջ խօսեցաւ զարալացեացի Գրիգոր աւագ քահ. Տէր-Աւագեանը, Խանասորի պատմական տէրտէրը: Նա յայտնեց որ Զանգեզուրի ըրջանի ժողովրդի անվճականութիւնը եւ կուելու չկամութիւնը կարող են մեծ վնասներ հասցնել Զանգեզուրին, այլ եւ աղդել Ղա-փանի եւ Սիսիանի հայութեան վրա: Անդրանիկը արտասանեց հրա-ժեշտի իր ճառը եւ ոգեւորեց բարոյալքւածներին: Նա յայտնեց, որ ժողովրդի անվճականութիւնը ստիպում է իրեն լինել շատ զգոյշ՝ ապագայ պատասխանատւութեան հանդէպ, որ այդ տատանումը հարկադրում է իրեն խուսափել կուից Բուն Զանգեզուրում, բայց հայ ժողովրդի համար կայ միայն փրկութեան մի ճամբայ, դա՛ ոչ գաղթն է, ոչ տաճկական տիրապետութիւնը, այլ միայն եւ միայն սրբազն կրիւք. պէտք է կուել եւ յաղթել, իսկ եթէ վիճակւի մեռնել, գոնէ կը մեռնենք պատուվ: Վերջում Անդրանիկը երդուեց, որ ճիշդ է Գո-րիսից հեռանում է, բայց չի կարւում նրանից, նա զօրքի մի մասը միշտ շիման մէջ է պահելու քաղաքի հետ եւ երբ ըր-ջանը հաստատ վճռէ կուել, առաջին հրացանի պայթիւնի հետ ին-քը պատրաստ է օգնութեան հասնելու: Զօրքերը շարժւեցին դէպի Սիսիան, մենք էլ նրանց հետ ։ ։ ։

Տեսարանն իրօք եղակի էր. Դաւիթ Բէկի օրերից ի վեր նման ե-րեւոյթ չէր պատահել. Գորիսի բարձունքից մինչեւ Սիսիանի Ղար-քիլսա գիւղը, ամբողջ ճանապարհին, բանակ էն դրած զօրամասե-րը. ամենքը բացոյթեայ, իսկ Անդրանիկը՝ վրանի տակ: Այդտեղ էին

եւ Շուշու ու Գանձակի գնդերի մնացորդ զինւորները իրենց սպաներով, իսկ տաճկահայ գաղթականութիւնը զօրքից առաջ էր դուրս եկել Բուն Զանդեղուրից եւ արդէն լցւել էր Սիսիանի, մանաւանդ լքած թրքական գիւղերը։ Կատարելապէս հայացել էր Սիսիանը։ Այդ գիւշերը, ժամը 11-ին, հասնում է Սիսիանի շրջանի լիազօր Զաքար Տէր - Ղազարեանը, պարթեւ հասակով մի քաջ երիտասարդ։ Նա իր հետ բերել էր Երեւանից նոր հասած նամակներ, որոնց համաձայն Բուլղարիան հաշտած էր եւ զինաթափ եղած, Զաթալան ոմքակոծում էր, տաճկական զօրքերը կովկասից քաշում էին։ Պոլիսը պաշտպանելու համար, եւ դաշնակիցները մտել են արդէն գերմանական հողը։ Ինչ ասել կուզէ, այդ սրտալնդիչ լուրերը շատ ոգեւորեցին Անդրանիկին, նրան շրջապատողներիս եւ բոլոր զօրքերին։ Անմիջապէս գիշերով այս լուրերը հաղորդեցին Գորիսի Ազգային Խորհրդին, որպէսզի չենթարկւեն տաճիկներին։ Անդրանիկը յայտնեց, որ ինքը շուտով կը վերադառնայ Գորիս։ Իտազմական նոր հեռանըկարներ էին բացում։ նախ պէտք էր արգելել տաճիկների մուտքը Զանդեղուր, յետոյ արշաւել դէպի Շուշի եւ յետ մղել Ղարաբաղից տաճկա-թրքական ուժերը, ապա առաջ շարժւել դէպի Գանձակ-Եւլախ . . .


Հակառակ քաղաքական այդ լաւատես լուրերին, Հոկտ. 15-ին իմացանք, որ տաճիկները առաջարկել են Նորս-Մազրա-Գիւմրի - Գիւմրի շրջանի հայութեանը Ենթարկւել իրենց։ Այդ առթիւ Ղարաքիլիսայում տեղի ունեցաւ Սիսիանի շրջանի կոմիսարների եւ ժողորդրդական ներկայացուցիչների համագումարը։ Այս անդամ եւս քաջարի սիսիանցիք միաձայն որոշեցին կուել մինչեւ վերջը։ Մահ կամ ազատութիւն - իրօք այդ եղաւ միշտ Սիսիանի կարգախոսը։ Համագումարը որոշեց՝ ա) կուել մինչեւ արեան վերջին կաթիլը. բ) զօրահաւաքի Ենթարկել 20-40 տարեկաններին. գ) բոլոր միջոցներով բաւարարել զօրավար Անդրանիկի պահանջներին։

Համագումարը վերջացած էր, երբ վրա հասաւ Զանդեղուրի կենտրոնական Ազգային Խորհրդի անդամ Արշակ Շիրինեանը, որ, երբ Զանդեղուրի պատւիրակ գնացել էր Երեւան՝ իմանալու քաղաքական վիճակը եւ խնդրելու օժանդակութիւն Հայկական Կառավարութիւնց։ Թէպէտ Երեւանի կառավարութիւնը համաձայն չէր Զանդեղուրի ժողովրդի տեսակէտին, այսուամենայնիւ Ա. Շիրինեանը, իբրեւ իսկական յեղափոխական, յայտնել էր բացարձակապէս, որ ինքը կանդնած է Զանդեղուրի հայ ժողովրդի տեսակէտի վրա՝ այսինքն չհանդուժել տաճկական կամ ազրէ չանական տիրտպե-

տութեանը, եւ կուել մինչեւ վերջը։ Որոշեց Շուշու գնդի վաշտը պահել Սիսիանում, գնդապետին էլ նրա հետ, այնտեղի ինքնապաշտական գիւղերից եւ արդէն լցւել էր Սիսիանի, մանաւանդ լքած թրքական գիւղերը։ Կատարելապէս հայացել էր Սիսիանը։ Այդ գիւ-

շերը, ժամը 11-ին, հասնում է Սիսիանի շրջանի լիազօր Զաքար Տէր - Ղազարեանը, պարթեւ հասակով մի քաջ երիտասարդ։ Նա իր հետ բերել էր Երեւանից նոր հասած նամակներ, որոնց համաձայն Բուլղարիան հաշտած էր զինաթափ եղած, Զաթալան ոմքակոծում էր, տաճկական զօրքերը կովկասից քաշում էին։ Պոլիսը պաշտպանելու համար, եւ դաշնակիցները մտել են արդէն գերմանական հողը։ Ինչ ասել կուզէ, այդ սրտալնդիչ լուրերը շատ ոգեւորեցին Անդրանիկին, նրան շրջանի ներկայացուցիչները, որոնք յայտնեցին, թէ Ղափանն էլ որոշել է կուել։

Թաւրիգ
(Շարութակելի)



ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ՀԱՄԱՅՆԱՐԴԱՑԻՆ ՊԱՏԵՐԱՋՄԸ ԵՒ ՏԱՐՈՆԻ ԱՇԽԱՐԴԸ

X

ՔԱՆ ԼԵՆԵՐՈՒ ՄԵՐ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

Օգոստոսն էր : Օր մըն ալ տարէց կին մը սեւցած կմախքի մը իր երեւոյթով , մեր քով յայտնեցաւ : Մուշէն կուզար . գացած էր իր քիւրտ կին եւ ամայի փողոցներուն մէջ ոսկորներ եւ պտուղներու կեղեներ ժողվելով կերակրաւած էր քանի մը օր : Պատմեց թէ Սուլթանէն «Փէրման» է եկեր , որով «ներում կը չորհէւր» փախստական այն հայերուն , որոնք անմիջապէս կերթային յանձնելու «հուք-մաթին»... : Եկած էր լուր տալու ցաք ու ցրիւ բեկորներուն : Տեսած էր հայ կենդանի թողնւած քանի մը արհեստաւորներ՝ հացագործ , դերձակ եւ կօշկակար , — որոնք բանակի համար կ'աշխատէին , որոնք նոյնպէս յանձնարարւած էին վերադառնալ քաղաք , օգտելով «աֆիշահանէին» (կայսերական ներում) : Անտարբեր լսեցինք զինքը . մեր մէջ վերադառնալու տրամադրութիւն ունեցողներ չեղան : Մունետիկի մը պէս , վհուկի երեւոյթով այդ մամիկը , շարունակեց իր ճամրան՝ քօլերու - չօլերու մէջէն մարդիկ ժողվելու :

Գիշերներ մեր թափառումներու միջոցին , հանդիպեցանք մարդկանց խումբերու , որոնք կերթային ապաւինելու «աֆիշահանէին» : Չուզեցինք ու չկրցանք տարհամոզել : Ինչո՞ւ եւ ի՞նչ առարկութիւններով պիտի կասեցնէինք այդ տարաբաղդ մարդ - ուրականները փրկութեան շիւղի մը կառչելու հաւանականութենէն... Ու շատեր դացին :

Շաբաթ մը վերջն էր , որ բերդակայ սարէն տեսանք ողջակիզման թափորները : Այդ քանի մը գիշերները դեղնաւուն - լոյս մոխրագոյն բոցեր կը բարձրանային նորշէնի , թասդիւղի , Մկրագոմի դիւ-

դերէն , իսկ ցորեկները , դաշտին վրայ , չոքած էր աղտ - դեղին ծանը վիթխարի ամպ մը — մուխը վառւած մարդկանց , որոնց ճարպի հոսը , երկա՞ր օրեր , խենթացնելու աստիճան ուղեղներուս մէջ մը լսրճած էր :

Այդ օրերէն մէկն էր , երբ երկու պատանիներ եկան գտնելու մեղի . մատղաշ իմ սիրելիները՝ Լեւոնն ու Գարեգինը : Բայց ի՞նչ էր մնացել այդ թարմ , աշխուժով ու կորովով լի կտրիճ կորիւններէն — սեւ թափանցիկ մորթով պատած ոսկորներու զանդուածներ , որ հազիւ կը շարժւէին իրենց ցնցոտիներու մէջ : «Կերակրեցինք» բոված գարիով եւ եռացուցած դաղձի տաք ջուրով : Գարեգինը պատմեց , որ քաղաքէն կուգան . ժանդարմի սպաներէն մէկը իր քովը առած է եղեր Լեւոնը իրը քարտուղար , թրացնելու յոյսով , եւ երբ օրին մէկը սրիկան փորձեր է բռնաբարել՝ Լեւոնը , կատղած՝ դանակը մխեր է սպայի փորը եւ հրացանը առնելով Գարեգինի հետ փախեր է : Պէտք չկար թէեւ պատմելու «աֆիշահանէին» արդիւնքը , քանի որ աչքովնիս տեսած էինք վառելու տարւող բազմութիւնները , սակայն անյագ փափաք մը ունէինք նորէն եւ նորէն լսելու , ա'լ աւելի մանրամասն , ա'լ աւելի ահաւոր եղեռնի պատմութիւնները անոնց մասին — անխնայ փորելու մեր վէրքերը , տառապանքէն այրւելու վերջանալու փափաք մը ունէինք :

Ու այնուհետև ահաւոր լոութիւն մը տարածւեցաւ Տարօնի դաշտին վրա . գիշերները զարհուրելի և անյատակ սև երախի մը , անդունդի մը պէս տարածութիւն մըն էին մէր առջեւ : Ոչ մէկ լոյս , ոչ մէկ կըակ . այլ եւս զգացինք , որ մարած է օջախը Տարօն աշխարհի , ու մենք միայն , մոլորած ու գաղաղած զաղաններու նման , կառչած ժայռերուն , դեռ ողջ էինք :

Սասունէն ազատւած խումբին դալը քիչ մը աշխոյժ տւաւ մեղի եւ գիտակցութիւն... ապրելու բաղձանքին հետ :

Ռուբէնի հետ էին 8 - 10 հոգի , որոնցմէ կը յիշեմ սասունցի Զօլն եւ Մուշեղը , Փէթարա Մանուկը , Ախօն : Ի հարկէ , արտաքնապէս աւելի առողջ եւ կենսունակ , կոխներէն պարտւած , այդ խումբը պահւած է եղեր այրերու մէջ : Քիչ - շատ սնունդ ունեցեր են , վերջապէս անհնար եղած է հոն մնալ , եկած էին արտասահման անցնելու :

Ոչինչ չհարցուցի Ռուբէնին . ինքն ալ ոչինչ ըսաւ . ի՞նչ էր մնացեր պատմելու . պարզ չէ՞ր ամէն բան... : Յամը էինք ահաւոր անցքերը չըրքելու համար , թէ՛ մենք են թէ անոնք . խուսափողական՝ մեր բազմաթիւ ընկերներու կորուստի հանդամնքներու նկատմամբ ,

բայց ինչպէս հաշտութել կորիսնի, Տիգրանի, Մաօյի, Կիրակոսի, Մանուկի եւ բազմաթիւ հերոս ընկերներու մահերուն հետ — տառապամք մը լուռ ու քարացած:

Պարտած էինք չարաչար — ո՞վ սիրտ ունի վերյիշելու այդպին սի պարտութիւն: Մոլորած ու աննպատակ թափառող մեր խումբը մեծցաւ այլ եւս: Քան լերան եւ իր շղթաներու վրայ ապաստանած ժողովրդի բեկորները հազւագիւտ էին դարձած — ո՞ւր էին, կայի՞ն թէ բոլորը ջարդւած էին — Ասուած դիտէր:

Միայն կառավարութիւնն էր (հաւանաբար Մուշ վերադարձած րազմութիւններէն մեր գոյութեան մասին լուր առած), որ մեր հանդէպ նոր թափով հալածանքի էր ձեռնարկած:

Բացի քրդական մասնակի հրոսակմբերէն, որ սկսեր էին երեւալ արդէն մեր լեռներուն մէջ, մեծ ուժերով մեզի շրջապատելու քանի մը փորձեր եւս կատարեցան:

Օր մը, երբ լեռնազդթաներէն մէկուն վրա տարածւած թիուտներուն ապաստանած էինք, վաղ արշալոյսին, մեր ստորոտը տարածւող հովիտի վայրէջքին եղրէն (որմէ յետոյ դաշտ իջնելու ճամբան էր) նախ քանի մը ձիաւորներ երեւցան, ապա հետզհետէ անոնց յաջորդեցին բազմաթիւ ձիաւորներ՝ շուրջ 3 – 400. որոնցմէ անջատելով երկու թեւեր՝ սրարշաւ առաջացան դէպի աջ եւ ձախ լեռնալանջերը, ապա կեղրոնէն եւս ուժեր, դժոխային համազարկներով, շարժեցան հովիտն ի վեր. գնդակներու տարափով կը որոնէին մեզ:

Մուսա բէզն էր իր աշխրէթով, որ եկած էր ոչնչացնելու Փէղայիներու վերջին մնացորդները: Կառավարութիւնը դիտէր Սասունի խումբին դալը եւ հոն գտնելիս :

Դիտակով կը հետեւէինք անոնց շարժումներուն. տեղերնիս փոխելու ոչ մէկ հնարաւորութիւն ունէինք այլ եւս. պատահականութեամբ միայն կրնայինք փրկւիլ երկար շղթայով առաջացող թշնամիէն: Մեր թագստոցը պատիկ թիուտ մըն էր, հազիւ 120 – 150 քայլ շրջապատով. քիւրտերը իրենց համազարկները աւելի մեծ եւ տարածուն անտառներուն ուղղած էին, երեւի միտքերէն չանցնելով թէ այդ խիտ, բայց խիստ փոքր թիուտներուն կրնայինք ապաստանիլ: Քանի մը գնդակներ միայն մեր ետեւի թուփերը շօշափեց ու անոնց խումբերը մեր երկու քովերէն անցան դէպի բարձրութիւնները. փըրկւած էինք:

Այդ օրւընէ սկսեալ, գրեթէ ամէն օր քիւրտերու ահագին խումբեր շարք առ շարք խուզարկութիւն կը կատարէին լեռներու մէջ, սարսափելի ոռնոցներով եւ բազմաթիւ հրացաններու որոտներու ուղեկցութեամբ:

Սեպտեմբերը կը մօտենար: Մառերը եւ թուփերը կը մերկանային իրենց տերեւներէն. այլ եւս անհնար էր ապաստանիլ անոնց. կընտրէինք խոռոչներ, բացւածքներ ժայռերու ստորոտը, բաժնելով փոքր մասերու; Յուրաքանչիւս կողմէ դաշտերու մէջ այլեւս սպառած էր հացահատիկը. ոռւսական բանակի առջեւէն փախչող մուհամբէրները սրբեր տարեր էին ամէն ինչ — ինչո՞վ ապարի: Սովալուկ մարդկանց խումբեր կը տեսնէինք երբեմն, որոնք ապուշ կամ կիսախինթ էին դարձած. գիշեր ու ցորեկ աննպատակ կը թափառէին այս ու այն կողմ: Մեր մէջ յանդգնութիւն ու կորովն ապառած էր այլեւս ուեւէ բուռն ու յուսահատ քայլ մը ընելու, օրինակ. արշաւանքներ կազմէլու դաշտէն անցնող մուհամբէրներու վըրա եւ անոնցմէ խլելու ուտելիք: Հետզհետէ լեռներէ անհետացան մեր բեկորները. շատերը անոնցմէ ցրեցան կոտորածներուն դործոն մասնակցութիւն չունեցող սասունցի քրտական աշխրէթներու մէջ («Ճէկօ տուն», Բագրանցիներ եւայլն):

Մեր չուրջ կամ մեզ մօտիկ վայրերու չուրջ հազիւ 100 – 120 հոգի կը մնային, որոնք ուեւէ գինով փրկւելու միջոցներ կը խորհէին: Բոլորի ձգտումն էր անցնիլ ուսական բանակ, որ մեր հաշով հեռու չպիտի լինէր: Ամենէն ծանր հարցը հմուտ առաջնորդներ («Վալադ») գտնելն էր, որ գիշերային ճամբաներ լաւ գիտնար եւ առաջնորդէր խումբերը:

Ոռուսական բանակին համելու համար առաջին մեկնողը պուլանցիցի Մարտիրոսն եղաւ («Վարժապետ»), որ փոքրաթիւ ընկերներով թողուց մեզ: Մասնաւորապէս տենդոտ սպասման մէջ էին ամենքը՝ հետեւելով մեր պատրաստութիւն. անհասկնալի հաւատով բոլորը կը կարծէին որ մեզ ընկերանալով աւելի հաւանականութիւններ կունենան ազատելու. իսկ այդ գործով զրադւող Գաւառեան Տիգրանը եւ մէկ քանի այլ ընկերներ խիստ գաղտնի կուգէին պահել մեր մեկնումի պատրաստութիւնները, որպէսզի մեծ բազմութիւն չհաւաքի եւ այդպիսով դժւարանայ մեկնումը: Կասկածի եւ դժգոհութեան մթնուրոտ մը ստեղծեցաւ. իմ պնդումին որ բոլորս մէկանց ճամբայ ելնենք, քանի որ երեք առաջնորդ միայն ունէինք, մեր ընկերները ոչ մէկ կերպ համաձայնեցան:

Վերջապէս, մեզմէ խիստ դժգոհ, բաժնեցաւ փոքր Արամը քանի մը տասնեակ խլեակներով եւ իր երկու առաջնորդներով: Անոնք ընտրեցին Պուլանըի ճամբան, որ Պէջան լերան ստորոտէն կանցնէր: Մերիները գտան բաղէցի Յարէթը, որ գիտէր Ախլաթ – Մանազկերտ ճամբան: Պէտք էր օր առաջ մեկնիլ. այլեւս անհնար էր այդ

պայմաններու մէջ մնալ . նոյն իսկ միջոց չունէինք սպասելու , որ լուսինը վերջանայ — գիշերները կէս ցերեկ էին , չնորհիւ խիստ պարզ-կայ լուսնի լոյսին : Վճռեցինք եւ իրիկուն մը , երբ դեռ նոր արեւը անհետացաւ լեռնաշղթայի ետեւ , կարգի ձգւած մեր 36 հոդինոց խոմքը արագ սկսաւ իջնել լեռն ի վար . . . :

XI

ՓԱԽՈՒՍՏ


Խոր հովիտի մէջ էր , որ կը պատրաստէինք մեր մեկնումին : Ինձ հետ եղող ընկերներ մշեցինք էին — Տիգրան , կօշկակար Արմենակ , երկու Յարօներ , Կոնչոյեան Յովհաննէս , Տէր - Զաքարեան Յակոբ , վրացի Ալեքսանը (որ տարիներ առաջ ինկած էր Մուշ եւ հոն ամուսնացած) , սպայ Միսակը , բիթլիզի պատանի մը՝ Ռստանիկ եւ մեր վալատ Յարէթը : Ռուբէնի հետ կային 8 - 10 հոգի եւ քանի մը ինձի անծանօթ մարդիկ :

Քիչ մը գարի էր աւելցած , որ ծեծեր եւ «Հաց» էինք եփեր քարի վրա : Ռուբէնն ալ գեռ Սասունէն բերած կաշիէ պարկ մը ունէր երկյարկանի , վարի յարկը լեցւած էր հէլլայով , որ անձեռնմխելի կը պահէր մեր աղահ աչքերէն եւ քիմքերէն : Գարիի «Հաց»-երը բաժնեցինք : Վերջին վայրկեանին Լեւոնը եւ Գարեգինը եկան խնդրելու , որ զիրենք եւս առնենք : Մինչեւ այսօր ալ անհասկնալի կը մնայ ինձի , թէ ինչո՞ւ մշեցիները եւ Ռուբէնը հակառակեցան այդ երկու թշւառ պատանիները մեղ ընկերակցնելու : Հակառակ իմ պնդումիս ու սպառնալիքներուս , անկարելի եղաւ համոզել : Եւ մահւան տիսրութեամբ եւ աննկարագրելի դառնութեամբ ու գարշանքով մեր այդ երկու թանգագին կորիւնները թողուցին մեզի ու հեռացան ժայռերուն մէջ . . . : Մինչեւ այսօր դեռ անոնք աչքիս առջին են խայթող խղճի պէս :

Երկարահասակ , նիհար , դալուկ դէմքով , հիւանդագին լայն բացւած աչքերով վալատ Յարէթն էր , որ մեր խմբի առջեւ ցցւած՝ կը քալէր լեռնէն վար :

Մթնչալ էր , երբ մօտեցանք Մեղրադետին եւ նւազած ջուրի հունով մը անցանք միւս կողմը :

Կարծեմ 17 - 18 հոգիներս միայն զինւած էինք՝ անզէնները մեր մէջ առած : Յառաջապահ վալատին հետ կը քալէինք քանի մը հոգի . կար եւ վերջապահ երկու հոգի : Կը յառաջանայինք զգուշութեամբ , բայց շատ արագ : 40 քիլոմեթրէ աւելի ճամբայ ունէինք մինչեւ ար-



Արևինի Լեռնարկի Արևուտան Բայրութ կոմիտեի Թէր Մանաք
1.՝ Ռուբէն . 2.՝ Կոնչոյ Յովհաննէս . 4.՝ Գարի արար Տիգրան .
5.՝ Վայրկական Արմենակ . 6.՝ Փետր արար Ալիօն . 7.՝ Տէր - Զաքարեան ,
8.՝ Յովհաննէս Միսակ . 9.՝ Սահմանակի Մուշ .
Ունիսիկը ամսագիրով մօտ համեմությունին , 1915 սեպտեմբերի 16-ին :

(Կերպարան Մամազիկի մօտ համեմությունին , միջնին , 1915 սեպտեմբերի 16-ին) :

շալոյս, մեր ցերեկւան թագոսոցը հասնելու համար: Քանի մը ամայի գիւղերու քովէն անցանք: Տեղ - տեղ դեռ մարդկային ճարպի և այրւածքի հոգեր կային: Մահմեդական մուհամեդներու փոքրաթիւ կարաւաններու ձայները կը լսէինք հեռուէն որ կանցնէին:

Ամբողջ գիշերը տենդագին արագութեամբ կը կորէինք Դուրանը իր լայնութեամբ, հարաւ - արեւմուտքէն հիւսիս - արեւմուտք, հասնելու համար Վարդենիս գիւղի ետին տարածող ձորերուն մէկուն: Յարէթը շատ լաւ ծանօթ չէր այդ վայրերուն. Ոստանիկը իբր թէ գիտէր, բայց անփորձ պատանին երկար դեգերումներ լնել տւառ մեզ: Յոզնած - ջարդւած, հազիւ մեզի ձգեցինք ձորի մը գլխուն ցըցւող ժայռերուն տակ: Լոյսը կը բացւէր արդէն եւ դիմացի ափէն երկարող կածանէն կը տեսնէինք ձիաւոր եւ հետեւակ բազմաթիւ քրտական խումբեր, որոնք իրենց «լո - լո»-ներու կանչերով, կիշնէին Մըշոյ դաշտը: Այնքան ջարդւած էինք գիշերւան 8 - 9 ժամ անընդհատ քայլքէն, որ անզգայ ինկանք ժայռերու ճեղքւածքներու մէջ եւ քնացանք:

Սպասեցինք արեւմուտքին, որմէ յետոյ քիւրտերէ ապահով էին ճամբաները: Կերթայինք դէսի նէմրութի գագաթը, ուր թէ՛ անվը-տանդ էր եւ թէ բարձրութենէն կրնայինք ուսումնասիրել Ախլաթի զիծը: Բայց հետեւեալ գիշերը չկրցանք հասնիլ եւ հարկադրւած էինք կէս ճամբուն մնալ. ճամբան կորսնցուցած, ինկեր էինք խորխորասոներու մէջ: Բարերադղարար նէմրութի եւ Գրգուոի ստորին լանջերու վրա շատ փոքրիկ պուրակ մը տեսանք եւ այլեւս անկարող շարժելու՝ հոն նետեցանք. լոյսը կը բացւէր: Պատահական պատսպարն մըն էր եւ վտանգաւոր: Ուրիշ ճար չունէինք. շուրջը երկար ասարածութեամբ լերկ լանջեր էին: Քնանալ չէինք համարձակեր. նեղ շաւիդ մը պուրակի քովէն վար կերթար. Ախլաթի ճամբան էր:

Խիստ մտահոգ՝ պատրաստ եւ ծայրայի զգոյշ մեր շարժումներուն մէջ՝ ապաստանած էինք կիստերեւաթափ պուրակին, երբ, յանկարծ, Ախլաթի կողմէն, ճամբայէն երեւցան նախ էշերու կարաւան մը, իսկ անոնց ետեւէն քանի մը քիւրտեր: Արեւ կար, բայց ցուրտ էր: Պուրակը երեւի շատ գրաւիչ տեսք չունենալուն համար, անոնք նախրնտրեցին պուրակէն 150 - 200 մետր վարը իջեւանի՝ բարձւած կենդանիներուն հանգստութիւն տալու համար: Կը գիտէինք անոնց շարժումները: Մտովին խորհեղով - տեսնելու պարագային - ողջ րոնելու մասին, երբ բեցցւած էշերէն մէկը զանդաղութեամբ մեր պուրակի եզրին երեւցաւ եւ դունչը փոքրիկ թուփերու տերեւներուն պարզած՝ մեզի կը մօտենար:

Դժւար չէր գուշակել որ տէրեքն մէկը պիտի գար վճառելու իր կենդանին . . . : Անմիջապէս մեզմէ մէկը փորի վրա սողալով մօտեցաւ պուրակի եղրին եւ երկար ճիւղով մը էշի փորին եւ պարանոցին զարնելով՝ քշեց դուրս այսպէս, որ վախցած կեղանին մեզմէ բաւական հեռու միայն խելքը գլուխը հաւաքեց եւ իր բնականոն վիճակը ստացաւ :

Իջևանած տեղերնիս ջուր չկար. նախորդ գիշերը նոյնպէս ջուրէ զուրկ մնացինք. ցորեկն ալ ծարաւը քաշեցինք. զարէ «Հաց»-ը ա՛լ աւելի ծարաւցուց մեղ. կը տառապէինք: Հազիւ քիչ մը մթնած՝ սկըսանք վերելքը դէպի նէմրութի գագաթը՝ դանդաղ եւ անոյժ:

Դեռ մութ էր, երբ հասանք պաղած ձիւնի խոշոր շերտի մը, որուն տակէն նոյնչափ պաղ կաթիլներ կը վազէին: Պապակած՝ ինկանք ծունկերնուս վրա ցեխերու մէջ եւ ագահութեամբ բերան առինք ջրախառն ձիւնի կտորներ: Վերջապէս, յագեցանք եւ շարունակեցինք բարձրանալ բոլորովին գագաթ, ուր վիթխարի ասպառաժներու բացւածքներու մէջ կը մնային յաւիտենական սառոյցի շերտերը:

Արշալոյսը բացւեցաւ. մեր առջեւ վոււած էր սքանչելի համայնապատկերը Ախլաթի, Վանայ գիերուղ ծովի եւ հեռո՞ւ՝ արեւելք, մանիշակ մշուշի մէջն վանի բերդի. կերեւար նաեւ քաղաքամիջն ծերմակ զօրանոցը . . . Երջանիկ էինք ամենքս - ինչո՞ւ, չեմ գիտեր: Վերադարձաւ մեր հոգեկան հանգստութիւնը. յոյսը ծագեցաւ բոլորիս մէջ եւ կորով մը՝ ամէն զինով ազատելու: Լո՞ւս ամենքս, մեր անթարթ հայեցքներն ուղղեր էինք կախարդող Վասպուրական աշխարհի կողմը, ուր վառ ու իրական կերեւային մեզի մեր ընկերները - հերոսական պայքարին մէջ, կամաւորական գունդերը, ոռու զօրքը, - անխախտ յոյսի վառ ճրագ մը ջերմութեամբ լեցուց մեր հոգին. կարծես ազատւած էինք արդէն:

Ախլաթի դաշտը մեր ոտքերու տակն էր, իսկ մեզմէ աջ կը բացւէր նէմրութի հրաբխային հոկայ անդունդը, որուն լայնածաւալ խորքին մէջ կը տեսնէինք երկու լճակ՝ մէկը վճիտ կապոյտ Գրդուուէն եւ նէմրութէն գրկած, միւսը՝ դէպի արեւելք՝ ջերմուկ: Լճակ մը, որուն շողիները ամպ էին կազմած: Դիտակով երեւցան քանի մը մարդիկ, որոնք անդունդին պուրակներուն մէջ կը բակ կընէին. հաւանաբար թիւրք բանակն փախած զինուրներէն էին, որոնց հետ դորձ ունեցած էինք արդէն . . . :

Վալատ Յարէթի ցուցմունքով՝ դիտակը ուղղեցինք Ախլաթի դաշտին, ուսումնասիրելու համար մեր անցնելիք ուղին:

Մանապկերու Ախլաթէն բաժնող մեզմէ հիւսիս գտնւող լեռնա-

շղթայի ստորոտ գրաւեց մեր ուշադրութիւնը: Դաշտի մէջն եւ ծովափէն բաւական ներս բարձրացող երկգագաթ մլուրներու վրա, տեսանք քանի մը տասնեակ ճերմակ վրաններ, ասպա աւելի վար, դէպի ծովը երկարող դժին երկարութեամբ՝ ճերմակ եւ գորշ վրաններու խումբեր - տաճկական բանակն էր, կասկած չունէինք. կ'ենթադրէինք, ուրեմն, որ անկից անդին որոշ դատարկ տարածութիւն մը պէտք է լինէր, որմէ յետոյ . . . ուռւական բանակը: Բայց ի՞նչպէս անցնիլ այդ շղթայէն: Այդ ցորեկը եւ հետեւեալ ցորեկը ամբողջովին մեր հանգստութեան եւ դիտակով երթալիք անցքեր վինտուելուն յատկացուցինք: Գլխաւորապէս Յարէթը, Խուրէնը եւ ես յանձն առած էինք այդ գործը. դիտակը փոխն ի փոխ իրար կանցնէինք մեր դիտողութիւններու հետ:

Ուրիշ ճամբայ չկար. հիսկս - արեւմուտքը նազուկ լիճը եւ Պուլանըին էր, որ պիտի հեռացնէր մեզ մեր նպատակէն. աջ կողմէրնիս, Վանայ լճի հարաւային ափերն էին. չէինք գիտեր թէ որո՞ւ ձեռքն էին այդ ափերը, Վանը, եթէ այդ կողմը տաճկական զօրքերու վըրաններ չկային, ուրեմն թիւրքերը աւելի առաջ են դացած:

Որոշեցինք հետեւեալ գիշերը իխնել Ախլաթի դաշտը եւ մեր միտքերու մէջ գծած ուղղութեամբ առաջանալ, ջանալով հասնիլ լիմացի լեռնաշղթային, որ կը տանէր դէպի Մանապկերու: Մեր անցնելիք ծրագրւած ուղղութեան վրա կը տեսնէինք չորցած առակներու երկար փոսեր, որոնք կընային աննկատելի դարձնել անցքը:

Մեր ծրագիրը կազմած էինք. այեւս անկարելի էր տատանիլ: Վերջին կարգադրութիւններ ըրինք. խսորէն հրամայեցինք ծայրայեղ զգուշութեամբ քայլելու, խօսելու, եւ առաջապահներու ամէն մէկ քայլն ու շարժումները դիտելու ու անոնց օրինակին հետեւելու անմիջապէս: Դաշտ իխնելէ վերջ, երկար շարքով մը կը քայլէինք, մերթ Ռուրէնի եւ մերթ իմ առաջնորդութեամբ: Վրաններէն դեռ շատ հեռու էինք, երբ բազմաթիւ ձիերու ոտնածայններ հասան մեղի: Տափեցանք փոքրիկ փոսերու մէջ. հաւանաբար շըզուն պահակ խումբեր էին, որոնք լուսութեամբ եւ ցրւած շղթայով անցան գէպի ծովափի: Երբ բաւական հեռացած էին, հապճեալով ելանք եւ աւելի արագ առաջացանք:

Այժմ արդէն մեր երկու կողմերը բանակն էր . . . Օգտագործելով գետնի եւ առուներու բացւածքները, մէծ արագութեամբ անցանք այդ գտանդաւոր գոտիին եւ գրեթէ հասած էինք լեռնաշղթայի ստորոտ, երբ անսպասելի կերպով մեր առջեւը գետակ մը տեսանք, որ կը հոսէր տարածուն, բայց ոչ խոր ձորէ մը: Լեռնէն տեսած չէինք

չարավաստիկ գետակը : Այդ ոչինչ, ի հարկէ, բայց գետակի կողմէն քանի մը գամբռներ հաշելով կուպային մեր կողմը : Հօտերու չներ էին, եւ քանի որ բնակութիւն չկար այդ կողմէրը եւ բանակի վրան-էին, եւ քանի որ բնակութիւն չկար այդ կողմէրը եւ բանակի վրան-էին, եւ ետին էինք թողած, ուրեմն անոնց հօտերն էին : Երբ այս եզրակացութեան հասանք, թիւրք սպայի համագետով սպայ Մի-սաքը, ես եւ երրորդ մը առաջ ինկանք, խումբը 100 քայլի վրա ձգե-լով ու զայրացած՝ թիւրքերէն պուացինք՝ «Անիծեալնէ՛ր, չէ՞ք կըր-նար ձեր չները զսպել, շուտ յետ կանչեցէք» :

Մեր յանդուզն եւ յուսահատ այս կանչը իր աղեկցութիւնն ու-նեցաւ . լսեցինք պահակ – հովին ձայնը, որ կանչեց շուները : Այլեւս վայրկեան մը իսկ անկարելի էր կորսնցնել . արագացուցինք մեր քայ-լերը . խումբը հետեւեցաւ մեղի եւ իջանք ջրի ափը, ուր ոչ մէկ անցք իջրը . իսկ հովինք մտանք մէջը, թիւրքերէն բարձրա-կար : Կօշիկով, հագուստներով մտանք մէջը, թիւրքերէն բարձրա-կար կանչելով՝ «Օսման, այս կողմէն», «Հասան, կամաց ան-ցիր», եւայլն : Այդ աստենն էր, որ նկատեցինք հասպին հօտեր ոչ-իսարներու . իսկ հովիները (որոնք, հաւանաբար, զինւորներ էին)՝ քնած տեղերնէն ըշշարժեցան իսկ . կրնային սպասել, որ բանակին մէջ, զօրքէն զատ ուեէ մէկը իրենց քթին տակէն անցնէր . . . :

Ամենքս անցած էինք արդէն գետակէն եւ հետ ի հետ լեռն ի վեր կը քայլէինք : Լերկ ու բուսազուրկ, հսկայ լերան բազմաթիւ թեւեր էին, իրարմէ զատաւած նեղ ձորակներով : Ծայրայեղօրէն յոզնեցու-ցիէ ճամբայ : Պատսպարեւու ոչ մէկ վայր : Պէտք էր ամէն զինով լեռ-նաշղթայի վրային անցնիլ եւ մեղի ձգել Մանագիկերտի ետին :

Կէս գիշերը արդէն անցած էր, իսկ մենք գեռ ահագին ճամբայ ունինք առջեւնիս : Կենթագրէինք, որ այլեւս թրքական զօրքի չպի-տի հանդիպէինք, բայց առաջապահներ, անշուշտ, պիտի ունենար Ախլաթի դաշտին մէջ սպասող բանակը : Ո՞ւր էին անոնք : Անինայ էինք մեր խումբի նկատմամբ . կը ստիպէինք արագացնել քայլերը . ծարաւը եւ անօթութիւնը ուժաթափի էր ըրած շատերը, եւ պատասնի Ոստանիկը, որուն ոտքերը այլեւս կը հրաժարեէին տանիլ զինք, ին-կաւ գետին, կիսամեռ : «Զեմ կրնար, գացէք դուք, ես կը մեռնիմ», բաւաւ եւ աչքերը փակց : Ի՞նչ ընել . շալկելու վիճակ ոչ մէկը ունէր այդ տառապալի վերելքին մէջ . թողուցինք ճորակի մը մէջ մեռնելու Ոստանիկը . . . :

Ամէն կողմ թափթիած էին պայթած եւ չպայթած ոռոմբերու կը-տորներ եւ ոռոմբեր, զատարկ փամփուշտներ, թղթի կտորներ . ու-րեմն, նոր կունեն են եղեր այդ տեղեր . ուրս բանակը, ուրեմն, շատ հեռու պէտք չէ որ լինի : Ուժասպառ, բայց փրկութեան սեմին հաս-նելու դիակացութիւնը մեր ուղեղներուն մէջ սպամած՝ ոյժ կուտա-

յինք մեր ոտքերուն : Յարէթը լսած էր, թէ գագաթին շատ մօտ աղ-րիւրի մը պիտի հանդիպէինք . եւ իրաւ, վերջապէս, հսանք այդ փրկարար ակին ու անյագօրէն թափեցանք վրան :

Գագաթը շատ մօտ էր . մութին մէջէն կը տեսնէինք անցքը գա-ղաթի վրայէն եւ ձախ կողմը՝ սղամի սրածայրը բարձրութիւն մը : Յարէթը լսած էր, թէ անցնելիք ճամբան նորէն անջրդի է . մեր ըն-կերներէն մէկը միկ մը ունէր, որ հանեց, ջրով լեցնելու համար : Ենթադրելով, որ շուտով կը համնի մեր ետեւէն, յառաջացանք եւ մօտեցանք գագաթին : Այդ վայրկեանին էր, որ ձախ կողմի բարձրու-թեան վրա ցցւած սեւ սուեր մը նշմարեցինք եւ անմիջապէս չարա-դուչակ սպառնական կանչ մը՝ «Հուն քի՞նա» (ո՞վ է եկողը) : Կայ-ծակի արագութեամբ կոահելով որ բանակի պահակներն են, նորէն կրկնեցինք մէկը խաղը . պատասխանեցինք հաստատ ձայնով, թէ թըր-քական այսինչ զօրաբաժնէն ենք եւ որ կերթանք հետախուզութեան . սպայ Միսաքն էր խօսողը : Թերեւս առանց կասկածելու, միայն հե-տաքրքրութեան, ծխելիք կամ ուտելիք խնդրելու դիտումով, պահա-կը միաժամանակ կ'իջնէր դէպի մեզ : Մեր շփոթութիւնը կատար-եալ էր . մօտենալուն պէս պիտի հասկնար իրողութիւնը . իրար հըր-մշտկելով թափեցանք լերան միւս կողմի զառիվայրէն դէպի ձորերը : Պահակը հասկցու անմիջապէս, որ խարէութեան զոհ է գացած, ա-հարեկ՝ «Յօ – յօ» հաւարը պոռաց եւ հրացանը արձակեց : Աղմուկի վրա, մեր աջ կողմի ճորակէն դուրս թափեցաւ ահագին խուժան մը՝ սղուալով եւ անկանոն հրացանաձգութեամբ : Մենք ոչ մէկ գնդակ արձակեցինք . անընդհատ եւ խմբած կը վաղէինք ու կը գործէինք դէպի ձորը . զնդակներու տարափը մեր գլուխներու վրայէն եւ կո-դերէն կը զարնեէր ժայռերուն եւ հողին :

Տասը բոպէ միայն տեւեց այդ բոլորը : Մենք յատակն էինք . հե-տապնդող չկար այլեւս : Բայց ջուրի պաշար առնող մեր ընկերը մը-նաց միւս կողմը (հետագային նա կրցած էր Սիփանի կողմէն աղա-տիլ ու գալ) :

Յարէթը անգութ խստութեամբ կը վազէր եւ կըստիպէր մեղի հե-տեւելու իրեն : Չորերէն դէպի շղթաներու թեւեր, նորէն վայրէջք ձորեր, նորէն վերելք լեռնային այդ լարիւրինթոսէն : Մոռցած էինք ե՛ւ յոզնութիւն ե՛ւ քաղց ե՛ւ ծարաւ . պէտք էր փրկւիլ . . . :

Արշալոյսը շառագունած էր արդէն, երբ Մանագկերտի դաշտի ծայրամասերը երեւցան : Բացարձակ ամայութիւն ամէն կողմ . «չէ-գոք գոտիի» մէջ էինք :

Երբ այլեւս վերջին շղթաներէն մէկուն վրա էինք եւ առաւօտը բացւած էր, տեսանք մէր անցած լանջերու մէկուն վրա 50-60 ձիաւորներէ բաղկացած թրքական հետախոյզ խումբը... Շա՛տ հեռու էին մեղմէ, եւ ոռւսական բանակը մեր առջեւը պիտի լինէր: Երկիւդ չոնչինք այլեւս: մերինները սկսեցին բարձրաձայն կանչել, ծաղրել ու պարել անոնց առջեւ: տեղէն չչարժւեցան ու քիչ մը վերջ անհետացան լերան ետեւ:

Այժմ մեղի համար կենսական հարցը կը մնար ոռւսական բանակի վայրը գտնելը: Խորհեցանք բանակի խուզարկու խմբի մը կերպարանքը առնել: այլեւս վախը անհետացած էր բոլորի սրտէն: Իջնելով դէպի Մանազկերտի գաշտը՝ մօտեցանք ամայի պղտիկ գիւղի մը: Երկար դիտելէ վերջ՝ նկատեցինք փոքրիկ ծուլս մը, որ կը բարձրացանար տունէ մը: Շղթայ կազմած՝ զինւածներս յառաջացանք, շրջապատեցինք տունը եւ ծեծեցինք դուռը. բացողը քիւրտ պատանի մըն էր, որ ահարեկ՝ լեզուն հազիւ աշրժեց բերանին մէջ ու արձանաձաւ: Հարց – փորձ ըրինք: Երկու բանակներէն ալ փախուստ արւող քիւրտ բնակիչներէն էին: կոյր մայր մը ունէր: օճախին վրա կորկոտ կը խաչէին՝ ճաշ եփելու համար: Լսինք թէ չպիտի վնասենք իրենց, եթէ մեղ քիչ մը ուսելիք տան եւ ըսեն թէ ուռւ բանակը ո՞ւր կը գտնէի: Կոյր պառաւը, երեւի մէր ճայներէն կուսաց, որ իրենց վնասելու իրապէս ցանկութիւն չունէինք, ըսաւ պատանիին որ հորած տեղէն իւղ հանէ: տղան մառանի անկիւնէն պղտիկ պուտուկ իւղ հանց եւ տւաւ մեղի: Խուս բանակին տեղեկութիւն չունէին: շարաթ մը առաջ միայն անոնցմէ խումբ մը երեւած էր այդ կողմերը: կ'ենթազրէին, որ իրենցմէ 2-3 քիւրմետր հեռու գիւղը կրնային լինել: Խնդրեցինք պառաւէն, որ իր թոռը տայ մեղի՝ գիւղը ցոյց տալու համար: պառաւը, հոգեկան խոռվքով, յօժարեցաւ թոռը ընկերացնել մեղ՝ երդւընցնելով որ «իր միակ լոյսը» անվնաս կը վերդարձնենք իրէն:

Տղան առաջնիս ձգած, երկու զինւածներու հետ, չարունակեցինք մեր ճամբան: Մթնած էր արգէն, երբ պատանին ըսաւ, թէ գիւղը առջեւնիս է: իրաւ, մեղմէ քանի մը հարիւր քայլ հեռու նկատեցինք սեւ կոյտեր, իսկ անոնցմէ դուրս, մեր ճախ կողմը՝ ծառի պէս բան մը: Որոշեցինք 8-10 հոգի, Յարօյի առաջնորդութեամբ, գիւղը ճամբել հետախուզելու: Երբ մեր յառաջապահները մօտեցած էին գիւղին, նշմարւած ծառէն երկու սուերներ բաժնւեցան եւ շատ արագ դէպի գիւղը գացին. ձիաւոր էին, անշուռվ այդ, մեր խում-

բը արագացուց իր քայլերը՝ մեր յառաջապահները թակարդի մէջ չև թողնելու մտահոգութեամբ: Հետախոյզները անհետացած էին գիւղովնելու լուսականաձութիւն լուսցաւ գիւղին: Փութացինք դիմք մէջ, երբ խառն հրացանաձութիւն լուսցաւ գիւղին: Փութացինք դիմք մէջ էր լուսականաձութիւնը: Մենք Համազարկ տւինք անոնց վրա եւ աշխատերեկանք չէին: Մենք Համազարկ տւինք անոնց վրա եւ աշխատեցանք կորել ճամբանին: Հրացանաձութիւնը 10-15 վայրկեան տեղանք կարգավորեցաւ: Փութացինք մտնել գիւղ, ուր մերինները գլուխ գիւղը դաղրեցաւ: Փութացինք մտնել գիւղ, ուր մերինները գլուխ գիւղի նմանող բարձրութիւն մը:

Պատմեցին որ քիւրտ կամ չէրքէղ փախստական գիւղացիներ են եղած երեւի ողոնք գիւղերները գիւղ կուտան կերպարելու եւ պաշար տանելու լեռը: Բակի մը մէջ խոշոր կրակ մը վառւած էր, ահագին կաթսայ մը կեռար վրան: Կորկոտ էր: Մեր ճաշը պատրաստ էր. հինգ տմսէ ի վեր տաք կերպուրի երես չէինք տեսած: Գիւղը քիւրտի էր. շատ քաղաքակթուած էր արդէն քիւրտի գիւղ լինելու համար: Պը շատ քաղաքակթուած էր արդէն քիւրտի գիւղ լինելու համար: Կորկոտ պահականի կամ էր, երկաթէ մահճականեր եւ ճերմակ պատերով սենեակիներ ...:

Լաւ տեղաւորւեցանք. պահակներ դրինք բերդին վրա եւ ճամբանի ուղղութեամբ: Լոյսը բացւեցաւ. ուսումնասիրեցինք գիւղը եւ շրջակայըը: Գիւղերւան կուին ձի մըն էր սատկած ու քովը եկայի մը շրջակայըը: Գիւղերւան կուին ձի մըն էր սատկած ու քովը եկայի մը (տոպղակ), պաշարով լեցուն: Գիւղի քովը ոչ բարձր բլուր մը կար, որուն վրա բարձրացանք Տիգրանը եւ ես: Մանազկերտի գաշտը մեր առջեւն էր փուած: կը դպայինք, որ մօտեցած ենք փրկութեան հանդրանին:

Ամբողջ ցորեկը, գիտակը աչքերնուս՝ կը սպասէինք տեսնել ոեւէ կենդանի էակ, շարժում, ոեւէ նշան ոռւսական բանակէն:

Ու ահա, կէսօրւան մօտ, նշմարեցինք մեղմէ շատ հեռու ձիաւորներու խումբ մը, 50-60 հոգիէ բաղկացած:

Խումբը կիսալուսի ձեւով գանդաղօրէն կը յառաջանար մեր ետեւ ձգած լեռնաշղթաներուն կողմը: Ովքե՞ր էին թիւրքե՞ր, քիւրտե՞ր: կանոնաւոր զօրքեր էին, մութ մոխրագոյն եւ միատեսակ հաղուած: ինչպէս հասկնալ: Մեր գլուխը կը պայմեցնէինք. սիրտերնիս ուրախութենէն ուռած, կից – կտուր մեր տպաւորութիւնները եւ ենթազրութիւնները կը յայտնէինք իրաւ: Վերջապէս, նկատեցինք, որ ձիերու պոչերը կտրւած էին: թրքական ձիերու պոչերը կտրւած չէին, բայց կրնար կապւած ըլլաւ... Ուրախ էինք սակայն, բնագդօրէն կը

զդայինք, որ անոնք ոռւս կրնային լինել: Վերաղարձանք մեր ընկերներու քով եւ յայտնեցինք անոնց եւս:

Տարօրինակ է ըսել, որ այդ ողբերգական պայմաններու մէջ իսկ, մշեցիներու եւ սասունցիներու յարաբերութիւնները կը չարունակէին շատ պաղ լինել եւ թշնամական իսկ: Սասունցիներու խումբը Ռուրէնի հետ առանձին տուն էր ինկած, առանձին կուտէին, իսկ ես, ակամայէն, ի հարկէ, մշեցիներու կողմը կը համարւէի. եթէ ողբերգական չլինէր, բաւական ծիծաղելի էր:

Այդ յարաբերութեան հետեւանքն էր, որ հետեւեալ գիշեր արտայայտեցաւ, երբ իջանք դաշտ. հանդիպեցանք չէրքէզ ամայի նոր դիւլ մը, ուր աքաղաղի կանչ մը լսեցինք բացւող արշալոյսին:

ԶԿԵՄԱՔՔՐՈՒԵՑԱՆՔ աքաղաղով. մեր հոգերը ունէինք: Ռուրէնը եւ սասունցիները պնդեցին, որ վտանգաւոր է մնալ գիւղին մէջ. պէտք է ցորեկով շարունակել ճամբան՝ համարելով այդ շրջանը արդէն ոռւսներէ նւաճւած. ես եւ իմ խումբը խոհեմութիւն կը համարէինք սպասել իրիկւան եւ դաշտը կտրել գիշերը: Երկար ու անախորժ վէճերէ վերջ, անոնք բաժնւեցան մեղմէ եւ ճամբայ ելան դէպի Մանազկերտ: Իսկ մենք հանգստացանք ու մութը իյնալէն յետոյ միայն ճամբայ ելանք:

Կանցնէինք Մանազկերտի հոչակաւոր «քռա»յէն (հրարիսային քարերու անապատ մը), որ պատերազմէն առաջ աւազակային որջ մըն էր: Մեր ճամբուն վրա տարածւած էին խրամներ ու այս ու այն կողմ թափւած էին հարիւրաւոր դատարկ փամփուշտներ եւ ոռւսերէն նամակներ ու գրքերու երեսներ: Զինորներու իրենց տուներէն ստացւած նամակներ էին: Այլեւս կասկած չունէինք, որ ոռւս բանակը Մանազկերտ էր:

Արշալոյսը նոր բացւած, հեռէն նկատեցինք Մանազկերտի բերդը եւ գիւղաքաղաքը: Պուլանը տանող ճամբայի մօտ ցրւած ժայռերու մէջ պահւած՝ գիտակը ուղղեցինք քաղաքի կողմ: Եռ ու զեռ. ձիւորներու մէծ խումբեր. եափունջիներով ու փափախներով մարդիկ. կընա՞ր այլեւս կասկած լինել... Փրկւած էինք:

Զիաւոր բազմութենէն մէծ խումբ մը բաժնւած, մեր քովէն անցնող ճամբայէն մեր կողմը կուղար. երեւի հետախուզութեան կերթային:


Որոշեցինք վրացի Ալեքսանդրն - իբր ոռւսերէն գիտող - մէկ ուրիշի հետ անոնց առջեւ զրկել: Մեր շապիկներէն մէկը (որ ժամանակին ճերմակ էր եղած) դրօշակի մը պէս փայտի մը ծայրին՝ անոնք ելան ճամբու վրա: Տեսանք, որ ձիւաւոր խումբը կանգնեցաւ եւ քանի մը ձիաւորներ սրարշաւ մեր տղաներուն հասան, առին իրենց մէջ եւ մօտեցան խմբի առջեւը կանգնած ձիաւորին:

Ժամանակն էր, որ մենք եւս երեւայինք: Ելանք ժայռերու մէջէն եւ մօտեցանք կողակներու խումբին:

Գրկարաց ընդունեցին մեղ. հարազատի գուրգուրանքով շրջապատեցին փախստականներուն: Սպան երկու կողակ ընկերացուց խմբին, եւ ժամէ մը հասանք կողակներու գլխաւոր կայանը, ուր, բարերադարար, անվտանգ, հասած էր արդէն Ռուրէնը իր ընկերներով:

Փարփակ

Վերջ



Հայ - Հայկական Բանակցութիւնները

ՆԻՍՏ ԵՐԿՐՈՐԴ

30 Հոկտ. 1919 թ., առաւօտեան ժամը 12ին ներկայ էին բոլոր անդամները: Նախագահում էր, ըստ ընդունուած հերթի, Պ. Ս. Վ. Ա. Վարդան առաջանձն առաւ Պ. Յ. Քոչարեանը:

Նախագահ - Հարցնում է, թէ ի՞նչ եղանակով սկսել մեր զբաղումները. արդեօք դիմել կէտ առ կէտ քննութեան մեջ արած առաջարկութիւնների, թէ նախ ծանօթանալ ամբողջութեան եւ ապա անցնել առանձին կէտերի քննութեանը:

Որոշում է նախ մտքերի փոխանակութիւն ունենալ առաջարկ-ների ընդհանուր սկզբունքների մասին:

Նախ. Ս. Վ. Վարդան - Պատւիրակութեան առաջարկութիւնները պարունակում են երեք գլուխութիւններ. նախ՝ կառավարութեան կազմակերպութեան մասին, երկրորդ՝ պատւիրակութեան մասին եւ երրորդ՝ խորհրդարանի կազմութեան մասին:

Մեզ առաջնորդող գլուխութիւնները ելակետը պէտք է լինի առաջիկայ խորհրդակցութեան ժամանակ Մայիս 28-ի ակտը, որով մեր կառավարութիւնը յայտարարել է Միացեալ եւ Անկախ Հայաստանը: Այդ ակտը ընդունած է նախ Փարիզի Ազգ. Պատւիրակութեան կողմից, որը դեռ դրանից շատ առաջ արել էր նոյն յայտարարութիւնը ամբողջական Հայաստանի մասին: Պէտք է ընդունենք Հայաստանի Հանրապետութեան անկախ գոյութիւնը, որը ունի իր կառավարութիւնը եւ իր խորհրդարանը, եւ այդ ելակետը իբրեւ հիմք ընդունելով՝ անենք մեր հետագայ առաջարկները:

Խօսելով նախ խորհրդարանի մասին՝ պէտք է ընդունել, որ ներկայ խորհրդարանը ժողովրդական ընտրութեան արդիւնք է: Ճիշդէ, որ հայութեան որոշ հատուածներ, ինչպէս եւ որոշ մասեր Հայաստանի հողի որոշ պատճառներով չեն մասնակցել այդ խորհրդարանի ընտրութիւններին, այդ մասին կարող է խօսք լինել արդարա-

ցի կերպով, եւ անշուշտ, պէտք է լայն հնարաւորութիւններ տրուին այդ բոլոր մասերին էլ կատարել ընտրութիւններ եւ իրենց մասնակ-ցութիւնը բերել Հայաստանի խորհրդարանին: Այսպիսով, մենք ընդունում ենք, որ պէտք է թոյլ տալ լրացուցիչ ընտրութիւններ թէ՛ այժմեան Հայաստանի այն վայրերուն, ուր նրանք տեղի չեն ունեցել, եւ թէ Թիւրքահայաստանի սահմաններում, որ հնարաւոր է նոյն պէս եւ արտասահմանան կարեւորագոյն հայկական գաղութիւններում: պէս եւ արտասահմանան կարեւորագոյն հայկական գաղութիւններում: եւ այդ ճանապարհով կարելի է ներկայ խորհրդարանը լրացնել եւ ոչ թէ լուծել, ինչպէս առաջարկեած է պատւիրակութեան կողմից:

Կառավարութեան վերաբերմամբ եւս մենք ընդունում ենք, որ միութիւնը կատարելապէս յաջողցնելու համար պէտք է կառավարութեան կազմի մէջ մտցնել նաեւ արեւմտահայ հատածի ներկայացուցիչները, նոյնիսկ աւելի մեծ թւով, քան արեւելահայ ներկայացուցիչները:

Գալով պատւիրակութեան կազմին՝ նոյնպէս համամիտ ենք, որ Փարիզում գոյութիւն ունեցող երկու պատւիրակութիւնները միանան եւ կազմեն մէկ պատւիրակութիւն, որը պէտք է գործի ամբողջական Հայաստանի անունից եւ կազմւած լինի թէ՛ արեւմտահայերից եւ թէ արեւելահայերից: Համամիտ ենք, որ այդ պատւիրակութեան հայապահը լինի Պօղոս փաշա Նուպարը: Ահա՝ մեր ընդհանուր տեսակտները առաջարկեած ինդրի վերաբերմամբ:

Վ. Թէ՛ Եկեան - Հարց է տալիս՝ արդեօք կառավարութիւնը այժմ եւ եթ պէտք է կազմւի, թէ՛ խորհրդարանի կազմութիւնը լրացնելուց յետոյ:

Ս. Վարդան - Այժմ եւ եթ կարելի է մտցնել որոշ փոփոխութիւններ եւ լրացնել կառավարութեան կազմը. ներկայ խորհրդարանը կը շարունակի իր նիստերը, մինչեւ որ կատարեն առաջարկեած փոփոխութիւնները նրա կազմի մէջ:

Ն. Տէր - Ստեփանեան - Հարցնում է՝ ինչպէս վարւել ներկայ խորհրդարանի շարունակելու դէպքում, եթէ նոր կազմւած կառավարութիւնը անվստահութեան քւէ ստանայ նոյն խորհրդարանից:

Վ. Թէ՛ Եկեան - Հարկ է համարում բացատրել, որ Պ. Վարդանի այն խօսքերը, թէ Մայիս 28-ի ակտը ընդունած է նաեւ Փարիզի Ազգ. Պատւիրակութեան կողմից, ուրեմն կարող է մեզ իբրեւ ելակետ ծառայել, ճիշդ են միայն այդ ակտի առաջին մասի վերաբերմամբ — այն է՝ Միացեալ եւ Անկախ Հայաստանի հոգակման մասին: Եւ ինքը՝ պատւիրակութիւնը այդ մասին արդէն յայտարարու-

թիւն արած էր նոյեմբ. 7-ին. իսկ գալով այդ նոյն ակտի մէջ եղած այն կէտին, թէ ներկայ կառավարութիւնը մնում է Միացեալ Հայաստանի կառավարութիւն, այդ կէտը չէ ընդունւած Փարիզի պատվիրակութեան կողմից, եւ հէնց այդ մասին է, որ Ազգ. պատվիրակութիւնը հեռազրել է Երեւան կառավարութեան եւ ընտրել է յատուկ պատգամաւորութիւն, որ եկել է բանակցելու կառավարութեան հետ: Այդ մասին Ազգ. պատվիրակութիւնը խօսել է նաեւ Հանրապետութեան պատվիրակութեան հետ Փարիզում եւ արծարծել է իր տեսակչուները:

Դրած հարցերից, իր կարծիքով, նախ պէտք է համաձայնութիւն կայացնել կառավարութեան մասին, ապա պատվիրակութեան եւ դրանից յետոյ արդէն խորհրդարանի վերակազմութեան մասին: Խորհրդարանը իր ներկայ կազմով կարող է ամէն բովէ անվտահութեան քէտ տալ կառավարութեան եւ այդպէս առաջ բերել դժւարութիւններ նրա գործունէութեան համար, այնպէս որ ներկայ խորհրդարանի նոյն իսկ առժամանակեայ դոյութիւնը դժւար է թոյլ տալ:

Ս. Վրացեան.՝ Բացատրում է, որ խորհրդարանի Փրակցիան իր հրահանդները ստանում է կուսակցութիւնից, եւ եթէ այժմ մեր միջեւ կայանայ համաձայնութիւն, ըստ այնմ էլ կը վարւի Փրակցիան: Իբրեւ ապացոյց առաջ է բերում նախորդ կօալիցիօն կառավարութեան պատմութիւնը, երբ խորհրդարանի մէջ Դաշնակցական Փըրակցիան ոչ մի դժւարութիւն չէր յարուցանում կառավարութեան դէմ:

Ս. Յարութիւնեան.՝ Ճիշդ է Պ. Վրացեանի բերած օրինակը՝ անցեալ կօալիսիօնի մասին, բայց այն ժամանակ մեր կուսակցութիւնը խորհրդարանում ունէր յենարան, այժմ նա այդ չունի: Ես ընդունում եմ, որ եթէ համաձայնութիւն կայանայ մեր մէջ, խորհրդարանը կը պաշտպանէ այդ եւ անվտահութեան քէտ չի տայ, բայց հէնց այդ համաձայնութեան յաջող իրադրժման տեսակէտից աւելի յարմար կը լինի, որ խորհրդարանի գործունէութիւնը մի առ ժամանակ ընդհատւի, ինչպէս այդ տեղի ունեցաւ անցեալ ապրիլ ամսին, կօալիսիօն կառավարութեան կազմութիւնից յետոյ: Միատարր խորհրդարանի գործութեան եւ գործունէութեան ժամանակամիջոցին կօալիսիօն կառավարութիւնը կը ներկայացնէ այն անպատեհութիւնը, որ կառավարութեան առաջարկները օրէնքները եւ, առհասարակ, գործունէութիւնը կ'ենթարկեի գնահատութեան խորհրդարանում տիրող որոշ կուսակցութեան տեսակէտից: Ուստի կառավարութեան այն անդամների առաջարկութիւնները, որոնք չեն պատկանում այդ կուսակցութեան, խորհրդարանում պաշտպանող, լուսաբանող չեն ու-

նենայ ուրիշ տեսակէտից, եւ այս պատճառով այդ նախարարները կը հանդիպեն դժւարութիւնների եւ հնարաւորութիւն չեն ունենայ արդիւնաւէտ գործունէութիւն ցոյց տալու: Միատարր խորհրդարանի լուծումը կամ նրա գործունէութեան դադարումը ժամանակաւոր կօալիսիօն կառավարութեան գործունէութեան ընթացքում, մինչեւ նոր խորհրդարանի ժողովւելը, անհրաժեշտութիւն է, եթէ ցանկանում ենք, որ կօալիսիօն կառավարութիւնը լինի կենսունակ եւ գործ կատարէ:

Վ. Թէ՛կէեան.՝ Աւելացնում է, որ նոյնիսկ եթէ որ եւ է կուսակցութիւն փոքրամասնութիւն էլ ներկայացնէ խորհրդարանի մէջ, դարձեալ կարող է որոշ գեր կատարել, ինչպէս այդ եղել է նախորդ խորհրդարանում, իսկ ներկայ պայմաններում, երբ որոշ հոսանքներ ոչ մի ներկայացուցիչ չունեն, ստեղծւած կօալիսիօն կառավարութիւնը դժւար պայմանների մէջ կը լինի, եթէ խորհրդարանի գործունէութիւնը շարունակւի:

Վ. Յարութիւնեան.՝ Համաձայն է, որ որոշ անյարմարութիւններ կարող են լինել ներկայ դրութեան մէջ, բայց այդ կարող է միայն կարծ ժամանակ տեւել, մինչեւ որ խորհրդարանի կազմը լրացւի մեր ընդունած եղանակով:

Վ. Թէ՛կէեան.՝ Մեր հիմնական առարկութիւնը եղած դրութեան դէմ այն է, որ Արեւմտահայութիւնը ներկայացւած չէ կառավարութեան (խորհրդարանի մէջ), եւ կուգենք այդ բանը իրագործւած տեսնել երկու կողմերով էլ: Եթէ այդ իրագործւի միայն կառավարութեան մէջ, կը լինի միակողմանի: Արտաքին աշխարհի աչքում մեր դատը յաջողութեամբ տանելու համար պահանջուում է, որ Թիւրքահայատանը եւ թիւրքահայութիւնը ամբողջ ուժով ներկայացւած լինին թէ՛ կառավարութեան եւ թէ խորհրդարանի մէջ եւ այդ կարելի կը լինի յաջողացնել, եթէ խորհրդարանը արձակւի մինչեւ նոր հիմունքներով նոր խորհրդարանի հրաւիրւիլը, թերեւս հնարաւոր լինի, որ խորհրդարանը ժամանակաւոր կերպով արձակուրդ ստանայ, մինչեւ որ բարեկոփակ լրացուցիչ ընտրութիւններով, այդ մասին կը խօսենք յառաջիկայում:

Ս. Վրացեան.՝ Արտաքին աշխարհի համար կարեւորը այն է, որ երկու հատւածները միանան մէկ կառավարութեան եւ մէկ խորհրդարանի մէջ: Գալով այժմեան խորհրդարանի վերաբերմամբ եղած անպատեհութեան՝ այդ հէշտ է վերացնել մի կողմից լրացուցիչ ընտրութիւններով, միւս կողմից էլ միջոցներ ձեռք առնելով, որ կառավարութեան եւ խորհրդարանի մէջ անվտահութեան հարց չծագէ.

այդ կարելի է անել դիւրաւ, քանի որ խորհրդարանի ֆրակցիան ենթարկւած է կուսակցութեան հրահանգներին:

Վ. Թէքէեան.— Եթէ ինդիբը միայն կուսակցութիւններին վերաբերէր, դեռ կարելի կը լինէր դրան համաձայնել, բայց հարցը վերաբերում է երկու հատւածներին. պէտք է դրանց միութիւնը յաջողացնել եւ կառավարութեան, եւ խորհրդարանի մէջ:

Ս. Վրացեան.— Ներկայ խորհրդարանում կան արդէն որոշ թւովարեւմտահայերի ներկայացուցիչներ, մնում է լրացնել պակասը, որպէսզի արեւմտահայերի եւ արեւելահայերի թւերը հաւասարւեն: Մենք կարծում ենք, որ Հայաստանի անկախութեան ճանաչումից յետոյ, ապագայ խորհրդարանը կընտրւի երկու հատւածներից էլ անխորի, առանց սահմանափակելու նրանց թիւը:

Վ. Թէքէեան.— Մենք եւս ընդունում ենք, որ ապագայում, Հայաստանի ճանաչումից յետոյ կազմւեն ընկանուր կառավարութիւն եւ խորհրդարան, անկախ որ եւ է հատւածական սկզբունքներից, բայց մինչեւ մեր հարցի լուծումը պէտք է պահենք այդ յարաբերութիւնը. մենք դեռ կախում ունենք Կոնֆերանսից եւ պէտք է այժմ պարզ ցոյցտանք, որ թիւրքահայութիւնը հաւասարապէս մասնակից է Հայաստանի կառավարութեան եւ խորհրդարանին:

Ս. Յարութիւնեան.— Մեր բոլոր առաջարկների նպատակն է իրագործել Մայիս 28-ի ատկը եւ դրա համար պէտք է միացնենք երկու հատւածները: Այդ տեսակէտից սկզբում այդ պէտք է անել արհետական ձեւով, այսինքն՝ հաւասար մասնակցութեամբ երկու պէտական բարձր մարմինների մէջ, այն է՝ կառավարութեան եւ խորհրդարանի: Եւ եթէ այդ ընդունենք, պէտք է գանք այն եղակացութեան, որ միաժամանակ երկու մարմիններն էլ փոխւեն: Խորհրդարանում այդ փոփոխութիւնը յաջողացնելու համար պէտք է նրան դադար տալ եւ կառավարութիւնը ժամանակաւորապէս իր վրա առնէ խորհրդարանի գործառնութիւնները:

Ա. Յարութիւնեան.— Արեւմտահայութեան մի մասը, այն է՝ այժմեան Հայաստանում ապաստանած թիւրքահայերը, ներկայացւած են մեր խորհրդարանում: Ետոյ, հարց է ծագում, թէ նւազագոյնը ինչքա՞ն ժամանակ է հարկաւոր, մինչեւ որ ամէն կողմ կայանան մեր ծրգրած լրացուցիչ ընտրութիւնները եւ պատղամաւորները հասնեն երեւան:

Մտքերի փոխանակութիւնից պարզում է, որ դրա համար առնւազն երեք ամիս կը պահանջւի: Պ. Մ. Յարութիւնեանը գտնում է չափազանց անյարմար խորհրդարանի գործունէութիւնը դադար-

յնել երեք ամսով եւ ամէն ինչ թողնել կառավարութեան, այնպիսի մի ժամանակ, երբ կարող են լինել շատ կարեւոր խնդիրներ:

Ս. Յարութիւնեան.— Քանի որ մենք ընդունում ենք, որ խորհրդարանը "չ թէ լուծւում է, այլ գաղաքացնում է նիստերը, յատուկ լինդիրների համար կարելի կը լինի արտակարգ նիստ հրաւիրել. այդ հարցի շուրջ կարելի է հէնց այժմէն համաձայնութեան գալ:

Վ. Թէքէեան.— Գտնելով հանդերձ, որ նոր կազմւած կառավարութիւնը կը վայելէ մեծ հեղինակութիւն եւ կարող է գործել մինչեւ նոր խորհրդարանի կազմութիւնը, նոյնպէս համաձայն է, որ կարելի լինի յատուկ խնդիրների համար արտակարգ նիստ հրաւիրել:

Դ. Տէր — Ստեփանեան.— Արտայայտում է դրա դէմ. քանի որ սերկայ խորհրդարանի կազմը թերի է, նրա նիստի հրաւիրելը կառու է գժւարութիւններ ստեղծել կառավարութեան համար:

Մ. Յարութիւնեան.— Հարց է գնում, թէ՝ ինչպէս վարւել, եթէ մի որ եւ է անսկնկալ պատճառով ծրագրւած ընտրութիւնները չը յաջողւեն. արդեօք չի կարելի ուրիշ միջոցով օգնութեան գալ այդ գէպում:

Պ.Պ. Թէքէեան եւ Տ. Ս. Ստեփանեան արտայայտում են այն մըտքով, որ այդ գէպում կարելի է թողնել Փարիզի Ազգ. Պատուիրակութեան, որ նա իր կողմից նշանակէ խորհրդարանի պատգամաւորներին:

Ապա խօսքը դառնում է պատգամաւորների թւի մասին:

Վ. Թէքէեան.— Եթէ ընդունենք այժմ ժեւած պատգամաւորների թիւը 80 հոգի, որոնցից 13 հոգի արեւմտահայեր են, մնում են 67 ուսահայեր, ուրեմն, կը մնայ թիւրքահայերի թիւն էլ հասցնել մինչեւ 67, բայց թերեւս կարելի լինի պակասացնել ընդհանուր թիւը:

Ս. Յարութիւնեան.— Պաշտպանում է այն միտքը, որ եղած թիւը կարելի է պակասացնել եւ ցոյց է տալիս դրա եղանակը:

Ս. Վրացեան.— Փորձը ցոյց է տալիս, որ 80 հոգին էլ քիչ է, որովհետեւ դրանցից ոմանք բացակայում են, մի մասը մտնում է կառավարութեան մէջ, շատերը պէտք է աշխատեն յանձնաժողովներում: Այս բոլորը պէտք է աչքի առաջ ունենալ:

Մ. Յարութիւնեան.— Մենք մինչեւ այժմ պատգամաւորներ ենք ընտրել այն լրջաններից, որոնք մտել են Հայաստանի սահմանների մէջ. այդ լրջանները օգտւելով որոշ իրաւունքներից՝ բաժանել են եւ պարտականութիւններ պետութեան հանդէպ, իսկ ինչպէս վարւել այժմ այն տեղերի հետ, որոնք ներկայացուցիչներ պէտք է ուղար-

կէն խորհրդարան, բայց իրենք չեն մտնում Հայաստանի սահմանների մէջ եւ, հետեւաբար, պարտականութիւններ չեն կատարում:

Մաքերի փոխանակութիւնից պարզում է, որ այդ բոլոր գաղութները ընդհանուր կերպով այժմ էլ կատարում են Հայաստանի քաղաքացիութեան որոշ պարտականութիւններ ազգային տուրքի եւ զինուրագրութեան միջոցով եւ դրանով կապած են Հայաստանի հետ:

Ա. Վարցեան. — Այժմ անցնում ենք պատրիարկութեան կազմին: Մենք ընդունում ենք այն հիմնական սկզբունքը, որ երկու պատրիարկութիւնները պէտք է միացնել եւ դարձնել մի ամբողջական Հայաստանի պատրիարկութիւն: Երկրորդ՝ մենք գտնում ենք, որ թէ՛ արեւմտահայերը եւ թէ արեւելահայերը պէտք է ներկայցւած լինեն այդ պատրիարկութեան մէջ: Նոյն իսկ ոչ մի անյարմարութիւն չենք գտնում, որ արեւմտահայերը աւելի մեծ թւով ներկայացւած լին: Մի կէտ միայն մենք գտնում ենք անյարմար եղած առաջարկութեան մէջ, այն է՝ որ պատրիարկութեան նախագահը լինի միաժամանակ Հայաստանի վարչապետը: Մենք գտնում ենք, որ վարչապետը պէտք է անպայման մնայ երկրում եւ անձամբ զեկավարէ կառավարութեան գործերը, այլապէս առաջ կը գայ իշխանութեան երկութիւն:

Ա. Թէքէնեան. — Բերում է օրինակ, երբ վարչապետը եւ պատրիարկութեան նախագահը ամփոփւած են միեւնոյն անձի մէջ. դա Յունատանի վարչապետ Վենիգելոսն է, որ ահա 8 ամիս է ինչ Փարիզում է իրեւ պատրիարկութեան նախագահ եւ այդ մեծապէս նըպաստում է նրա նպատակի յաջողութեան: Մասնաւորապէս Փարիզի Ազգ պատրիարկութեան նախագահը, որ տարիներից ի վեր զբաղւած է Հայաստանի քաղաքական գաղուվ, կարող է աւելի մեծ վստահութիւն վայելել եւ աւելի յաջողութեամբ վարել մեր գատը, եթէ վարչապետի գիրքն ունենայ: Իրականի մէջ նա այդ գիրքից օգտւելու չէ, քանի որ մենք կ'առաջարկենք մի գեր — վարչապետ ընտրել այստեղ, որը կը վարէ այստեղի գործերը:

Ա. Յարութիւնեան. — Ինչպէս երեւում է բերւած առաջարկներից, կառավարութիւնը որոշ խնդիրների մէջ պէտք է հաշւի առնէ վարչապետի կարծիքը, եւ դա իրապէս չափազանց անյարմար է եւ երեմն նոյն իսկ անհնարին:

Ա. Թէքէնեան. — Խնդիրը վերաբերում է միայն այն հրահանգներին, որոնք տրում են պատրիարկութեան եւ այդ խնդրում, ի հարկէ, պատրիարկութեան նախագահը ձեռնհաս է եւ նրա կարծիքը հարցնելը պահանջում է հէնց նոյն գործի շահը:

Ն. Տէր Սամփանեան. — Մենք այստեղ ի նկատի ունենք այն դէպ-

քերը, երբ հարցը վերաբերում է այս կամ այն դիմումը անելուն Դաշնակից պետութիւններին, եւ այդ դէպում, ի հարկէ, հարցնելու է նախագահի կարծիքը:

Ա. Վարցեան. — Անպատեհութիւնը նրա մէջ է, որ նախագահը բոլորովին կտրւած կը լինի երկրից՝ աչքի առաջ ունենալով այժմեան յարաբերութիւնները, եւ այս պատճառով բոլորովին անհնարին է. որ պատրիարկութեան նախագահը լինի եւ վարչապետ։ Մնաց որ այդ հանդամանքը առաւելութիւն էլ չի կարող տալ նախագահի գիրքին օտարների աչքում։ Ոչ մի անհրաժեշտութիւն չը կայ, որ պատրիարկութեան նախագահն ու վարչապետը լինի միեւնոյն անձը։ Վարչապետը անպայման պէտք է գտնւի երկրում եւ վարչէ երկրի քաղաքականութիւնը։

Ա. Յարութիւնեան. — Ի հարկէ, պէտք է համաձայնել, որ ներկայ դէպում այդ ոչ թէ իրական նշանակութիւն կունենայ, այլ աւելի արտաքին, լոկ իրեւ պատույ գիրք։

Վ. Թէքէնեան. — Գտնում է, որ հարցը պէտք է դրւի այնպէս, որ թիւրքահայաստանին միանում է Ռուսահայաստանը եւ դրա համար կառավարութեան նախագահը պէտք է լինի թիւրքահայ։

Ա. Վարցեան. — Ոչինչ գէմ չունենք, որ վարչապետը լինի թիւրքահայ, բայց քանի որ կառավարութիւնը կաղմւում է վարչապետի ձեռքով, այդ ինչպէս կարելի է իրականացնել բերւած առաջարկութեան սպայմաններում, եթէ վարչապետը պէտք է մնայ Փարիզում։

Ն. Տէր Սամփանեան. — Զեւսականութեան կողմից կարելի է այնպէս անել, որ վարչապետը լիազօրութիւն տայ «գեր — վարչապետին», որին նմանապէս կընտրէ խորհրդարանը։ Մենք պնդում ենք, որ պատրիարկութեան նախագահը միեւնոյն ժամանակ լինի եւ վարչապետ — այդ միայն մի խորհրդանշան է, որ արեւելահայութիւնը միանում է արեւմտահայութեան։

Ա. Վարցեան. — Նորից պաշտպանում է իր տեսակէտը եւ բերում է նոր օրինակներ, երբ կարող են անպատեհութիւններ առաջ գալ նըրանից, որ վարչապետը գտնում է Փարիզում եւ ոչ երկրում։ Գործի շահի տեսակէտից էլ պահանջն արգարացի չէ, քանի որ պատրիարկութեան նախագահը իրեւ այդպիսին արդէն իսկ կարող է անել ինչ որ անհրաժեշտ համարէ։

Վ. Թէքէնեան. — Վարչապետի եւ պատրիարկութեան նախագահի մի անձի մէջ ամփոփւելը պահանջում է գործի շահը։ Օտարների աչքում տպաւրութիւն թողնելու համար էլ անհրաժեշտ է առնել այս քայլը, որովհետեւ օտարներից շատերը յաճախ պնդում են, թէ թիւրքահայերը եւ ռուսահայերը միմեանցից տարբերում են եւ հա-

կառակ են . մեր պատիրակութեան նախագահին այդ տիտղոսը տա-
լով՝ ամենքին էլ կապացուցանենք, որ մենք իրոք միացած ենք :

Ն . Տէր – Ստեփանեան .– Մենք մեր մէջ նոյն իսկ կարող ենք ներ-
քին համաձայնութիւն կայացնել, որ պատիրակութեան նախագահը
օգտի միայն վարչապետի տիտղոսից եւ Հանրապետութեան ներքին
դորժերի մէջ չխառնւի . այդ բանը մենք կարող ենք երաշխաւորել :

Մ . Յարաւթիւնեան .– Գտնում է , որ այդպիսի լոկ անւանական
դիրքով մի վարչապետ ընդունելը որոշ չափով նոյն իսկ կարող է
վարկարեկիչ նկատել : Մենք չենք կարող երաշխաւորել , որ ուրիշ-
ները խորհրդարանի մէջ չխօսեն այդ մասին տարբեր եղանակով եւ
մենք չկարողանանք դրա առաջն առնել :

Վ . Թէքիւնեան .– Դաշնակցութեան համար պատւառը մի ելք կը
լինէր ընդունել Պօղոս Նուպարին այդ ձեռով , իբրեւ մի անձ , որ տա-
րիների ընթացքում վարել է հայկական դատը Եւրոպայում , եւ Դաշ-
նակցութիւնը ինքը , բարենորդումների շրջանում , ոյժ է տւել նրա
հեղինակութեան :

Ն . Տէր – Ստեփանեան .– Պօղոս Նուպարը ներկայ դէպքում հան-
դէս է գալիս իբրեւ արեւմտահայերի կողմից ընտրւած վարչապետ ,
եւ այդ տեսակէտից էր , որ Փարիզի Ազգային Համագումարը , Դաշ-
նակցականներն էլ մէջը հաշւելով , նրան միաձայնութեամբ ընտրեց
նախագահ պատիրակութեան :

Ա . Վարցեան .– Նորից զարգացնում է իր միտքը , թէ ինչո՞ւ ան-
յարժար է լոկ անւանական տիտղոս տալ Պօղոս Նուպարին : Առար-
կութիւնը ներկայ դէպքում ոչ թէ Պօղոս Նուպարի անձի դէմ է , այլ
սկզբունքի : Մենք ի նկատի ունենք նաեւ այն հանգամանքը , որ Պօ-
ղոս Նուպարը անիրազեկ է մեր երկրի պայմաններին , դանուում է
Փարիզում եւ հնարաւորութիւն չունի լինելու Հայաստանում անմի-
ջապէս դեկավարելու համար կառավարութիւնը : Եթէ խնդիրը պատ-
ույ տիտղոսին է վերաբերում , ինչո՞ւ չմտածել մի ուրիշ ձեւի մա-
սին , օրինակ՝ տալ նրան խորհրդարանի նախագահի տիտղոսը :

Վ . Թէքիւնեան եւ Ն . Տէր – Ստեփանեան .– Յայնում են , որ խոր-
հրդարանի նախագահի տիտղոսը եւրոպական տեսակէտից առանձին
մի փայլ չի ներկայացնում , ուստի յարմար չեն դտնում այդ առա-
ջարկը :

Ապա խորհրդակցութիւնը ընդհատւում է : Յաջորդ նիստը նշա-
նաեւում է երեկոյեան ժամը 8-ին խորհրդարանի նախագահի առանձ-
նասենեակում :

(Շարունակելի)

Ստորագրութիւններ

—————

ՀԻՆ ԹՈՒՂԹԵՐ

I

Հ . Յ . Դ . Կենար . Կենարի քղթերում կայ մի գրութիւն , ուր ան-
ձանօր հեղինակը 1920 թ . յունարին , զրի է առել մի շարք տեղե-
կուրիւններ ու կարծիքներ Արտէն Թուղմախեանի մասին : Երեւում է ,
որ հեղինակը մօտից նանաչել է Թուղմախեանին , այդ պատճառվ նրա
գրածները գուրկ չեն հետաքրքրութիւնից : Այստեղ տալիս ենք այդ
գրութեան հական մասերը :

« Արսէն Թուղմախեանը , ասւած է այնտեղ , հայաստանցի էր ,
վանեցի . քաջ ծանօթ էր իր երկրի կարգ ու կանոնների , շատ լաւ գի-
տէր Տաճկահայստանի աշխարհագրութիւնը եւ մեր պատմութիւ-
նը : Նա տաճկահայ գեղջուկին այնպէս լաւ էր նկարագրում , որ կար-
ծում էիր թէ իսկական պատկերն ես տեսնում : Յաղթանդամ էր կազ-
մւածքով , ազգու՝ ձայնով , անկեղծ՝ խօսքով , դէմքի վրա միշտ
փայլում էր վառվուն ժպիտը : Այնքան պարզ ու հասարակ էր բնու-
թիւնով , որ չսիրել նրան անկարելի էր : Վերին աստիճանի ներողա-
միտ էր ու համբերող : Երեք – չորս ամսով մի սենեակում ապրել
ենք , տասնեակ տարի ամենամօտիկ յարաբերութիւն ունենք հետը
եւ ոչ մի անդամ նրան բարկացած չենք տեսել : Բայց որքան հեղ ու
համբերող էր սովորական , առօրեայ բաներում , նոյնքան անընկճելի
էր գաղափարի մէջ :

Մօտաւորապէս 30 – 32 տարի սրանից առաջ նա ուսուցչութեամբ
էր պարապում լազողեխի հայոց դպրոցում : Այն ժամանակները
հայկական աշխարհում ամենապաշտելին Խրիմեան Հայրիկն էր :
Թուղմախեանը թողնելով ուսուցչութիւնը՝ գնաց իր հայրենիքը :
Յայոնեց Խրիմեանին իր պատրաստակամութիւնը : Խրիմեանը խոր-
հուրդ էր տւել տաճկահայերի լացն ու կոծը հասցնելու ուսուահայ
եղբայրների ականջին : Հետեւելով Հայրիկի հրահանդներին՝ Արսէ-
նը , քանի որ վարդապետ չէր ձեռնադրւել , ուսումնասիրում էր ան-
ձամբ տեղն ու տեղը , տաճկահայերի դարսն ու ցաւը , եւ անցնելով
ուսուահայոց սահմանը , շատ անդամ ծպտեալ կերպով (հսկողութեան

տակ էր), շրջում էր քաղաքից քաղաք, գիւղից գիւղ, տարածում էր ամէն տեղ տաճկական լծի տակ հեծող հայ ժողովրդի տառապանք-ների նորագոյն լուրերը: Վառում - կրակում էր լսողների սիրութ իր ազգասիրական կրակով: Եւ գարձեալ վերադառնում նոյն սիրած ժո-ղովրդի հայրենիքը՝ աւելի նոր տեղեռւթիւններ բերելու:

Նա եւրոպայից չէր գալիս՝ պատաստելու մեղ վրա Եւրոպայի գաղափարները: Ռուսաստանից չէր գալիս՝ տարածելու ռուսական սոցիալիզմը: Նա գալիս էր Հայաստանից, հայ գեղջուկի մօտից՝ կացնելու մեր սրտերին, յայտնելու մեր եղբայրների տառապանքները: Նա կենդանի հայ թերթ էր, օրագիր, որ իր աներ-կիւղ եւ համոզւած քարոզներով ցոյց էր տալիս մեր յեղափոխութեան իսկական եւ ամենակարծ ճանապարհը՝ գնալ, մտնել ամէն հայի մօտ աներկիւղ, բախել նրանց քարացած սրտի գոները սեփական ըլ-ուոնցքներով. պատկերացնել ամէն մի ազնիւ հայի անեղիքը կենդանի լեզով, վառել արձականդ տւող երիտասարդութեան մաքուր ձրդ-տումները եւ տանել մեր կերտիչներին թովիչ Աղատութեան սուրբ պատերազմի սիրուն դաշտը...

Նա ազգում էր շատերի վրա: Երիտասարդներից մի քանիսին նա իր հետ տարաւ Հայաստան. շատերը գրանցից կենդանի են: Մեռած-ներից ես յիշում եմ Հայկ Մելիք - Դաղայեանին, Վաղարշակ Վար-դանեանին: Բժկ. Բ. Ն-եանը *) Թոխմախեանի աղդեցութեամբ եւ առաջնորդութեամբ ճանապարհորդութիւն կատարեց Հայաստանի մի ծայրից միւսը: Բաֆֆուն՝ Խենքի ու Կայծերի միտքը տւեց թոխ-մախեանը: Գր. Արծունու նման զօրեղ բնաւորութիւնը շատ անգամ խոնարհում էր Արսէնի անկեղծ հայեացքների առաջին: Մինչեւ ան-դամ մեր կղերկանութեան հոտած վայրը՝ իջմիածնայ միաբանու-թիւնը, նա էլ ունէր համակրողներ թոխմախեանին:

Արսէնը մի անդուզական հայ գործիչ էր իր ժամանակին. ան-վախ գործող, համոզւած յեղափոխական, լայնահայեացք ազգասէր: Նա առաջինն էր մեր հայերից, որ ամէն բան թողած, աշխարհական քարոզչի գաւազանը ձեռքն առած՝ ամէն տեղ քարոզում էր Աղատու-թեան սուրբ խօսքը բաղմաչարչար հայ ազգի համար:

Առաջին անգամ թոխմախեանին տեսել եմ Երեւանում 1875 թը-ւին: Նա հաւաքել էր ծխախոտագործ Ղուրբանով Գրիգորի տանը մի քանի երիտասարդներ եւ բոլոր համոզմունքով քարոզում էր: Սար-սափելի գոյներով պատմում էր տաճկահայերի կրած տանջանքները,

*) Բժ. Բագրատ Նաւասարդեան: ԱՄԲ.

Քայքայւած տնտեսութիւնը, ամենաարդար իրաւունքների արգելու-մը, կոյս աղջկերանց ու երիտասարդ հարսների բունաբարումը: Պատ-մելով տաճկական անդթութիւնների բոլոր զգւելի տեսակները՝ նա բացազանչում էր. «Հաւատացէք ինձ, որ քաջ ծանօթ եմ իրերին, որ մենք կարող ենք փրկւել, եթէ մեր յոյսը դնենք մենակ մեղ վրա. Հարկաւոր են միայն համոզւած գործիչներ եւ մի ազատ ապաստա-րան: Գործիչներ ունենք, եղբա՛յր, շատ ունենք. ես եմ շրջում ա-մէն տեղ, ես էլ գիտեմ: Դուք ինձ տւեցէք միայն մի ապաստարան, ուր կարողանանք կենտրոնացնել մեր ցիր ու ցան ուժերը»:

Եւ նա առաջարկում էր գնել պարսիկներից Մակուայ խանու-թիւնն եւ դարձնել հայ յեղափոխականների օջաղ: «Հաւատացէք, եղ-բայցներ, — գոռում էր նա հուտորի նման, — մենք այն ժամանակ մեր օջաղի կրակով մոխիր կը դարձնենք վախկոտ տաճիկներին եւ ծխովը խեղղամահ կանենք թոյլ պարսիկներին: Գնեցէք Մակուայ խանութիւնը, — գործողներ ունենք, ես հաւաքեմ բոլորին այնտեղ»: Կրկնում էր շուտ - շուտ՝ «Մակուայ խանութիւնը, Մակուայ խա-նութիւնը»:

Այս նպատակայարմար միտքը, որ քարողում էր թոխմախեանը 26 - 27 տարի սրանից առաջ, մի՞թէ նոյն արժէքը չունի եւ այժմ, երբ մեր յեղափոխական շարժումը ահագին քայլեր է արել արդէն, իսկ մեր ամենալաւ յեղափոխականները ստիպւած են թափառելու շատ հուաւոր տեղերում:

Այս հարցը անցեալ դարու 70-ական եւ 80-ական թւականներում շատ էր զբաղեցնում մեր յեղափոխական ընկերութիւններին: Շատ էլ միջոցների է դիմեւել: Մակայն, մեր կրեսոսները մեռած են մեղ հա-մար:

Բայց հեռացայ թոխմախեանից:

Նա՝ սկսած 1880 թւականից գործում էր հայ յեղափոխական ան-դրանիկ ընկերութեան «կեդրոնական կոմիտէի» անդամների հետ միասին: Այդ կոմիտէն կազմակերպւել է 1879 թւականին, թիֆլի-սում, 3 հոգուց բաղկացած: *) Յետոյ, 1881 թւին, ընկերների թիւը հասաւ 9 հոգու: Նա 1880 թւականին հրատարակեց անդրանիկ հայ յեղափոխական տպագիր թերթիկը՝ «Թոռոցիկ թերթ» վերնագրով: Մի տարուց յետոյ նա միացաւ Մոսկվայի նորակազմ միւս յեղափո-խական ընկերութեան հետ՝ Հայրենասէրների Միութիւն անունը ըն-

*) Թուղթ է թէ սա այն կոմիտէն է, որի մասին յիշում է Քրիստոնիոր Միքա-յլեանը:

դունելով։ Գործունէութեան կենրոնն անցաւ Մոսկաւ եւ այնտեղ էլ հրատարակւում էր այժմեան Դրօջալի դիրքով մի երկրորդ յեղափոխական թերթը «Ազատութեան Աւետաբեր» անունով եւ թեք խաչաձեւ սուր ու հրացանի դրոշմով։ Մեր պատմութեան այս վերին աստիճանի հետաքրքրական էջերը արձանագրելու մեծ կարիք կայ։ ։ ։ ։ Թոխմախեանը մարմնացեալ գաղափար էր։ Եթէ մեր երիտասարդ բանաստեղծ Քրիստոնիոր Թաղէսուեանը, շատ տարիներից յետոյ, 1890-ի վերջերում, բանաստեղծական հիւսւածքով երգում էր միայն կտրիչի խօսքերը, թէ՝

Ես չեմ ցաւում իմ ջահել կեանքը,
Չեմ ցաւում նոյնպէս իմ ծնողներին,
Չեմ ցաւում նոյն իսկ իմ սիրականին,
Բայց ցաւում եմ միայն, որ չեմ կարող ել
Չեզ հետ միասին կուել, կոտորել,
Եւ ստրկութեան լուծն անվայել
Չեզ հետ միասին ջարդել – ջախջախել։

Եթէ, ասում եմ, բանաստեղծը այս քաղցր ցաւերը երգում էր 1890 թւականին, Թոխմախեանը դեռ տասը տարի առաջ անձամբ էր վայելում, իր սրտի մէջ, այդ ցաւերի բոլոր քաղցրութիւնը։

Նրա մինուճար որդին սովորում էր Թիֆլիսի Ներսիսեան դըրոցում։ Հայրն էլ ամիսներով Թիֆլիսում հալ ու մաշ էր լինում որդու տեսութեան կարօտից։ Եւ արտասուքը աչքերին աղաչում էր՝ «Ի սէր գաղափարի, մի՛ ասէք տղայիս, որ ես այստեղ եմ»։

«Ստրկութեան անվայել լծի ջախջախման» գաղափարն էր այն-քան վերացրել Թոխմախեանին, որ նա «չէր ցաւում նոյն իսկ իր» մինուճար սիրական որդուն։ Եւ նրա ծնողական սիրտը սաստիկ էր փափաքում որդու տեսութեանը։ Նա դարձեալ չէր ուղում որդուն տեսնել։ Նա համոզւած էր, որ որդու հայեացքից կարող է թուլանալ գաղափարի ոյժը։ Ծնողական սէրը հասնում էր իր գաղաթնակէտին։ Արսէնը հաւաքում էր իր բոլոր ուժերը։ Հուժկու ձայնով երգում էր իր սիրած երգը՝ «Զայնը հնչէց երգումի հայոց լեռներէն»։ Սիրտն աւելի էր բարախում։ Նա վոազ կանչւածի պէս յանկարծ ժամացոյցին էր նայում ու դուրս գալիս սենեակից։ Ո՞ւր էր գնում։ Գաղտնի կերպով հետեւում էինք նրան եւ ի՞նչ սրտաշարժ տեսարան դիտում։ Սիրող ծնողի բոլոր ուժով նա որոնում էր իր միակ որդու ստերն այն փողոցում, որով, կարծում էր թէ որդին վնացած կը լինի գպրոցից դէպի տուն։ Օրը ցերեկով, քարած փողոցում սալայտակ մայթերի վրա նա որոնում էր իր սիրելի որդու

ոտատեղերը։ Եւ կշտանում էր դրանով։ Տուն էր վերադառնում մարմնացեալ գաղափար դարձած։ Հրդեհում էր նա մեղ այդ ըոպէներին իր վեհութեամբ։ Մենք մոռանում էինք նրա ներկայութեամբ ամէն ինչ, բացի հայի ազատութիւնից։

Եւ այսպիսի մի գաղափարական զոհ է դառնում սեւահոգեի մարդկանց ստոր մատնութեան։ Նա նահատակւեց^{*)} բայց նրա պաշտած գաղափարները, ինչպէս տեսնում ենք, կենդանի են մինչեւ օրս էլ»։

II

ԵՓՐԵՄԻ ԴԻՒԱՆԻ ԹՂԹԵՐԻՑ

Եփրեմի դիւանի մի մասը փոխանցւած է Հ. Յ. Կինոր. Դիւանին։ Պարսկաստանի յեղափոխական շարժման վերաբերող բաւական կարեւոք Եփրեմ կամ նրա մէջ։ Այստեղ առաջ ենք բերում Ռոստոմի երկու նամակը՝ Եփրեմին եւ Յ. Միքայեանցին, զիստորապէս որպէս պատմական վաւերագիր, որ արժէքաւոր է Ռոստոմի կենսագրութեան համար։ Նամակը գրւած է Եփրեմի առաջին շըրջանի յաղըութիւններից եւ Թէհրանի ոստիկանապետ նշանակւելուց յետոյ։ Ռոստոմը, Պարսկաստանից հեռանալով, գտնում էր Պալաւում։

ՌՈՍՏՈՄԻ ՆԱՄԱԿԸ ԵՓՐԵՄԻՆ

Սիրելի Եփրեմ,

Բոլոր այստեղի ընկերների կողմից սրտանց չնորհաւորում ենք քաջութիւնները։ Միայն թէ անյարմար պաշտօն է քեզ վիճակւել։ Լաւ կը լինի, եթէ յեղափոխական խառը դրութիւնը անցնելու լինի եւ քեզ թէ շատ խաղաղ կեանք ստեղծւելու լինի, հրաժարական տաս ոստիկանապետի պաշտօնից։

Արդէն քեզ դիմած կը լինեն մանրամասը տեղեկագրի համար։ Եթէ չես ուղարկել, պատրաստիր կամ պատրաստել տուր չատ շուտով եւ անպատճառ ուղարկիր Պոլիս Ազատամարտի հասցէով ինձ յանձնելու համար։ Տեղեկագրերը կակաս շարժման առաջին օրերից։

Եթէ ժամանակ չունենաս դէպքերը մանրամասը նկարագրելու,

^{*)} Ինչպէս յայտնի է, Ա. Թոխմախեանը սպանեց Պարսկաստանի Դէրիկի Վանելում ինչ որ մուր կասկածներով։ Ենթադրում է, որ սպանիչը Յութիս էր, որ սպանելուց յետոյ այրել էր նրա դիակը։ ԽՄԲ.

յիշատակիր գոնէ դլխաւոր դէպքերը, ժամանակադրական շարքով:

Տեղեկագիրը պէտք է լինի ընդհանուր շարժման մասին եւ մասնաւորապէս Դաշնակցութեան դերի մասին ձեր շրջանում:

Սրտագին ողջոյններ բոլոր ընկերների կողմից: Մասնաւորապէս Մուրատի եւ Արամի:

Համբոյրներս այդտեղի ծանօթ եւ անծանօթ ընկերներին:

26 յուլիս, 1909
Քո Ռուսում

ԻՌԱՑՈՒՄԻ ՆԱՄԱԿԸ ՑՈՎՍ. ՄԻՐԶԱՅԵԱՆՑԻՆ

26 յուլիս, 1909.

Սիրելի Յովսէփ.

Նախ եւ առաջ թարգմանութեանդ մասին, որ մնացել էր Յովշաննէս Թումանեանցի մօտ: Հիմա նա ազատ է, եւ դու կարող ես դրել նրան, որ յանձնի քո ուզած մարդուն:

Քո եւ թժկի^{*)} ընդարձակ գրութիւններին բաւական ժամանակ պատրաստում էի պատասխանել, բայց, ինչպէս գիտես, դա արտակարգ դժւար բան էր ինձ համար. մանաւանդ այն ժամանակւայ պայմաններում: Հիմա ուրախութեամբ եմ դրիչս ձեռք առնում, — պարսկական շարժման վերջարանը աւելորդ է դարձնում որ եւ է արդարացում մեր կողմից:

Յուսով եմ, որ թէ դուն եւ թէ թժկի աւելի լաւատես դառած կը լինէք, եւ մոռացութեան տալով միջին շրջանը, հպարտութեամբ կը լիշէք եւ կը յիշեցնէք այն երանելի օրերը, երբ դուք էիք հայշոյում վրէժին նրա պահպանողականութեան, «խոհեմութեան» համար:

Բժիշկը ստացած կը լինի թաւրիզից ուղարկած մեր շնորհաւորութիւնները: Շատ կուզենայի մի այդպիսի չնորհաւորութիւն էլ քեզ ուղարկել. սպասում եմ:

Բժշկին ասս, որ ամէն օր նրան յիշում եմ. նոյն իսկ մի քանի անդամ օրը անհրաժեշտարար: Երբ կերակուր ուստելիս, մսի թելերը բոնում են ատամներիս խոռոչները, եւ լեզւիս ծայրը շարունակ պրատում է այդ խոռոչները, երբ թթւից կամ տաքից բռնում է ատամիս ցաւը, յիշում եմ, որ մի ժամանակ թժկի այնտեղ պլումը էր խորթում, ապահովացնելով ինձ երկար ժամանակով:

Մահմէդ Ալին էլ այդպիսի յիշողութիւններով հեռացած չլինի՝ թժկից...

Քո Ռուսում.

^{*)} Խօսքը ատամնաբայթ Գր. 8. Ստեփանեանի մասին է:

ԱՆՑԵԱԼՔ

ԴԵՐԱՍՍԱՆ ԱՐՇԱԿ ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Յովկ. Արելեանից յետոյ երկրորդ ծանր կորուստն է, որ կրում է հայ բեմը: Յուլիս 27-ին, Երեւանում վախճանել է վաստակաւոր դերասան Արշ. Յարութիւնեանը:

Ծնւել է 1869 թւին Թիֆլիզում: Կրթութիւնը ստացել է Ներսիսեանի գովրոցում: Մեծ գերասան Պետրոս Աղամեանի ներկայացումներից տպաւորւած, Ա. Յարութիւնեանը որոշում է ներկրել հայ բեմին եւ մտնում է Գ. Զմշկեանի ու Տէր - Դաւթեանի խմբերի մէջ: Շուտով ժողովրդական համբաւ է ձեռք բերում եւ գրաւում է պատկառելի տեղ գերասանական ընտանիքի մէջ: Աչքի է ընկնում որպէս Գ. Սունդուկեանի տիպերի լաւագոյն դերակատար՝ Երկար տարիներ կատարելով Պէպոյի, Զիմզիմովի («Պէպօ»), Զամբախովի («Խաթաբալա»), Փարսիդի («Քանդած օջախ») գերերը: Ա. Յարութիւնեանի յաջողւած դերերի շարքին են պատկանում նաեւ Եագոն («Օթէլլօ»), Սուլէյման խանը («Դաւաճանութիւն»), Սաղաթէլը («Պատւի համար»), Մետտերնիխը («Արծւիկ») եւ այլն:

Բացի Թիֆլիզի Դրամատիկ. Ընկերութեան ներկայացումներից, հանդուցեալը մեծ սիրով եւ ձրիարար մասնակցել է նաև Աւճալեան ժողովրդական թատրոնին, Արաքսեանի թատրոնին եւ Զուրաբլովեան ժողովրդ. Տան ներկայացումներին, ինչպէս եւ Բագւում (Բալախանի, Սեւ քաղաք, Բիբի - Հէյրաթ) կազմակերպւած հանրամատչելի ներկայացումներին: Շընէլ է մեր գերասանական խմբերի հետ Ռուսաստանի զանազան քաղաքները, ինչպէս եւ իրան ու Պօլիս՝ ամէն տեղ մեծ յաջողութիւն գտնելով:

Անդրկովկասի խորհրդայնացումից յետոյ, Ա. Յարութիւնեանը աշխատում էր սկզբում Թիֆլիզի հայ թատրոնում եւ ապա փոխադրում է Լենինական: 1927-ին հաստատում է Երեւանում, որտեղ մասնակցում է մերթ ընդ մերթ մի շարք ներկայացումների, բայց չուտով ընդմիշտ թողնում է բեմը, հիւանդութեան պատճառվ: 1934 թ. Երեւանում տօնուեց նրա բեմական գործունէութեան 45-ամեայ յոբելեանը:

Ի դէմս Արշակ Յարութիւնեանի հայ բեմը կորցնում է մեր տաղանդաւոր դերասաններից մէկին, որ երկար տարիներ ծառայել է հայ թատրոնի բարդաւաճման:

ՄԻՔԱՅԵԼ ՄԻՆԱՍԵԱՆ

Օգոստոս Յ-ին Բըրքլիի մէջ (Քալիֆ.) վախճանւել է ՊրոՓ. Ա. Մինասեան, ու ծանօթ էր թէ՛ որպէս կրթական մշակ եւ թէ որպէս գրչի մարդ: Նուել էր Խարբերդ, 1865 թ.: Իր ուսումը ստացել էր Պարտիզակի ամերիկեան բարձրագոյն քոլէջում, որտեղից շրջանաւարտ լինելուց յետոյ, նուրեւց ուսուցչւթեան նախ Աղանայի, ապա Տաբոսնի մէջ: Ուսուցչութեան առաջին իսկ շրջանից սկսեց աշխատակցել Պոլսոյ «Բիւրակն» թերթին:

1897-ին, հրաժարելով թրքական հպատակութիւնից, անցնում է Ամերիկա եւ մանում Եկյլի համալսարանը, մասնագիտութիւն ընտրելով քիմիարանութիւնը: Աւարտելուց յետոյ, 1900-ին անցնում է Հարվըրտ եւ մի տարի հետեւում է այնտեղի համալսարանի փիլիսոփայական դասընթացքներին: Ամերիկայի մէջ գրել սկսում է «Կոչնակ»-ում, որի խմբագրութիւնն է վարում կարճ ժամանակով: Զը կարողանալով, սակայն, հանդուրժել մի քանի պատւելիների ստեղծած մինուրատին՝ թողնումէ պաշտօնը եւ 1901-ի վերջերը ձեռնարկում «Լոյս» գիտական եւ գրական հանդէսի հրատարակութեան:

Թիւրքիոյ Սահմանադրութիւնից յետոյ վերադառնում է Երկիր եւ Միացեալ Ընկերութեան կողմից կարգւում է նախ դպրոցների ընդհ. քննիչ եւ ապա՝ տնօրէն Վանի վարժապետանոցին: 1915 թւի գոյամարտի ընթացքին իր հմտութիւնը ի սպաս է դնում Վանի Զինուրական մարմնին՝ պատրաստելով անծովս վառող: Վասպուրականի նահանջից յետոյ, անցնում է նորից Ամերիկա եւ, բնակութիւն հաստատելով Բոստոնում, վարում է մի քանի տարի «Աղդ» օրաթերթի խմբագրութիւնը, բայց այս անգամ էլ չի կարողանում ընդհանուր լեզու գտնել ուսմկամբարների հետ եւ թողնում է շուտով թերթի խըմբագրութիւնն ու տեղափոխում Ֆրէզնո (Քալիֆ.), որտեղ սկսում է հրատարակել Սիսուան պարբերաթերթը: Յետոյ հաստատում է Բըրքլի եւ ամբողջ 12 տարի պաշտօնավարում Քալիֆորնիայի Համալսարանի փոքճնական հաւաքուծական միուղի մէջ: Այս շրջանում վերստին սկսում է հրատարակել իր «Լոյս»-ը, այս անգամ նոր ուղղութեամբ եւ անդերէն լեզով:

Իր կեանքի վերջին տարիներին նույրած էր Հայաստանի նախա-

պատմական շրջանի ուսումնասիրութեան եւ այս ուղղութեամբ մի շարք յօդւածներ լոյս ընծայեց «Հայրէնիք» ամսաթերթի մէջ:

ՊՐՈՓ. ԱՆՏԻԱՆ ՄԷՅՑԵՔ

Սեպտ. 22-ին Փարիզում վախճանւել է յայտնի ՊրոՓ. Ա. Մէյէէ, որ իր հայագիտական աշխատանքներով պատվառոր տեղ ունի գրաւած հայ մշակոյթի զարգացմանը սատարող գործիչների շարքում:

Մէյէէն ծննել է 1866-ին Ֆրանսայի Ալլիէ նահանգի Մուլէն աւանում: Իր նախնական ուսումը ստացել է տեղական վարժարաններում, իսկ բարձրագոյնը՝ Փարիզում: Արեւելեան կենդանի լեզուների գպրոցում աշակերտել է Հայերէնի ուսուցիչ Կարրիերին և 1909-ին ստացել Հայերէնագէտի վկայական: 1890-ին գնացել է Վիէննա, որտեղ մասնաւոր դասեր է առել Ֆ. Մէլլերից եւ Հ. Յակոբոս Տաշեանից: Յետոյ անցել է Թիֆլիզ եւ էջմիածին, տեղւոյն վրա ուսումնասիրելու հայերէն լեզուն: Այս ուղեւորութիւնից վերադառնալով՝ կարգւել է համեմատական լեզւաբանութեան ուսուցիչ Փարիզի Բարձրագոր ուսմանց գպրոցում՝ աւանդելով, ի միջի այլոց, նաեւ հայերէն ձայնաբանութեան դասեր:

Իր ուսուցիչ Կարրիերի մահից յետոյ (1902), յաջորդում է նըրան Արեւելեան կենդանի լեզուների գպրոցի մէջ եւ ընտրում հայերէնի ուսուցիչ: Այս պաշտօնում նա մնում է Երկար տարիներ՝ հասցնելով մի շարք աշակերտներ, որոնցից է եւ պրոՓ. Հրաչեայ Աճառեանը: 1906-ին ուսուցիչ է դառնում Քոլէժ դը Ֆրանսի:

Դասախոսութիւններից զատ Ա. Մէյէէն թողել է բազմաթիւ ուսումնասիրութիւններ հնդկաներու պատահական բարբառների ծաղման, արեւելեան լեզուների բառակազմութեան ու ստուգաբանութեան եւ լեզւաբանական այլ հարցերի մասին: Նրա հայագիտական գործերից գլխաւորներն են.

1. Notes sur quelques faits de morphologie. Paris, 1809.
2. Notes sur la conjugation arménienne. Note sur le mot Տեսուրին. Paris, 1900.
3. Esquisse d'une grammaire comparée de l'Arménien classique. Paris, 1901.
4. Etymologie Arménienne. Paris, 1904.
5. Observations sur le graphic, - quelques anciens manuscrits de l'Evangile Arménienne. Paris, 1904.
6. Auguste Carrière (1838-1902). Paris, 1902.
7. Alt Armenischer Elementar - Buch, Լապցիկ, 1903.

Բազմաթիւ յօդւածներ է տպագրել նաեւ Journal Asiatique -ի, «Բանակը» -ի, «Հանդէս Ամսօրեայ» -ի եւ իր նախաձեռնութեամբ Փարիզ հայատարակող Revue des Etudes Arménienes -ի մէջ:

ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ

ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ՀԱԼԱԾԱՆՔ ԽՈՐՀՐԴԱՀԱՅ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՐՈՂՆԵՐԻ ԴԵՄ

Խորիրդ. Հայաստանի գրողների ու գրականութեան դէմ յարուցւած հալածանքն աննախընթաց է իր ծաւալով, խստութեամբ եւ ձեւով: Երբորդ ամիսն է, որ խորիրդային գրագէտների (վիպագիր, բանաստեղծ, գրական ժընադաս) մեծ մասը էշտած է երապարակից ու զրկած գրականութեամբ գրաղելու իրաւութից: Դադարել է միակ «հաստափոր» հանդէսի՝ «Խորչրդային Գրականութեան» երատարակութիւնը, իսկ գրական միւս երկու պարբերականները՝ «Գրական Թէրթն» ու «Խորչրդային Արևետը» միանգամայն կորցրել են իրենց իսկական բնոյրն ու դարձել են «Խորչրդային Հայաստան» եւ Կոմկուսի կողմից լոյս ընծայուղ բազական՝ երապարակախօսական միւս օրգանների մի երկրորդ երատարակութիւնը: Ինչ վերաբերում է Պետհրատին, նա ոչ միայն այս վերջին ամիսներում չէ հարասոցրել մեր գեղեցիկ գրականութիւնը նոր ստեղծագործութիւնների կութարակութեամբ, այլ կատարել է հակառակը՝ արդիւն է վաստակած:

այսօր, որովհետեւ, երբեք գրելու եւ ստեղծագործելու արգելքը չէ կրել այնպիսի բացարձակ ու զանգւածային բընյը, ինչպէս այսօր:

Նմանը չունեցող երեւոյք է նաև գրագէտների ձերբակալութիւնը իրենց ստեղծագործական «սխալների» համար: Թէ՛ Հայաստանում եւ թէ խորիրդային միւս երկրներում եղել են, այո՛, դէմքիր, երբ պատիմների են ենթարկել գրողներն ու արևոտագէտները, բայց ամենախիստ պատիմը «կազմակերպչական հետեւութիւններ ամելուց» (Միուրինից դուրս վնասելուց) այն կողմը չէ անցել: Եւ այն ինչ որ կատարում է Հայաստանում, իսկապէս որ նախընթաց չունի անցեալում եւ ոչ էլ դրա օրինակը կարող ենի գտնել ներկայումս խորիրդային որ եւ է մէկ ուրիշ երկրում: Հայաստանի գրողների մի խոշոր մասը «կայամքի տակ է առնած» եւ բանց դէմ գատական գործ է բացւած ոչ թէ կուսակցական-բաղաբական «քեռումների» համար, ինչպէս կարծում են ինտանի արտասահմանում, այլ զուտ գրական ստեղծագործական մարդի մէջ բոյլ տւած սխալների պատճառով:

Հայ գրողների դէմ յարուցւած հալածանքներն աննախընթաց են նաև մէկ ուրիշ կողմով: Խնդիրն այն է, որ հակառակ որոշակի նիզիրի՝ ներկայացնել գրական նակառում տեղի ունեցած անցուդարձերը, որպէս հայ գրողների երբեկան ներքին գրւտութեներից մէ-

կը, անտարակուսելի է, որ այս անգամ մենք վկայ ենք հանդիսանում ո՛չ թէ ներքին պայքարի, այլ արտաքին յարձակման: Գրական նակատի տագնապը կապ ունի Ա. Խանջեանի անձնապահութիւնից յետոյ Հայաստանում ծայր տւած այն ընթանանուր տագնապի հետ, որը, ինչպէս գիտենք, արհեստական կերպով ու շատ որոշ նպատակներով ստեղծեց Թիֆլիզը ու պարտադրեց Հայկոմիուսին: Հայաստանի Գրողների Միուրեան մէջ՝ ինչպէս եւ խորիրդ, միւս երկրների գրողների կազմակերպութիւնների ներսում՝ միշտ էլ գոյութիւն են ունեցել գրական խրմարակցութիւններ ու պայքարներ: Այդ հանրածանօթ փաստ է, որը ժխտել չի կարելի: Բայց փաստ է նաև այն, որ վերջին ամպրոպը հայ գրական երկնականարութ պայքեց այնպիսի մի ժամանակ, երբ այնտեղ համարեա թէ ամպ չէր մնացել: Հայ գրողների շարքերը հնանգ կայծակը ոչ թէ բնական, այլ արիստական ծագում ունի եւ, ինչպէս ասացինք, հայրենի արտադրութիւն չէ, այլ պատրաստած է Մոսկայի եւ Թիֆլիզի աշխատանոցներում:

Ինչպէս տեղի ունեցաւ այդ ամէնը:

Ա. Խանջեանի ինքնասպանութիւնից դեռ բաւական ժամանակ անց, երբ արդէն որոշ էր, որ Թիֆլիզը վճռել է օգտագործել այդ դէմքը Հայաստանի Կոմկուսին հերթական հարած հասցենու համար, գրողների դէմ կիրարկելիք հալածանքների մասին խօսք չը կար: Միթչեւ օգոստոսի կէսերը, «Խացինալիսու - հակայեղափոխականների» Խմբակի անդամների բուռմ յիշատակում էին բացառական սամձարձակ տարիեր, որոնք բացարակ պայքար էին մղում հայ ժողովրդի ձեւով ազգային բովանդակութեամբ սոցիալիստական կուլտուրայի կառուցման դէմ, հակադրելով դրան «ձեւով ազգային եւ բովանդակութեամբ ազգայնական» կուլտուրայի հակայեղափոխական ֆորմուլը:

Այսսեղից պարզում է, որ Բերիան ոչ միայն երահանգիր է հալածանքներ,

սկսել Հայաստանի գրողների դէմ, այլ նաև ձեւակերպել է այն մեղադրամները, որոնք հետազային պիտի ներկայացտէին նրանց: Եթէ հաշվի չառնենք կուսակցական գծով տրած գաղտնի հրահանգները, որոնք անշուշտ հրատարակութեան ենթակայ չեն, վերոյիշեալ յօդւածով էլ վերջանում է Բերդայի եւ Անդրերկոմի ելոյթը Հայաստանի գրողների ու գրականութեան դէմ: Հետազայ ամբողջ «կամսամիան» մղում է արդէն Հայկամկուսը եւ դրամով գրադաւմ է բացառապէս Հայաստանի մամուլը: Մի շատ վրան բաց խաղ, որ ոչ ոքի, անշուշտ, մոլորաւթեան մէջ ճգի չի կարող:

Օգաստոսի մէջ (օրը չէ յայտնած) տեղի է ունենում Հայաստանի Գրողների Միութեան ընդիք: Ժողովը, լսելու համար Ն. Դարակեանի գեկոյցը «տրոցկիստական - զինովիենական, հակայեականինական կազմակերպութեան վերաբերեալ դատավիճուի» (տրած Մուկայում օգ. 24-ին), տրոցկիստ - նացինալիստ հակայեականինական Ն. Ստեփանեանի խմբակի եւ Հայաստանի Խորհրդ: Գրողների Միութեան մէջ բուն դրած նացինալիստական - տրոցկիստական հակայեականինական խմբակի մասին»: Այս ժողովում արտայայտել են գրողներից Արագին, Գ. Արովը, Զար. Խայեանը, Ա. Վշտումենին, Գ. Գեմիրենեանը, Յ. Մելիքեանը, Մ. Արմենը, Գ. Սարօսին, Գ. Ցոլիսանը (սրանք են հայածները զերծ մնացողները) եւ ուրիշները: Այդ արտայայտութեաններից պարզ է, որ ամբաստանեալները երեք կարգի են բաժանուած՝ բան «յանցագործներ», որոնք կազմակերպւել են նացինալիստատրոցկիստները: Գրողների Միութեան միավորը կայսեր է ասել, որ չեկայում նատած գրագետները բոլորն ել «խոսուվանիլ են իրենց յանցամերը»:

Սա ցամկը, ի հարկէ, լրիւ չէ: Խորհրդահայ մամուլից հետազային պարզում է, որ գրելու իրաւունքից զրկւել են նաև ուրիշ շատ գրողները, որոնց քում Ռ. Արայեանը, Ա. Աղոյեանը, Մարտեանը, Ա. Մելիքեանը, Գ. Բեսը, Խ. Դաշտեանը եւ ուրիշները:

Սեպտ. 18 - 21-ին, Կենտկոմի պլենումում, Ամատունու արտասանած նաուից տեղեկանում ենիք, որ գրագետների շնորհագրկումն այս անգամ «կազմակերպչական հետեւութիւններով» միայն չէ սահմանափակւել, այլ դատական հետապնդումի բնոյր է ստացել: Խըրանց դէմ սկսել է դատական գործ, կատարւել է հետաքննութիւն եւ ձեւակերպւել են որոշ ամբաստանութիւնները: Աւելարդ է ասել, որ չեկայում նատած գրագետները բոլորն ել «խոսուվանիլ են իրենց յանցամերը»:

Ի՞նչ է այդ յանցամերը: Այս մասին միասնական պատասխան են տալիս քէ Ամատունի եւ քէ Բերդայի մարզած միւս հայ կոմունիստները: Գրագետների յանցաւոր գործութեալները արտայայտել է միայն իրենց գրական - նացինալիստական եւ գրական - գեղարվեստական դնելով «իրենց գրածքներով նացինալիստին թեյնը սրսկել աշխատաւորութեամ, նապատակ դնելով «իրենց գրածքներով նացինալիստին թեյնը սրսկել աշխատաւորութեամ մէջ: Բակումը «մացինալիստական սեմդնեց-


ներ» է բոյլ տւել իր «Ծիրանի փող» պատմւածքի մէջ, Ս. Յարութիւնեանը «գաղթակցական կոնտրարանդ» է անցկացրել Գ. Սունդուկեանի երկերի հրատարակութեան կցած իր յառաջարանում եւ Վ. Թոքովինըցը ատելուրիւն է բարոփել «կեսնքը Հին Հռովմէական ճանապարհի վրա» հասորում: Թէ՛ այդ եւ քէ հալածամբէի ենթարկւած միւս բոլոր գրգէտների յանցագործուրիւնը տեղի է ունեցել, ինչպէս զիտենք, տարիներ առաջ եւ Հայ Կենտկոմի ու Անդրերկոմի աշալուրջ հակուլութեան տակ ու հրանց քոյլութիւնը: Ինչո՞ւ, սակայն, այսօր են միայն դատիք տրում նրանք: Որպիսեւ, տառում է թերիան, - միայն այժմ է, որ յայտնագործել է, քէ այդ գրագէտները ունեցել են «անկեզալ կազմակերպութիւն», «գաղտնի խմբակ»: Դուրս է գալիս, որ գրական - սուելծագործական գործութեութիւն տանելու համար պէտք է եղել, որ մարդիկ «գաղտնի կազմակերպութիւն» առաջանեն: Ի՞նչ անհիներութիւն...

«... Մեր խմբակի գործութեութիւնը, ամրողապին վերցրած, - ասել է որպէս քէ Ա. Բակումըցը հարցավենութեան ժամանակ - ուղղաւ էր Համամիութեական կոմկուսի ազգային ժաղաքականութեան դէմ, եւ ի հակալշիու կուսակցութեան «ձեռով ազգային, բովանդակութեամբ սոցիալիստական կուլտուրա» լոգունին, մենիք պաշտպանում էինք «ազգային յատկանիշների խոտացման» քէզերը, բաղաքականապէս այդ նշանակում էր «ձեռով ազգային, բովանդակութեամբ նացինալիստական կուլտուրա»: Այդպիսով ուրեմն Ա. Բակումըցը բառացիօրէն կըրկնում է «իրենց խմբակի» մասին միեւնյան մեղադրամները, ինչ որ գտնում ենիք Բերդայի յանցամերութիւնը: Այսինքն բարական է, որպէսզի միանգամայն պրզի մեզ համար գրագետներին ներկայացրած գրական պատասխանութեամբ աշխատաւորութեամ մէջ, այս միեւնյան շրջանում Դր. Սիմոնեանը ձամից շամբեր էր տեղում ազակողմեան:

Զարենցի գլխին, սպառմալով դուրս ձգել նրան Գրադերի Միութիւնից, երէ նև լրջօրէն չուզդի իր նացիոնալիստական սխալները։ Այսօր Դր. Սիմոնեանը բանտարկւած է, որպէս «դաշնակցական», իսկ Զարենցը զերծ է հալածանքներից։ Այս կարգի ուրիշ շատ փաստեր կան, որոնք ցոյց են տալիս ամենայն աներկայութեամբ, որ «գրական ֆրանտի» այսօրւայ ծանր տագեապը

սուեդեն է արհեստականօրէն եւ կա - մայականօրէն, «յաւուր պատշաճի» նը - պատակներով ու կոմկուսի Հայաստանից դուրս գտնւող մարմինների հարկադրանքով եւ որ եւ է ձեւով չի բխում այն իրական վիճակից, որ գոյութիւն ունէր այդ նակատում Ա. Խանջեանի անձնասպանութեան նախօրեակին ու մինչեւ անգամ նրանից յետոյ։

Ա. Խ.



ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ

«ՆԱԽԱԳԱՀ ՎԻԼՍՈՆ ԻՐԱԿԱՐԱՐ
ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԶԵՒ»

Այս վերնագրով մի յօդած է գետեղի Բերլինի Արեւելեան Լեզուների Սեմինարի քուրքարանութան ուսուցչապետ Պրոֆ. Գ. Եշկէ (Iaeschke), նոյն հիմնարկութեան գիտական Տեղեկագիրների 1935 թ. հատորի մէջ։ Խնչէս իր մի շարք նման ուրիշ աշխատութիւններում, այնպէս եւ այս գրւածքի մէջ Եշկէ տալիս է նաև խնդրի պատմականը՝ հիմ ունենալով վաւերադրային գրականութիւնը գրերէ սպահչ կերպով։ Գժրախտարար, հետինակը չի տալիս բնագիրը Վիլսոնի իրաւարարութեան, ասելով թէ լոյս է տեսած արդէն Bulletin de l'Institut Juri-dique International-ի 1934 թ. XXXI հատորի մէջ (Էջ 329 – 336), ուր եւ պիտի դիմեն քննակըները։

Եշկէի յօդածին մասմաւոր շահեկանութիւն ընծայողը նրա յաւելածն է՝

Վիլսոնեան Հայաստանի Քարտէսը, որ, ինչպէս նկատում է հեղինակը, լոյս է տեսնում առաջին անգամ։ Քարտէսի բնագիրը նա ստացել է պատկան պաշտօնատներից, եւ հրատարկել իր գրքում մեծացրած դիրքով (աստիճանաշաբ՝ 1 : 1,000,000)։ Այդ խնկ գատնառով, դժբախտարար, շատ պարզ չի տպած քարտէսը։ Գոյնով սեւ է ու կրում է, ի հարկէ, վիլսոնեան սահմանագիծը Հայաստանի եւ Տաթկաստանի միջեւ։

Իր յօդածի վերջում, Եշկէ աւելացնում է հետեւեալ ծանօթագրութիւնը՝ «l'Arménie et la question Arménienne avant, pendant et depuis la guerre» (Paris-1922). Խայկական Յուշագրին կցւած քարտէսը եւ դրանից եղած արտասարկութեանը շատ անմիշդ են»։

«ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ԵՒ ՆԱԽԱԶԵՒԱՆԻ
ՀԻՒՍԻՍ – ԱՐԵՒԵԼԵԱՆ ՍՍՀՄԱՆՆԸ»

Այս է վերնագիրը գերման երիտասարդ քուրքարան պրոֆեսոր Գ. Եշկէի մի ուրիշ յօդածի, որ լոյս է տեսած Die Welt des Islams (Խալամի Աշխարհը) հանդէսի 1936 թ. (հատոր 17) 3-րդ եւ 4-րդ միացեալ թիւի մէջ։ Յօդածն ունի մի շարք ծանօթագրութիւններ, որոնց մէջ մի առ մի յիշատակւած են նիւթին վերաբերող գրականութիւնը եւ վաւերադրեքը։

Վերջում առաջ է քերւած, առնելով Մոսկուայի (16 մարտ. 1921 թ.) եւ Կարսի (13 հոկտ. 1921 թ.) դաշնագիրներից, սահմանագծին վերաբերող Փըրանիսներէն բնագիրը։ Մատնանշած են եւ նրանց մէջ նկատուած ինչ – ինչ տարրերութիւններ։ Յօդածը պիտի շահէր, անշուշտ, երէ համապատասխան քարտէս էլ կցւած լինէր նրան։

«ԽԱՂԴԻՇԽԵՆ ԼԵԶԻՒ ԲԱՆԱԼԻՆ»

Այս վերնագրով եւ Արդար Պայտագաղթի (ուտէցի) հեղինակութեամբ մի նոր զիրք է լոյս տեսել Երեւանում։ Դործին կցւած է յայտնի լեզւարան Հ. Անառեանի յառաջարանը, որ կատարելապէս համամիտ է աշխատութեան հիմնական մտքին՝ քէ խալդերէն լեզւի բանակին պէտք է համարել արդի ուժերէն լեզուն։ Ուտիները, յայտնի է, ընդամենը մի քանի հազար հոգուց բաղկացած փոքրիկ ժողովուրդ են ներկայիս եւ ապօռում են նիժ, Վարդաշէն ու հարեւան գիւղերում (Նուխտայ գաւառ, Աղրքշան)։ Կրօնով հայդաւան են եւ համարում են հիմ աղամաների սե-

րուն։ Արգար Պայտագաղթ առաջ է բերում իր զրբի մէջ մի շարք բառեր, որոնք, իր ասելով, նոյնանում են խալդերէնի նոյնանումը բառերի հետ նաև իմաստի կողմից։ Քերականական ձեւերի մէջ եւս նմանուրիւն ու նոյնուրիւն է գտնում հեղինակը։ Այս հիմնական մտքին Անառեան անվերապահորէն տալիս է իր համաձայնուրիւնը։ Ընդհակառակը, Երեւանի մասնագիտները, ըստ Երեւոյրին, խստ բերահաւատ են։ Յամենայն դէպս, հետաքրքրական է արծարծւած տեսուրիւնը։ Մասնագիտներին է մնում միայն որոշել, քէ ո՞չչափ հիմնանոր է այն։

ՆԱՀԱՏԱԿ ԳՐԱԳԵՑՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

Նահատակ Գրագէտներու բարեկամ - ներք լոյս են ընծայել իրենց մատենաշարի 10-րդ զիրքը՝ Արտ Յարութիւնեանի «Արձակ էջեր եւ քերթուածներ», որով խոստացած շարքը համարում է փակւած։

Ն. Գ. Բարեկամների Ընկերութեան սկզբանական նորագույն իրավունքը յայտնի է, լոյս ընծայել Մեծ եղեռնին զինունին զին զնացած գրողների նրկերը։ Ապա, զործի ընթացքում, այդ ծրագիրը ընդլայնեցաւ եւ մէջը տանիեցին նաև ուրիշ մեռած գրողներ, իրեւ այլ կարգի նահատակներ։ Այսուենուն, հաւաքարը, մէջը տանիեն եւ կենդանի նահատակները արդէն ո՞ր հայ գրող նահատակ չէ որ...

Ն. Գ. Բ. Ընկերութեան հրատարակած հասորները նորագույն իրավունքը յայտնական է։ Արդար Պայտագաղթի մուտքանում է, շահակցական ոչ մի նպատակ չունի եւ հիմնած է բացառարար գոհարերութեան սկզբունքի վրա։ Հատորը կազմութեան կազմուած են բարեկամների անձնական

Ընկերութեան գործութեան մասին որոշ գաղափար տալու համար առաջ բերենք հետեւեալ բերք։

Մուտք. - Նորմեր՝ 10,133 ֆր. 85 ս., Տարօնի Հայր. Միուրիւնից Գ. Տէր - Կարապետեանի հասորի հրատարակութեան համար փոխան 500 զրբի՝ 10,- 126,80, բաժանորդներից 3,620,80. Նիւ - նորքի մասնակիւդից՝ 25,465,85. զրբերի վաճառումից՝ 43,187,15 - ընդհանուր գումար 92,534,45 ֆր.։

Ելք. - Տար հասորի տպագրութեան՝ 61,196 ֆր., հեղինակի իրաւութեան՝ 2504,20, ընդօրինակութեան՝ 7996,70. պաշտօնեայի՝ 7075,90, առաքման եւ այլի՝ 13,547,35. — ընդհանուր գումար՝ 92,320,15 ֆր.։ Առ դեկտեմբեր ամիս սեռութեան պատրաստ՝ 214,30 ֆր.։

Այս բերք ինքնին պերթախօս են։ Ընկերութիւնը, ինչպէս տեսնում է, շահակցական ոչ մի նպատակ չունի եւ հիմնած է բացառարար գոհարերութեան սկզբունքի վրա։ Հատորը պահանայ 250 մեծադիր էջերից։

աշխատանքով, նիւրականն էլ հաւաքւած է նրանց ջամփերով եւ, դժբախտարար, սակաւարիւ գրասէր բարեկամների աջակցութեամբ։ Այս վերջինների շարքին մասնաւրապէս պէտու է յիշել հանգուցեալ ԲԺ. Ճ. կրկանեանի անունը, որ քէ՝ անձնական զնողութեամբ եւ քէ բաշալերելով նիւ - նորքի բարեկամներին՝ բանգագին ծառայութիւն հասցրեց Ն. Գ. Բ. - ի գործին։

Հրատարակութեան 10 հասորից առաջին վեցը տպած է 1500-ական օրինակ, վերջին չորսը՝ հազարական, ընդամենը, ուրեմն, 13,000 զրբի, որից, եօրը տարուայ ընթացքում, կամիսիկ դրամով, ծախւել է 3023 օրինակ, որ այնքան էլ սպատի բերող բարենիշ չէ «արգոյ ընթերցող հասարակութեան» համար։ Ն. Գ. Բ. - ի այս համեստ բայց օգտակար գործը արժանի է աւելի ջերմ բաշալերանի։

Ի վերջոյ, առաջ բերենք Ն. Գ. Բ. - ի հետեւեալ կոչը, որ, կարծում ենք, մեկնութեան կարիք չունի։

ԿՈՉ ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒԻՆ

ԵՒ ՀԱՄԱԿԻՐՆԵՐՈՒԻՆ

1929-ի աշնան էր, որ խումբ մը մը տաւորականներ իմբը դրին Նահատակ Դրագէտներու Բարեկամներ իրատա - րակչական ընկերութեան, նպատակ ու-

նենալով հաւաքել եւ հրատարակութեան տալ արեւմտահայ նահատակ կամ մեռած գրագէտներուն երկերը։

Արդէն կը բեւակոխեմք մեր գոյութեան եօրներորդ տարին, եւ հակառակ տատասական տագնապին՝ ուրախ ենք յայտարարելու, որ կրցեր ենք իրատարակի արդէն ՏԱՍԼ գեղեցիկ եւ ընտրած հասորները, իրականացնելով մեր մատենաշարին առաջին շարքը։

Պատրաստ դրամագլուխով մը չէր, որ գործի ձեռնարկեցինք։ Շնորհի հիմնադիրներու աննահանջ եւ անձնուեր գործութեան, ինչպէս նաև ի մը նուրատուններու եւ հաւատարիմ ընթերցողներու համակրութեան, իրատարակչական կեամենին մէջ անհրաժեշտ ձեռնարկ մը դարձուցինք։ Պէտք ունենք սակայն նոր օժանդակողներու եւ համակիր ընթերցողներու, այս գեղեցիկ մատենաշարը շարունակեու համար։

Կը հաւատամեք, որ այս կերպով մեր նահատակ գրագէտներուն յիշտառակը յարգած ու յաւերժացուցած պիտի ըլլանք, իրեւ նորական պարտականութիւն։

Ս. ՎՐԱՑԵԱՆ
ՄԿՐՏԻՉ ՊԱՐՍԱՆԵԱՆ
ՏՈՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԻԵԱՆ
Շ. ՆԱՐԴՈՒԽԵՆԻ
Կ. ՍԱՍՈՒԽԵՆԻ


«ԶԻԱՐԹՆՈՅ» տարեգիրքը

Երբեմնի «ԶԻԱՐԹՆՈՅ» գեղարւեստական - գրական հանդէսը, որ երկու տարի լոյս տեսաւ Փարիզ՝ Ճր. Բալուեանի խմբագրութեամբ, կը սկսի իր վերիքատարակութեան՝ այս ամօսա Տարեգիրքի ծերով։ Ալաշին հասորը պիտի բաղկանայ 250 մեծադիր էջերից։

Հատորը պիտի ունենայ հետեւեալ բաժնեներ. - 1) Հայ գրականութիւն. 2) Օտար գրական էջեր. 3) Գրական ու-

սումնափրութիւններ. 4) Գեղարւեստի փիլիսոփայութիւն. 5) Ճարտարապէտութիւն. 6) Նկարչութիւն, բանդակ - փորագրութիւն. 7) Պար. 8) Թատրոն. 9) Երաժշուութիւն։ Բաժիններին կը յաջորդէ քրոնիկի մասը, ուր մանրամասն կերպով կը ներկայացւին. Ա.) Արւեստի հիմարներ, Բ.) Զարյց - համդիպումներ, Գ.) Հայատանի մշակութային տարին, Դ.) Արտասահմանան մշակութային շարժումը, Ե.) Գրախօսականներ՝ Հա-

յաստան եւ արտասահման լոյս տեսձ
զիքքերու մասին, Զ) Միջազգային գրա-
կան շարժում, Ե) Յորելիաններ, Ը) Հայ
Մշակոյթի կրած կորուսոնները։ Տարե-
գիրքը գեղազարդւած է 120-ի մօս նը-
կաբներով։ Տարեգիրքին իրենց մաս-
նակցութիւնը բերել են՝ Գարեգին Արք.
Յովսէփեան, Յ. Օշական, Շահան Վէր-
պէրեան, Շ. Նարդունի, Վէճունի,
Հրաչ Զարդարեան, Արամայիս Սրամ-
եան, Որբունի, Թ. Աղատեան, Դեւ,
Ա. Երեմեան, Ռստոսնիկ, Եղիշէ Այգադ-
եան եւ Արթիշներ։ Կան անտիպ Էջեր



Մ. Վարանդեանից, Կոմիտաս Վարդակ-ից, Մատթ. Զարիքեանից, Թէոդե-կից, Սիպիլից: Թարգ. Էջմիածնի Փրոֆ. Վլիքթոր Բաշից, Փոլ Վահրենից, Բերդ-սոնից, Անդրէ Սիւարէսից ու Լէռնիտ Անդրէսից: Տարեգիրքին վերաբերող ամեն բյուլետենը և այլ դիմումները պետք է ուղղվի խմբագրի հաս-ցեին. **H. PALOUIAN, 1, Rue de l'Aqueduc PARIS (10^e).**

Հասոքը պիտի արժէ Ֆրանսա, Առ-
քիս եւ Պալքաններ 30 ֆր., իսկ մնաց-
եալ երկիրները՝ 40 ֆրան:

ԳՐԱԽՈՍՏԱԿԱՆ

L. G. GUERDAN, «Tigran Yergate». *)

Պարսկ կերտանի այս գեղեցիկ գործը զայդ նապատակի կը ճգտի՞.. գծել՝ Տիգրան Երկարի գրաւիչ դէմքը, որ հոգիբանական եւ այլ զանազան պատճառներով չէ կրցած հայկական միտքին մէջ իր բուն տեղը գրաւել, իր հէֆեարը ունենալ, Երկրորդ՝ հայկական դասոր անզամ մըն ալ հրապարակ նետել, տիեզերական լեզվի մը մէջ, մեծ Մօնիս Պատէսին հոլվանիին տակ:

Այս կրկնակի փորձը կրկնակի յաջողութիւն մըն է: Պարսն կերտան այդ գէմքը գծած է զգայուն, ապրող գիծերվ: Տիգրանը կը տեսմանք իր դրժբախտ նակատագիրովը, իր մտերիմ կեսանին եւ ներքին պայքարներուն մէջ, հասարակական իր սուր եւ հեռառես հայեցքովը, իր պատմական եւ կրապարակային հարցերու խորունկ պատրաստութեամբը, իր գրական ոյժով, ինչնայասուկ տաղանդին «քեկորին-րուն» մէջ: Որպիշտեւ Տիգրան ոյժ մըն է, մեծ ոյժ մը՝ որ խորտակւած ոյժ մը պիտի ըլլայ սակայն: Ինչո՞ւ: Նախ հայ ըլլալուն համար, երկրորդ՝ հիւանդ ըլլալուն համար, աղքատ ըլլալուն համար:

Հակոռակ այս և ուրիշ շատ մը պատճառներու, որոնք կ'արգիլեն Տիգրանին իր «բուն չափը» տալու, Էսմերելի տարեկանին սեսակ մը հոչակ ստացած է արդէն Ֆրանսայի մէջ, ֆրանսերէն լեզով արտայայտող այս հայ «Երիտեր»ը, որուն յօդածները ժիւկիեր Ադամ կը հրատարակէ իր Նավէլ Ռեվիտ-ի մէջ՝ Յախապէս երեւնի ազգարարելով զանոնք։ Մոռիս Պալէս գրողի փայլուն ապագայ մը կը խստանայ իրեն Ֆր-

բանսայի մէջ, եւ Լէօն Տուէ՛ այս քա-
ցարիկ տաղանդներու որսորդը, նշա-
րած է զայն եւ մատնանիշ ըրած ար-
դէն:

Բայց Մոնիս Պատէս Տիգրամին տա-
ղանդէն զատ՝ անոր ասիսկան ծագու-
մէն գրաւած է եւ անոր արեւելեան
հրապոյքը կը կրէ առաջին վայրկեա-
նէն, ուժեղ կերպով: «Կնճդուկի դիւրա-
բեկ կտոր մըն էր թանկազին բոյրով»,
«Եյս երիտասարդ արեւելքին, ամենէն
հազրափիւն էակը՝ որուն երբեք հան-
դիպած ըլլամ, որ ոչինչէն բանաստեղ-
ծուրիւն կը շիներ», կը գրէ: Ցեսոյ,
ուրիշ անգամ մը: «Տիգրան, բարե-
կամս չե՞ս կրնար ինձի Արեւելքի մէջ
զահ մը նւիրել», կը գոչէ: Որովհետեւ
Տիգրան ամբողջ Ասիան, Արեւելքն է
Մոնիս Պատէսին համար — հայը եւ
հայերը անոր մէջէն կը տեսնէ: Երե-
ւանք, Արարատը, որոնց անման եւ
այժման զգայուն տողեր պիտի նւիրէր,
Տիգրամին խոչոր սեւ աշխերուն եւ մե-
լամազանս կիսադիմքին ետեւէն պիտի
նշմարէր առաջին անգամ, այս Փրան-
սացի ամենէն մեծ եւ ամենէն նշդա-
հայեաց արեւելագէտը:

Երէ Տիգրան ստուկ ունենար, քիչ մը
աւելի առողջութիւն, խելացի եւ ա-
ւելի անձնուէր ընտանիք մը, անշո՞ւշո,
Ֆրանսայի գրական ցայտուն դեմքերէն
մէկը պիտի ըլլար, որուն մէջ սակայն
իր ցեղին արիւնը պիտի խօսէր: Բայց,
ինչաւ յանախ իր պատահի. Փարիզի

*) Պ. Լ. Կերտանի այս գեղեցիկ գործինքն մենք ուրիշ առիթ էլ կունենանք անդապառնալու : ԽՄԲ.

մէջ փայլուն ապագայ մը եւ փայլուն շրջանակ մը ստիպած է լքել՝ իրենց բարձանեմին տեղի տալու համար, որոնք իրեն համար զանոնութիւններ ըրած են եւ իրեն պէտք ունին այժմ ապրելու համար Պալիսի մէջ։ Եւ Տիգրան առաջին եւ ճախող ժայլը կառնեց Պալիս կը վերադառնայ։

Այսուեղ՝ հակառակ իր եւրոպական նրբութիւնները վիրաւորող պտուիկ, խարեցուցիչ մրնուրտին, Տիգրան պիտի շահի ազգայնական տեսակետով, բրեֆական մոլեռանդ եւ տոկմարի հոգին հետ իր առաջին հպումին։ Եւ Մոռիս Պանէսի օրինակին՝ պիտի ծնի իր մէջ ազգային ոգին, որ դեռ անորոշ էր եւ ոչ ցայտուն, իր մանկութենին ի վեր կրած զանազան տղուցութիւններուն եւ ստացած զանազան դաստիարակութիւններուն պատմառ։ Այսուեղ է որ պիտի դրէ իր ֆրանսացի քարեկամներուն այն նշանաւոր յօդւածը, զոր կը գտնենք պարոն Կերտամի գիրքին յաւելածին մէջ եւ որ իրական գրուի գործոց մըն է։

Նրբորդ մասը նիբրւած է Տիգրանին յեղափոխական գործունեութեան։ Ազգային հոգին ծնելէ վերջ՝ այդ հոգին յեղափոխական միայն կրնար ըլլալ ժամանակին բերումով։ Բայց Տիգրան այսուեղ ալ կը յայտնէ իր բացառիկ մտութին կանխահանաւութիւնը։ Ամենէն խիզախ եւ ամենէն «անիրականական» ծրագիրներ երեւակայել վերջ — բըրքական բանակին դէմ հայ եւ յոյն միացեալ ապստամբութեան մը զաղափարը (որուն մասին նշանաւոր նառեր կը խօսի եւ յօդւածներ կը գրէ Որէնին մէջ, ուր իր ամենէն փայլուն փառքի օրերը պիտի նանչնայ), յետոյ Կիլիկեան Հայաստանի առաջին ծրագիրը (որուն պիտի հետեւի յետոյ Պողոս Նուպար փաշան) ակը քաջուի յանձնարձ յեղափոխական կետամին։ Թերեւս զինեքը զերշամ միւր մը գտնան այնուեղ։

ԷԼԻԶ ՄԵՇՏԵՐԵԱՆ

Կ. ԲԱՍՄԱՉԵԱՆ, «Հայկական ընդհանուր դրամագիտութիւն»

Կ. Բասմաչեանի այս աշխատութիւնը, որ 1934 թվին արժանացած է «Սրբոց Թարգմանչաց — Դուրեան գրական մըրցանակ»-ին, վերջերս լոյս տեսած է, Վենետիկ, Ս. Ղազարու տպարանը։

Հայրենի բնավայրէն խլած ժողովուրդի մը մնացորդներուն է որ կը նենայարերէ բազմավաստակ բանակը՝ այս աշխատութիւնը՝ շքեղ եւ խնամաւած հրատարակութեամբ մը, զարդարաւած հարիւր բառապահութեամբ։

Հայկական մատենագրութեան մէջ դրամագիտական ուսումնասիրութիւնները շատ հագաղիկ եղած են, հակառակ այն մեծ ստրոգութեան, որ ան ունի, մեր անցեալն ու պատմութիւնը առարկայական կերպով ուսումնասիրելու տեսակետով։ Ասոր պատմաները բազմապիսի են։ Հայկական հնագիտութեան ուսումնասիրութիւնը ցարդ առաւելապէս օտար մասնագիտներու գործն է եղած։ Բացառապէս դրամագիտութեան մէջ միայն ունեցած ենք, երբազան ըլքունունվ հեղինակութիւն մը, անցեալ դարուն, Հայր Կղեմէս Սիսիլեան, վիեննական, որ առանձինն, հիմք դրած է հայկական գըրամագիտութեան — երբ գրերէ անկոյն գետին մըն էր ան — իր կազմած դրամական հաւաքածուներով։ Այսօր, դժբախտարար, յանիրավ մոռցած դէմքերէն մէկն է ան։ Անուղղակի նպաստ ըերած են ամոր նաև իրն դրամեներու հաւաքածոյ կազմողներ, ինչպէս, Սերարէ Ալիշան (Եղբայր Հ. Դ. Ալիշանի), Զենոր պէտյ Մերկամետման, կեսարցի միջատագէտ Գրիգոր Թէլլալեան, Կիլիկիոյ Սահակ Բ. Կաբոդիկոսը, Նըշան Գալքինեան, եւ այլն, առանց յիշելու երկորդականները։

Ուրեմն երկար ատեմէ ի վեր զգաց-

ւած պակաս մը կուգայ լրացնել Կ. Յ. Բասմաչեան, իր այս երկասիրութեամբ, որ կը թագրէ հայկական դրամագիտութեան բոլոր շքամիւններ, նախնեաց շնեկը ու գերգմաններ ընդմիշտ կորսած են, համեմատարար, դրամները ուսումնասիրութեան համար աւելի հանրամտչելի ներկեր են, ամենէն վաւերական աղբիւրներն են մեր անցեալ պատմութիւններ ու առարկայական եւ անխարդախ կերպով լուսաբնելու։ Անոնք ամենէն նշգրիտ վաւերամիշերն են, հաստառագույն կույրներու անկախութեան եւ կամ օտար տիրապահութեանց ազգեցութեան ներարկւելու։ Դրամագիտական աղբիւրներու համաձայն պիտի գրւի օր մը մեր ճշգրիտ եւ քննական պատմութիւնն աղլ։ Այսպիսի աշխատանք մը գործը չէ անհատի մը, եւ ամեն շրջաններու մասնագիտներու պարտութեանց չունի մեր մէջ, որ իր ուղեցոյց պիտի ծառայէ դրամագիտութեան մէջ։

Արևատի տեսակետով հայկական դրամագիտութեան ամենէն շահեկան շըրջանը, Մէծ Տիգրանեան շըրջանն է, հելլէն բաղաբակը ուրեան իրը հայտիվ եւ յունացիր կորող, երբ է կը ներւի այս բացարութիւնը, եւ Կիլիկիան շըրջանը, Խուրիմեան դրամները, որոնք հայ գրերով արձանագրւած են։ Ո՞չ մէկ տեղ, այնքան անսպառ առասութեամբ կը գտնեմ այս դոկտումենտներէն, ո՞ր-

քան Հայկական - Կիլիկիոյ մէջ, հակառակ անոր ամենավերջին տիրապետողներուն՝ օսմանցի քուրքերուն՝ ամէն հայանիշ յիշակերտ փնացնելու իրենց վանդալուրեան: Հայ ծերութիներ կը պատմէն ինձի (1890 եւ աւելի վերջերն իսկ), թէ իրենց տղայուրեան, Հայակիկիոյ ամէն դին, երբ ան դեռ օսմանեան կայսրուրեան մաս չէր կազմեր — Գոզամօղուրերու ժիրտ — տիրապետուրիւն — եգիպտական գրաւման շրջան — ժողովուրդին մէջ, առուժախի միջոցին, դեռ շշաքերուրեան մէջ էին, իրեն ընթացիկ դրամ, կիլիկեան հայկական հայագիր դրամները, առևանց (առիւժանիշ) անտանկչուրեամբ, որ առեն հայերը հոն կիսանկալին էին, անկախուրեան կորուստն դայրեանք:

Պարզ մատենախօսականի մէջ սահմանափակիլը աւելի նախընտրելի էր, այս գործի մասին, բայց տեղին էր, այսօր, այս կարգ մը յիշողուրիւնները արձանագրել, անցողակի կերպով: Աչքի ազեւ ունիմ, սակայն, հրատարակած գործը, որ համբերատար աշխատութեան մը արդիւնքն է, հակառակ այսպիսի գործերու մէջ գրեթէ միշտ անխուսափելի քերիներուն, եւ ներշնչումի ազդիլ մըն է, հայրենազուրկ հայկական սփիւրքին: Կ. Յ. Բասմաջեան այն մեղւազան բանակըն է, որ կրցած է, — աւելցնել նաեւ որ բախտն ալ ունեցած —, լոյս ընծայելու, պարքերաբար, իր երկար տարիներու հետազոտուրիւնները, գրքի ձեւով: Ամիր - Տովլաթէն յետոյ, իր այս դրամագիտական երկասիրուրիւնը, իր ամենէն լաւ գործն է, գոր այսօր կը ներկայացնէ գիտական աշխարհին, միսմինակը, — գործ մը, որ կատարելատիս ըլլալու մեծամտուրիւնը չունի արդէն, բայց անհատապէս հերոսական գործ մըն է: Այս կարգի աշխատութեանց կը պատկանի աւելի պետական համարական:

Եսանց, ի՞նչ բէժիմի եւ աշխարհայեացֆի ալ պատկանին: Անցեալին ուսումնափրուրիւնը լաւագոյն կերպն է գռհացում տալու, մարդոց հոգեկան եւ մտաւոր անտեղիտալի պահանջմներուն, զոր պիտի ունենան միշտ, ըլլան անոնք բրածոյ պահպանողականներ թէ ծայրայել ճախեր...

Այս գիրքը լաւագոյն առաջնորդ մըն է հայրենագուրկ եւ հայարմակ սերուղներուն, մղելու համար զանոնք, որ շահագրգութին իրենց անցեալովը: Դիւրաշխատ գործ մըն ալ չէ, եւ կարելի չէր զայն ի գլուխ հանել, առանց այն հանճարեղ համբերատարութեան, որ Կ. Յ. Բասմաջեանը կը բնորոշէ, իր թրքախօս մանկուրիւնէն ի վեր, որ հետամուտ եղած է, հայ անցեալը անձամբ ուսումնասիրելու, փորձած է հայ յիշատակարանները մոռացուրեան և կորուստ փրկել, անցեալապաշտ մեծ հոգիներու աղապատանեռով մը, արձանացնելով զանոնք պարքերական հրատարակուրիւններու մէջ:

Պիտի վարանի ո եւ է դիտողուրիւն մը փորձելու, մէկ անձի մը կողմէն զլուխ հանեած այսպիսի աշխատութեան մը մասին:

Գրքի տպագրուրիւնը անբերի է: Հեղինակը իւրաքանչիւր շշանք կը փակէ մատենադրութեամբ մը: Նախընտրելի էր, սակայն, որ առանձին եւ ամրողական զլուխ մը յատկացնելը անոր, որովհետեւ գործը սահմանած է հայ եւ օտար նորընծայ մասնագիտներու: Կը բւի թէ հեղինակը զանց ընել ստիպած է այս, ինչպէս նաեւ կարգ մը նորագիտ հայկական դրամներու վերարտադրուրիւնն ալ, հաւանաբար մեծածախս ըլլալուն համար:

Այս երկը ոչ միայն նպաստ մըն է հայ գիտական գրականութեան, այլ եւ կարեւոր նիւթական գիտ մը՝ ուսումներու ձեռքին, հայ պատմուրիւնը ուսումնասիրելու համար:

Հ. Հ.

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՒ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻՆ

Խմբագրի գէպի Հար. Ամերիկա կատարած ճամբորդութեան հետեւանքով էր գլխաւորապէս, որ «Վէմ»-ի վերջին համարները սովորակնից ուշ լոյս տեսան: Այս յապազումի համար որոշ չափով պատասխանատու են նաև բաժանորդներից ու գործակալներից շատերը, որոնք ժամանակին իրենց հաշիւը չեն փակել:

Խմբագրութիւնս միջոցներ է ձեռք առնում, որպէսզի այսուհետեւ «Վէմ»-ի համարները ժամանակին լոյս տեսնեն: Այդ բանում, սակայն, մեղ պէտք է օգնեն եւ բաժանորդներն ու գործակալները, որոնց գիմում ենք յատուկ խնդրանքով՝ օր առաջ փակել իրենց հաշիւները:

Պէտք չունինք ծածկելու, և արդէն քանիցս ասել ենք, որ «Վէմ»ը զուտ գաղափարական ձեռնարկ է, որ եւ է շահագիտական նպատակներ չի հետապնդում եւ ապրում է լոկ բաժանորդների տւած դրամով: Հետեւաբար, նրա հրատարակութեան կանոնաւորութիւնն էլ կախւած է բացառապէս բաժանորդների ճշգաղահութիւնից - համարները ժամանակին ստանալու համար պէտք է ժամանակին վճարել բաժնեգինը:

Յոյս ունենք, որ մեր յարգելի բաժանորդներն ու գործակալները անհետեւանք չեն թողնի մեր այս գիմումը:

Ֆրանկի անկման հետեւանքով, ստիպւած ենք Ամերիկայի եւ Բրիտանական կայսրութեան մէջ մտնող երկրների բաժնեգինը հաշւել չորս դոլար, որ աւելի պակաս է, քան 70 ֆր. մինչեւ Փրանկի արժէքաղղկումը:

ՎԵՄ ՆԻՒՐՈՂՆԵՐ

Տիկ. Ռ. Շաւարչունի, Փութաքէթ -
Մ. Յովանեանին, Բրամբ. Ն. Ե.

Տիկ. Ս. Սինանեան, Փութաքէթ -
Ա. Տիրատուրեամին, Փութաքէթ.

Տիկ. Մ. Յարութիւնեան, Փութաքէթ - իր եղբօրք՝ Տ. Ռոտիկեամին,
Գերմանիա:

ՍԱԱՑԻԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. Պարտիզեան, «Հայ եկեղեցու տագնապը եւ անոր պատախանառութերը», 1936, Բոստոն.

Գարեգին Եպ. Խաչատուրեան, «Աշխարհի լոյսն ի Հայս», Ա. հատոր, 1936, Փարիզ.

Լաս (Լուիզա Ասլանեան), «Հարցականի ուղիներով», Վեպ, 2 հատոր, 1936, Փարիզ.

Արտ. Յարութիւնեան, «Արձակ էջեր եւ քերածմներ», հրատ. Նահատ. Գրադ. Բարեկամների, 1936, Փարիզ.

Արմէն Միւնի, «Կարմիր - կանաչ», (Ա. շաբէ).

Գէորգ Դարֆի, «Սիանուշ եւ Սուտարէ» (դրամ), 1936, Թէհրան.

Հր. Ֆալեան, «Հողամարդք» (պատմածք), 1936, Թէհրան.

Յ. Քիւրտեան, «Ալաջին եւ երկրորդ խաչակրութիւնները ըստ Սիւրիացի անանուն ժամանակագրի մը», 1936, Բոստոն.

N. ADONTZ, «Sur la date de l'Histoire de l'Arménie de Moïse de Chorène. Extrait de Byzantion». T. XI, 1936. Bruxelles.

N. ADONTZ, «Les Tarantites en Arménie et à Byzance». Extrait de «Byzantion». T. X, 1936. Bruxelles,

L. KESHISHIAN, «The Churches in Jerusalem», I. 1936, Jerusalem.

L. GUREKIAN, «Primo Centenario della fondazione del Collegio Armenio Moorat - Raphael.

«Տեղեկագիր Հ. Կարմիր Խաչի Կեղը. Վարչութեան», 1936, Բոստոն.

«Մրագիր - Կանոնագիր Հ. Կ. Խաչի Կեղը. Վարչութեան», 1936, Բոստոն.

«Հայրենիք», ամսագիր, Սեպտ., Հոկտեմբեր.

«Հայ - Բոյժ», թիւ 23, 24.

«Հանդէս Ամսօրեայ», թիւ 4 - 6.

«Սիոն», թիւ 8, 9.

«Կեանք եւ Արևես», թիւ 7, 8, 9.

«Հասկ», թիւ 9 - 10.

«Դրական Թերթ», թիւ 23, 24, 25.

«Խորհրդ. Արւեստ», թիւ 19, 20.

«Կավակ», (ոռուերէն), թիւ 9, 10,

11.

«MASSIS», No. 10 - 11.

ԳՐԱՑՈՒՆ ՀՐԱՆՏ-ՍԱՄՑՈՒԵԼ

51, Rue Monsieur-le-Prince, Paris VIe

Chèque postal: Paris 1278-35. Tel: Danton 88-65.

Փարիզի մտաւրական կեդրոնին մէջ հաստատած այս Գրատունը օքք օրին կը ստանայ Հայաստանի եւ գաղութերու բոլոր հրատարակութիւնները: Բացի հայերէնէ, ունի ֆրանսերէն եւ այլ օտար լեզուներով գիրքերու նոյն մթերք: Աշխարհի բոլոր կողմերէն հասած առաջանքները կը գործադրէ խղճամիտ կերպով: Ունի արդիական կազմառուն:

Գործառնութիւններ՝ կաթողիկ դրամով:

Հ Ա Յ Տ Ե Ն Ի Ք

ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան	5 դրամ
Վեցամսեայ	3 „
ՀԱՅՐԵՆԻՔ ԱՄՍԱԳԻՐ ԵՒ	ՕՐԱԹԵՐԹ
	ՄԻԱՍԻՆ
Տարեկան	10 դրամ
Վեցամսեայ	5 „
Հասցէ:	

13-15 Shawmut st.

BOSTON MASS (U.S.A.)

Ա Ս Պ Ա Ր Է Զ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ամերիկա, տարեկան,	1.50 դրամ
Արտասահման	2.00 „
Հասցէ:	

"ASBAREZ" P. O. Box 865

Fresno, Calif., U. S. A.

Ա Զ Ա Ս Խ Օ Ս Ք

ՕՐԱԹԵՐԹ

Բուլգարիա, տարեկան	550 լիւ
Բուլգարիա, վեցամսեայ	300 լիւ
Ամերիկա, տարեկան	6 դր.
Ուրիշ երկիրներ՝ տարեկան	150 դր.
Հասցէ:	

45, Bld. M. Louiza,

Sofia, (Bulgarie)

Ա Լ Ի Ք

ԵՐԿՈՐԵԱՑ ԹԵՐԹ

Տարեկան	85 դիմա
Վեց ամիսը՝	45 դիմա
Արտասահման	
Տարեկան՝	170 դր. դր.
Հասցէ:	

"ALIK", Impr. Moderne
Khiabane Posthané, Teheran
(Iran)

Յ Ո Ւ Ս Ա Բ Ե Ն

ՕՐԱԹԵՐԹ

Եգիպտոս, տարեկան,	150 եգ. դի.
„ Վեցամսեայ,	80 „
Արտասահման, տարեկան,	40 շիլդ
„ Վեցամսեայ,	20 „
Հասցէ:	

"Houssaper", B. P. 868

Le CAIRE (EGYPTE)

Մ Ե Ղ Ո Ւ

Երգիծական Շաբար-արերթ

Ներքին՝ տարեկան	100 լեվ
„ Վեցամսեայ	50 լեվ
Ամերիկա Տարեկան	2 դրամ
Արտասահման Տարեկան	30 դրամ
Հասցէ:	

K. Kaladjian

B. P. 444, Sofia, (Bulgarie).

Հ Ո Ր Ի Զ Ո Ն

ՕՐԱԹԵՐԹ

Ներքին, տարեկան	300 տր.
Արտասահման, տարեկան	150 դր.
Հասցէ:	

Rue Mitropoleos, 14.

Salonique, (Grece)

Ս Ի Ռ Ո Ւ

ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան 6 ամպ. շիլդ կամ 1.50 դր.
Հասցէ:

Patriarcat Arménien, Jérusalem
(Palestine)

Բ Ա Զ Ա Վ Ա Վ Է Զ

ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան	3.50 դրամ
Հասցէ:	

"Pazmaveb", St. Lazar, Venise
(Italie)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԳԱՌՆԻԿ ԳԻՒԶԱԼԵԱՆ	Մ. ՓՈՐՔՈՎԱԼԵԱՆ	1
ՎԱՀԱՆ ՄԻՆԱՍՈՐԵԱՆ	Արհաւիրքի օրեր	30
ԲՐՈՅ. ՆԻԿ. Ա.ՏՈՒՑ	Նոր Հայերէն ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ	46
ՏՕՔԹ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ	ՅՈՒՂԱՍ ՅՈՒՂԱՍ ՅՈՒՂԱՍ	54
ՅՈՎԱԿ ՍՏԵՓԱՆԵԱՆ	Անդրանիկը Սիմեաց Երկրում դ.	59
Վ. ՓԱՓԱԶԵԱՆ	Համաշխ. պատերազմ և Տարօնի Աշխարհը	72
ՀԱՅ-ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆԵՐԸ	ՀԱՅ-ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆԵՐԸ	86
ՀԻՆ ԹՈՒՂԹԵՐ	Արսէն Թոխմախեան . Ռոստոմի համակները	95
ԱՆՑԵԱԼՔ	Դերասան Ա. Յարութիւնեան - Միքայէլ Մինասեան - Պրօֆ. Անդրան Մէյեէ	101
ԿԵԱՆՔ և ՄՇԱԿՈՅԹ	Աննախընթաց հալածանիք Խորհրդահայ Գրականութեան և Գրողներու դէմ , Ա. Խ.	104
ԳԻՐՔ և ՄԱՄՈՒԼ	«Նախագահ վիլսոն իրաւարար Տաճկաստանի և Հայաստանի միջեւ» - Յանկաստանի եւ Նախիչեւանի հիւսիս-արեւելեան սահմանը» - «Խալդէրէն լեզուի բանալին» - «Նահատակ գրագէտներու բարեկամները - «Զըւարքնոց» տարեգիրքը	109
ԳՐԱԽՈՍԱԿԱՆ	L. G. GUERDAN «Tigran Yergate» «Հայկական ընդհ. Դրամագիտութիւն», Հ. Հ.	113
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ	, , , ,	117
ՅԱԼԵԼԻԱՆ	Վահրամ Եպ. Մանկոնի, «Գէորգ Դ. և իր ժամանակը»	

225

Գէորգ Դ. և իր ժամանակը

« կարգաւորք իցեն եւ թէ աշխարհականք՝ նզովեալք եւ անիծեալք
 « եղիցին յԱստուծոյ եւ յամենայն սրբոց եւ ի Հայրապետական կարգ-
 « գէս մերմէ եւ յեպիսկոպոսաց ժողովոյս, ամէն»:

Ունէր Հայրապետու այս բարեյիշատակ առաջի աչաց զժամանակա-
 կից զանցս Տ. Ղաղար կաթողիկոսի Զահկեցւոյ (1738) եւ այլոց:
 Գուշակէ՞ր արգեօք եւ զապագայ անցս Տ. Եփրեմայ կաթողիկոսի (1830-31):

Իսկ Տ. Յակոբ Կաթողիկոս Շամախեցի կանոնադրէ այսպէս.

« . . . Երրորդ՝ պատուէր եւ կանոն եղիցի յայսմհետէ, զի յետ
 « վախճանման Հայրապետին մերոյ՝ յորժամ Աթոռայնոց եւ Սպա-
 « հանցւոյն եւ այլոց արեւելականաց՝ Կոստանդնուպոլսեցւոյն եւ այ-
 « լոց արեւմտականաց Հայկասէր Ազգաց (°) ի Քս. Հաւատացելոց
 « լուսաւորչակրօնից եւ միաբնադաւանից Համահաւանութեամբքն
 « ընտրեսցի ոմն Արքեպիսկոպոսուր ուր ուրեք եւ լինիցի ի Հայրապե-
 « տութիւն ամ. Հայոց եւ Սրբոյ Աթոռոյն էջմիածնի, նա պարտի
 « զչորեսին կանոնս զայսոսիկ պահել: Նախ՝ զանոնն իւր ոչ յիշեցու-
 « ցանել ի յեկեղեցական աղօթսն նախ քան զօժանին իւր ի Հայրա-
 « պետ: Երկրորդ՝ նախ քան զօժանին իւր՝ ի յսկրան թղթոցն իւ-
 « լոց զորս զրէ առ Ազգն մեր՝ այսու ոճիւ գրեսցէ. «Յիսուսի Քս. ի
 « ծառայ այս անուն Արքեպիսկոպոս եւ Կաթողիկոսացու (եւ կամ
 « կոչմամբ եւ ոչ օծմամբ կաթողիկոս) ամենայն Հայոց եւ մեծի
 « Աթոռոյն Սրբոյ էջմիածնի որ ի Վաղարշապատ մայրաքաղաքի,
 « յորմէ ժամանեալ, եւ այլն»: Երրորդ՝ յառաջ քան զօժանելն իւր ի
 « Հայրապետ զգիրս կնքոյն իւրոյ՝ Հայրապետական անուամբ մի'
 « գրեսցուցէ, զոր եւ կարմրադեղով ի գործ ոչ ածցէ, այլ զտիպն եւ
 « դարձն (արմն = արմա) Միածնաէջ եւ սր. տեղւոյ՝ իւրոյ ան-
 « անազրութեան ի տեղի կնքոյն իւրոյ ի գործ ածցէ, որով զճակատ
 « թղթոյն կնքեսցէ եւ ի վերայ յատուկ կնքոյ իւրոյ Եպիսկոպոս
 « գրել տայցէ եւ նովաւ ի լուսանցակոյս կողմն թղթոյն ի մէջ ծաղ-
 « կագիր Յիոյն (Յիւն) կնքեսցէ սեւադեղով: Զորրորդ՝ եթէ կարելի
 « լինիցի ի Մայր Աթոռոն Սր. էջմիածնի գնան՝ արտաքոյ սրբոյ Ա-
 « թոռոյն յայլ ուրեք կաթողիկոսուն մի' ձեռնադրեսցի եւ մի' ո-
 « ծանեցի ի Հայրապետութիւն»:

Ակնարկէր բարեջան կաթողիկոսս այս յօծումն Կարապետ կա-
 թուղիկոսի Ունեցւոյ (ՌՃՃԵ) եւ ի ժամանակակից անձս Ահագին
 Սահակայ (ՌՄԵ-ՌՄԼ), եւ այսոքիք պարտաւորեն դնել զայնոսիկ
 կանոնս:

Յաւելումք ընդ սոսա ամբողջապէս գուշագրաւ ինքնաձեռագիր

S. VRATZIAN — 13, Rue des Platanes, Cité Jardins de Plessis-Robinson (S.)

Gérant: V. Hampartzoumian

ԷԽՈ. ARTISTIQUE, 42. Rue de la Jonquière, PARIS (17e)

պատասխանի պատմական՝ պատրիարքի Սբ. Սաղիմայ Տ. Զաքարիա Արքեպիսկոպոսի որ առ Մատթէոս Եպս. Պատրիարք կ. Պոլոսյ, առթիւ խնդրոյ յիշատակութեան Տ. Ներսիսի Աշտարակեցւոյ ընտրելոյ ի Կաթուղիկոս ի 1843 թուականի, որ յամէր ի Պետերբուրգ, գուցէ ի պատճառս ծանու հիւանդութեանն :

«Վեհափառ Առաքելաջնորհ Սրբազն»,

« Խնդրէք տեղեկանալ վասն յիշատակութեան տիեզերալուր « անուան Ներսէս Սրբազնին : Արդ՝ յաթոռս մեր վաղեմի աւան « դութիւն կայ իրեւ օրէնք եկեղեցական անփոփոխելի, զընտրեալն յաթոռ կաթուղիկոսական մինչեւ ո՛չ ձեռնադրեսցեն ի Սբ. Էջմիածն օծութեամբ սրբալոյս Միւռոնի՝ ո՛չ յիշատակեսցեն զանուն « նորա, եւ զայս վասն զգուշութեանց տարապարտ աղդային խոռո « վութեանց կարդադրեալ են . քանզի երբեմն զանազան հակառակա « թոռք երեւեցան յաղդի մերում, որպէս եւ յաւուրս մեր, եւ Սբ. « Աթոռս տէրունի վիճակէ Սբ. Էջմիածնի, եւ բաղում երեւելի ո « տարագդիք հարցեալ են մեղ եւ հարցանեն վասն կաթուղիկոսի « եւ Եպիսկոպոսաց ձեռնադրութեան՝ թէ որպէ՞ս է սովորութիւն « Զեր. եւ մեր պատասխանի տուեալ թէ՝ ձեռնադրութեամբ ըստ ա « ուաքելական արարողութեանց, թէ հեռաւորք եւ թէ մերձաւորք ե « պիսոպոսցուք պարտին դնալ ի Մայր Աթոռն մեր ի Սբ. Էջմիածն, « եւ ընդունել զայն չնորհ Եպիսկոպոսութեան ձեռնադրութեամբ ան « միջապէս ի Սրբազն Կաթուղիկոսէն . եւ ամենեքեան խոստովանին « թէ առաքելական է . վասն զի Պատն Հոռվմայ ոչ երբեք ձեռնադրէ « զոք Եպիսկոպոս, այլ յանձնէ կարդինալի միոյ կամ Եպիսկոպոսի « տանել յեկեղեցի մի, եւ ձեռնադրել, կամ հրամանագրով տայ իշ « խանութիւն կարգաւորի միոյ վարել զպաշտօն Եպիսկոպոսութեան : « Այս պատերազմ՝ զօրաւոր է այժմ ի մէջ Անդիացւոց եւ Ամերի « գացւոց :

« Տէր Սրբազն, յիշատակութիւն կաթուղիկոսի անուան, ո՛չ է հաստատել (եալ) ի վերայ ընտրութեան, ԱՅԾ, Ի ՎԵՐԱՅ ԶԵՐՆԱՅ « ԴՐՈՒԹԵԱՆ: Աստուծով, ի լսել մեր զձեռնադրութիւն նորին Ամե « նաբարձր Սրբազնութեան, պահելով անփոփոխ զառաքելական ա « ւանդութւն՝ որ է նշան Առաքելական Եկեղեցւոյ, եւ մեծահանդէս « տօնախմբութեամբ յիշատակեմք զհամբաւատենչ Անուն նորին « Սրբազնութեան. ապա խնդրեմ սակաւեկ մի եւս երկայնամիտ լի « նել :

« Սինօղն Սբ. Էջմիածնի գրէ առ մեզ զընտրութիւն նորին Սրբ « բազնութեան, եւ ապա խոստանայ ծանուցանել զձեռնադրութիւն

« վաղվաղակի . զի նոքա գիտեն զմեր սովորութիւն հնաւանդ եւ « անայլելի . որպէս մեք զնոցայն . կայ այդպիսի հին աւանդութիւն « նաեւ ի Սբ. Էջմիածնի, այս է չձեռնադրել արտաքոյ Սբ. Էջմիածնի « Եպիսկոպոս, չթողուլ չրջիլ Եպիսկոպոսաց, ո՛ եւ իցէ պատճառաւ « ի վիճակս իւրեանց սեփական : Մեք չեմք յաշաղկու եւ հակառա « կամէր . այլ միշտ հնազանդ . եթէ այնպիսի ոք լինէաք, չորս ամ « ոչսապահաք նորին գալստեան . կարող էաք բերել զկաթուղիկոսն « Սրայ առ մեղ, կամ զեպիսկոպոսցուս առաքել անդը, սակաւ խար « Սագայ առ մեղ, կամ զեպիսկոպոսցուս առաքել անդը, սակաւ խար « Ճագնացութեամբ . թէեւ երբեմն առաքեալ են զծերունի ոք կամ « ճակար, զայն եւս ծանուցեալ են ի Սբ. Էջմիածնի, եւ բերեալ են ի « Սրբազն Կաթուղիկոսէն դիր օրհնութեան, ուրախակցութեան եւ « չնորհաւորութեան :

« Ոչ ախորժիմք նորաձեւութիւն ինչ մուծանել ի կարգադրու « թիւնս նախնեաց մերոց . զանուն ի լոյս հանգուցեալ Եփրեմ Սրբա « զան կարուղիկոսին Մինջեի ՑՀՐԱԺԱՐՈՒՄՆ մեք յիշեցաք . զա « նուն Յովհաննէս կաթուղիկոսին ոչ յիշատակեցաք երբէք . այլ « հանգուցեալ կաթուղիկոս մինչեւ ցայժմ . դեռ տակաւին ո՛ գիտէ թէ « որպէս կարդադրի . զի ի ձեռու օտարազգեաց է . ասեն՝ թէ եւ ձեռ « նադրի, բայց ոչ ի Սբ. Էջմիածնի, այլ ի Տփիս նստի . գիտես « երբեմն զԱրմաց կամէին շինել կաթուղիկոսարան, այլ Աստուած « խափանեաց :

« Ողջ լեր յուրախութիւն ցաւալից սրտի մերոյ :

« 1846, յԱպրիլ՝, յԵրուսաղէմ,

« յԱռաքելական Աթոռս Սբց. Յակոբեանց »

Սրբոյ Երուսաղէմի Պատրիարք

ԶԱՓԱՐԵԱՅ ԱՐՔԵՊՈՅ . »

(Կարմրադեղ կնիք)

Պարզէ սոյն այս թուղթ պատռաւական եւ հետաքրքրական զկա « րեւոր ինդիրս ոչ միայն՝

1. Կաթուղիկոսական յիշատակութեան, այլ եւ դրգոք զուշա « դրութիւն մեր սակս,

2. Տէրունիութեան Ս. Աթոռոյ Յակոբեանց Ս. Երուսաղէմի առ « Սբ. Էջմիածնին,

3. Յարաբերութեանց Ս. Երուսաղէմի ընդ Ս. Էջմիածնի,

4. Եպիսոպոսական ձեռնադրութեանց,
5. Երկուց որոշակի իմաստից գրութեանց Սինօդի Ս. էջմիածնի,
6. Անցից Եփրեմ Կաթողիկոսի եւ յիշատակութեանն,
7. Ընդդէմ Յովհաննէս կաթողիկոսի Կարբեցւոյ,
8. Տարածայնութեանցն սակա Ներսիսի նորընտրի,
9. Մտադրեալ Կաթողիկոսարանի Արմաշու վանուց, եւ
10. Միամտութեան Մատթէոս Եպիսկ. Պատրիարքի (ապա Կաթողիկոսի) :

Յետ միոյ ամսոյ, իմա' յ՛ն Մայիսի, բարեյշատակ Տ. Զաքարեայ Արքեպս. Պատրիարք կնքեաց զաշխարհային կեանս, որում յաջորդեաց Կիրակոս Արքեպս. ընտրութեամբ ժողովոյ գումարելոյ ի Կ. Պոլիս, ի 23 Դեկտեմբերի (1846), յաւուրո որոյ յիշատակէլլ անուն Ներսիսի կաթողիկոսի Աշտարակեցւոյ յետ օծմանն:

Արդ սոյն թուղթ, ակնարկեալ նաեւ ժամանակակից Սինօդի Սրբոյ էջմիածի, առթիւ յիշատակութեան, գրէ՝ եթէ «Սինօթն Սր. էջմիածնի գրէ առ մեզ զընտրութիւն Նորին Սրբազնութեան (Ներ-սիսի), եւ ապա խոստանայ ծանուցանել զգեռնադրութիւն վաղվա-ղակի, զի Յովհան զմեր սովորութիւն Հինաւանդ եւ անայլելի « (անայլայլելի)», անշուշտ առ ի յիշատակել զանուն նորընտրի կաթողիկոսին Ներսիսի: Եւ պարտիմք յաւելու ի պատիւ ժամանակակից Սինօդի ըստ խնդրոյ յիշատակութեան, զի ջանայր նա հաւատարիմ եւ նախանձախնդիր մնալ այսմ առաջի ոչ եւեթ Երուսաղէմի, այլ եւ համօրէն ամենայն եկեղեցւոյ եւ Աղդի Հայաստանեայց՝ պաշտպանեալ զնախաւանդ սովորութիւնս եւ զկանոնս, այնպէս տեսանեմք ի հրատարակութիւնս «Արարատ» ամսագրոյ Ս. էջմիածնի ի քաղուածոն ԷջՄիԱԾՆԻ ԱՐԵՒԻԻ անուն (տես ի 1883, թ. 1., Օդուսու, յերես 350):

Շարեմք ահաւասիկ դիսկական յօդուածն «Արարատ»այ.

« Ներսէս Կաթողիկոս ընտրելուց ու հաստատուելուց յետոյ, ներքին գործոց նախարարի միջոցաւ հրաւիրուելով Ս. Պ. բուրգ, այնողեղ հիւանդանում է, որով եւ յետագետում է դէպի Ս. էջմիածին գալուստն ու օծումն: Ինչպէս երեւում է Սինօդի 1843 թուի նոյեմբերի 12ին կայացրած օրագրութիւնից, ոչ միայն նորընտրի կաթողիկոսների անուններն՝ ի հնումն նախ քան օծուիլը չէ յիշուել եկեղեցում, այլ եւ նոքա եկեղեցու մէջ չեն էլ կանգնել կա-

« Թուղիկոսին յատկացեալ գմբէթարդի մէջ *). իսկ անդրանիկ Կոնդակը միայն Ս. Օծումն ընդունելուց յետոյ է հաստաբակուել: Թէ եւ Սինօդը նորընտրի կաթողիկոսի անունը եկեղեցում չը յիշատակուելու կաթողիկոսի բառականը համար սկսել էր գրագրութիւն՝ Վրաստանի գլխաւոր կառավարութեան միջոցաւ ներքին գործոց Մինիստրի հետ, սակայն Ներսէս նորընտրի կաթողիկոսը իւր համար 26 ի 26-ն Նոյեմբերի 1843 ամի կրնզակով յանդիմանում է Սինօդին եւ հրամայում է առանց իւր համաձայնութեան ինչ եւ իցէ գործի համար բողոքարկու չը լինել դէպի Տէրութեան բարձրագործին կառյն կառավարութիւնները: Այս կոնդակին ստորագրում է «Եպիսկոպոսապետ կաթողիկոս եւ Պատրիարք ամ». Հայոց Ներսէս»: Իսկ իւր առաջադրութեամբ յանուն Տէղակալ Բարսեղ Արքեպիսկոպոսի 21-ին Յունվ. 1844 ամի, պատուիրում է թուղթը ստանալու առաջին կիրակոսի էլին՝ անձամբ պատարագել, եւ Մայր Աթոռում կաթուղիկոսի անունը յիշատակելուց յետոյ, հրամանագրել Սինօդից որ յիշատակուի կաթողիկոսի անունը բոլոր եկեղեցիներում»:

Կամէաք ամբողջութեամբք ամփոփել աստէն չյիշատակեալ Օրագրութիւնս եւ զգրութիւնս Սինօդի եւ Ներսիսի, այլ սակայն բաւական լիցի մեղ քաղել ի համառօտ բովանդակութենէ իմաստիցդ, զի մինչ Ներսէս ջանայր ի միոյ կողմանէ զգուշացուցան զՍինօդի յարաբերութեանց ընդօտաքս, ի միւսմէ կողմանէ մեղանչէր չարաչար ընդդէմ ազգային եւ եկեղեցական սովորութեան, եւ բանայր զգուռն նորոց զեղծմանց շարունակելոց ցաւուրա մեր **): Միանգամայն խորին իմն տղիւառութեամբ նուիրագործէր ուղղակի զ19-րդ յօդուած Պալաժէնիոյ 1836 թուականի (ըստ նոյն տպագրութեան), յորում գրի: «Թագաւոր կայսրն ՆՇԱՆԱԿԵԱԼ, (°) զծայրագոյն Պա-

*) Միայն Պուկաս կաթողիկոս մինչեւ Տանկահայոց հաւանութիւնն ընդունիլը գմբէթարդի մէջ չէ կանգնել: Ըստ ազգային սովորութեան, ընտրութիւնը լրաման պէս, ընտրեալը կաթողիկոս է բոլոր իրաւամբ (° . . .), կը մնայ համդիւարու օծումն: (Մանօթ. Փ. Վ. Խմբագրի «Արարատ» ամսագրոյ):

Երիտասարդ վեղարակիրն կարօտի տակալին ուսման եկեղեցական պատմութեան, կանոնաց եւ եկեղ. իրաւաբնութեան: Եւ արդ բայ դաւանութեամ նորահարկ էր դասել զներսէս վարժապետեան ի շաբս կաթողիկոսաց համաձայի ըմբուրութեամն որ ի 1884 քուականի, եւ առ ի՞նչ մնայ ներսէս արտաքոյ ի ցանկէ կամ ի դասակարգութեամն կաթողիկոսաց (Մանօթ. Հեղինակի գրոյս):

**) Տես մանրամասն ի «Ներսէս Ե. Աշտարակեցի», ի Կ. Կառամեամցէ, տպ. 1909, Ապելսութեապուլ:

« տրիարքն էջմիածնի զկաթուղիկոսն Հայկազանց՝ ամենառողը մատար չնորհէ սմա զառանձին հրովարտակ վասն այսր աստիճանի, « եւ ՀԲԱՄԱՅԻ գկնի երդնլոյն լինել հաւատարիմ առ գահն ամ. « Խուսաց, կատարել զօծումն նորա ըստ վաղեմի ծիսի եւ սովորու- « թեան լուաւորչական (ի Ռուսս Գրիգորիան) եկեղեցւոյն Հայոց» :

Արդ թուի մեզ, զի առաւել պերճախօս եւ զօրաւոր լիցին կանոն եւ հրահանդ օծման կաթուղիկոսի՝ կանոնք եւ փաստք վերաբերեալք վերջին դարուց միայն, ի վկայութիւն եւ ի հաստատութիւն խնդրոյ յիշատակութեան ընդ դուզնաքեայ դիտողութեանց մերոց. իսկ կա- նոնն օծման կաթուղիկոսի, որպէս տեսաք ի հրահանգս ոչ սակաւ ձեռադիր Մեծ-Մաշտոցաց, ըստ որոց տպագրեցաւ ի Մայր Աթոռով յամի Տն. 1876, բացարձակաբար պատուիրէ ՅԵԾ ՕԾՄԱՆՆ սկսանել զիշատակութիւն անուան նորոյ կարուղիկոսի, միանդամայն առա- քել զանդրանիկ ըրջաբերական կոնդակս Հայրապետական ի համօրէն ամենայն վիճակս Հայաստանեաց : Եւ սոյն այս պատուէր եւ կանո- նական հրահանդ բաւական լիցի ի կնիք բանիցս :

Բարուք լիցի՝ որոց ուշադիր են՝ ընթեռնուլ եւ զգրեալսն ի Սի- մէոն կաթուղիկոսէ Երեւանցւոյ ի «Զամբռ»ի (տպ. ի Ս. էջմիածին յամի 1873, յերեսս 58-63, Գլ. Թ.) :

ԳԼՈՒԽ ԽԲ.

ՅԱՂԱԳՍ ՈՒՂԵՒՈՐԵԼՈՑ Տ. ԳԵՈՐԳ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

Ի ՊՐՈՒՄԱՅԻ Ի Կ. ՊՈՂԻՄ

Փոյթ մեծ էր ուստական կառավարութեան ի համոզել զՏ. Գէ- սրդ նորընտիր կաթուղիկոս սակս ճեպելոյ փութալ մեկնիլ ի թուր- քիոյ եւ երթալ աւուրբ յառաջ ի Ս. էջմիածին՝ առարկեալ զպատ- ճառս հրապուրական դիւանադիտական հնարամտութեամբք, որոց տկարանայր թափանցել նորին Սրբութիւն՝ միանդամայն թուէր իմն՝ զի ձանձրացեալ գոլով յայսոցիկ կողմանց եւ առաւել ի սան- ձարձակ անձանց՝ յուխտեալ հակառակորդաց եւ ստապատիր հրա- տարակութեանց ազգային լրագրաց կ. Պոլսոյ եւ այլոց, յուսար գտանել գլխիւրութիւնս եւ զյաջողութիւնս ի Ռուսաստան եւ ի Ս. էջմիածին ի պաշտպանութիւն արժանապատութեան իւրոյ, մանա- սնդ յարդիւնաւորութիւն ազգօգուտ եւ եկեղեցաշէն նպատակաց իւ- րոց ծայրագունից եւ ջանիցն: Մինչ գլխաւոր եւ իսկական նպատակ սուսական կառավարութեան էր խանդարել զինդիր վերաքննութեան Պալամէնիոյ՝ եւ եթէ զօտար թելադրութիւնս եւ զազդեցութիւնս՝

ևթէ ոչ յամէլ Տ. Գէորգ կաթուղիկոս ի կ. Պոլս եւ ի սահմանս թուրքիոյ:

Ապաքէն աճապարէր ոուս. կառավարութիւն, նոյնալէս Տ. Գէորգ կաթուղիկոս, զի ընդփոյթ մեկնեսցի ի թուրքիոյ եւ հաստատեցէ զրնակութիւն իւր ի Մայր Աթոռով, յայսմիկ համաձայնէին միմեանց, այլ բազմօք եւ յանհունս իմն տարբերէին ի միմեանց ընդ նպատա- կացն եղելոց ի սպառ ներհակ եւ հակոսնեայ միմեանց: Գիտէր ոուս. կառավարութիւն զոր առնէր, իսկ Տ. Գէորգ կաթուղիկոս էր միա- միտ եւ միայն կայր յերուսաղէմ:

Եւ ահա ըստ ակնարկութեանց ոուս. կառավարութեան, տեսին Տեղակալ եւ Սինօդ Ս. էջմիածնի զպատրաստութիւնս ուղեւորականս և Հրաւիրակաց, առանց խնդրելոյ կանխաւ՝ համաձայն պարտաւո- րութեանց իւրեանց՝ զանմիջական հրաման ինչ ի նորընտիր կաթու- ղիկոսէ:

Յետ օծման նորաշէն Ս. Աստուածածին եկեղեցւոյ ընդ կից մա- տուանց կամ եկեղեցեաց, եւ զկնի կատարելոյ զհրաշափառ տօն Ս. Ծննդեան ի Պրուսա ընդ հօտի իւրում սիրելոյ, պատրաստեցաւ նո- րին Սրբութիւն Հոգեւոր Տէրն ուղւոյ լինել, հետեւեալ դարձեալ ակ- նարկութեանց Հիւսիսայնոց, միամիտ իմն ըմբռնմամբք:

Զան կալաւ եւ Պատրիարքարան ի պատրաստութիւնս կարեւորս առ ի հրաւիրել զնորընտիր կաթուղիկոս ի կ. Պոլս, եւ հիւրասիրել աստ ըստ արժանաւոյն: Վասն որոյ բանակցեալ կանխաւ ընդ ոուսական դեսպանատուն, — որ կանխեալ յառաջ քան զօսմ. կառավարութիւն, ցուցանէր զնախանձախնդրութիւն եւ ձեւացուցանէր պատուելն զՍըր- բազան կաթուղիկոս՝ առաքելով զդեսպանական շոգենաւն ի էջմէյիկ նաւահանգիստ առ ի փոխադրել զհոգեւոր Տէրն, — կարգեաց ի դիմաց երեսփ. ժողովոյ զհրաւիրակս, որք են.

Յովհաննէս Եպիսկ. կապուտիկեան, Քարոզիչ Միջազեղ (կ. Պոլսոյ),

Ներսէս Եպիսկ. Վարժապետեան, Քարոզիչ Խազեղ, Նորէն Վրդպ. Գալֆայեան, Քարոզիչ Ս. Երրորդութիւն եկեղ. Բներայի,

Գարբիէլ քհնյ. Ս. Երրորդութեան եկեղ. Ղալաթիոյ, Յովհաննէս քհնյ. Երաժիշտ Ս. Լուսաւորիչ եկեղ. Ղալաթիոյ Արիստակէս քհնյ. Քարակէօմրիւկի,

Սահակ քհնյ. Տէր Սարգսեան Միջազեղ,

Բժշկապետ Տոքթ. Ռաֆայէլեան էֆէնտի, Յակոբիկ էֆէնտի,

Պատորիկ էֆէնտի Նելլուղեան (ի դիմաց քեռառն իւրոյ՝

Յակոբ էֆէնտի Նորատունկեանի),
Յարութիւն էֆէնտի Գասպարեան, Գարու Օղանի (Բ. Գոր-
ծակատար Պատրիարքարանի առ Բ. Դրան) :

Արդ մեկնեցան Հրաւիրակք ի Կ. Պոլսոյ զվեցեւկէս ժամու միջօ-
րէի Թաման անուն շոգենաւաւ ուստական Դեսպանատան յաւուր
հինգեւարաթու ի 12-ն Յունվարի (1867), և հասին ի կէմլէյիկ ի մեծ
նաւահանդիստ յառաջին պահու գիշերոյ ի 13-ն Յունվարի, ուր առ-
նուն հանդիստ մինչեւ ցժամն 7 1/2 գիշերոյ, եւ ի նմին իսկ ժա-
մու նստեալ ի կառա եկեալ ժամանեցին զերկու եւ կէս ժամաւ առա-
ւոտեան ի Պրուսա, մինչ գտանէր Հոգեւոր Տէրն ի Ս. Եկեղեցով յա-
սուր տօնի Անուանակոչութեան Տն. յութերորդ ասուր (Ութօրէից)
Ս. Ծննդեան: Վեղարակիր եւ անվելցար եկեղեցականք առեալ անմի-
ջապէս զփիլոնն, ըստ հրամանի Հոգեւոր Տեառն, ի պաշտելն մեր
զԱ. Խորհուրդ պատարագի, հրաւիրանօք եւ առաջնորդութեամբ
Պետրոս վարդապէտի իջին կարգաւ եւ պատկառանօք ի Ս. Եկեղեցի,
եւ համբուրեալ զԱ. Նորին Սրբութեան՝ կանգնեցան յերկուս դասս
ըստ կարգադրութեան Հոգեւոր Տեառն, ըստ կարգի անձնիւր աստի-
ճանացն:

Ցորժամ երգէին դպիրք զ«Լցաք ի բարութեանց», եւ Վեհ.
Հայրապէտ ըստ սովորականին ընդ հրաւիրակս ի Ս. Եկեղեցոյ,
ընկալաւ ի ներկայութիւն իւր զհամայն Հրաւիրակս Պատրիարքարա-
նի եւ Երեսի. Ժողովոյ, որք յանձնեցին Հոգեւոր Տեառն զպաշտո-
նաթուղթս իւրեանց, եւ տեսին զպատիւս արժանաւորս: Երեւելիք
Հայոց Պրուսայու բաժանեալ ի տունս իւրեանց հիւրասիրեցին
զՀրաւիրակս, պատուեցին յոյժ, եւ ցուցին նոցա սէր բազում: Ա-
ռաջնորդարան-վանքն ոչ բաւէր նոցա: Յաճախեցին այլեւս չնորհա-
տութիւնք, այցելութիւնք, հրաւէրք եւ տեսակցութիւնք ընդ կու-
սակալի, ընդ Օսմ. աւագանւոյ եւ պաշտօնակալաց, ընդ հիւպատոսս,
ընդ Առաջնորդի եւ Երեւելեաց Յունաց, ընդ Քահանայապետի եւ ե-
րեւելեաց Հրէից:

Ս. Հայրապէտ ի 13 եւ ի 14 Յունվարի շրջեցաւ պաշտօնապէս
ի մնայք բարեաւ առ կուսակալ փաշայն, առ հիւպատոս Անգղիոյ,
Գաղղիոյ, Աւատրիոյ, Իտալիոյ, Պարսիկ եւ Յունաց, առ Մետրապո-
լիտ Հրէից, առ ամանս նշանաւոր անձինս օսմանցիս բարեկամս իւր
քիութացին եկին ի նորոյ առ ի մաղթել զճանապարհ բարի:

Ըստ խնդրանաց ժողովրդեան կարգեաց ի տեղի իւր զԱռաջնորդ
Պրուսայու զԲարթուղիմէսո վարդապէտ Զամիչեան զքարողիչ Սամա-
թիոյ, պատուիրեալ ցամս երիս փորձել զիրեար եւ յետ այնորիկ

խնդրել զեպիսկոպոսութիւն նորա, եթէ ոչ ունիցին զդժգոհութիւնս
զիրեարաց:

Ի դիմաց զօրավար Իկնաթիէվի դեսպանի ուսւացին թար-
զման Պ. Օնու եկեալ էր ընդ Հրաւիրակս Թաման շոգենաւաւ, եւ կան-
խեալ ի Պրուսա՝ լուաւ զհրաման Ս. Կաթուղիկոսի եւ վերադարձաւ
անմիջապէս ի շոգենաւ եւ մնայր գալստեան Հոգեւոր Տեառն:

Էր 15 Յունվարի, ի կիւրակէ աւուր էջ Նորին Սրբութիւն ի Ս.
Եկեղեցի, ուր, որպէս և ի թուրքիս համայն սովորութիւն է կատարել
ի միասին զոյգ ընդ առաւոտեան ժամերգութիւն զս. պատարագ, լըց-
եալ էր ժողովուրդ բազում եւ սրտաշարժ երգեցողութիւնք դպրաց
աղբէին եւ շարժէին զամենեսեան ի տիրութիւն եւ յարտասուս:

Խօսեցաւ Նորին Սրբութիւն զքարոզ համառօտ՝ առեալ ի բնա-
րան «Եղիցին կամք Տեառն օրհնեալ», զորպիսի բնաբան արտասան-
եաց եթէ յերթան ի պատրիարքութիւն եւ եթէ ի վերադառնալն,
որպէս եւ ի գալն յառաջնորդութեան Պրուսայու, օրհնեաց զհրա-
մանն Աստուածային, որ կոչեաց զինքն ի կաթուղիկոսութիւն ամե-
նայն Հայոց՝ ի պաշտօն ծանր եւ վսեմագոյն, ետ զողջոյն իւր հրա-
ժեշտի, պատուիրեաց ամենեցուն առհասարակ ճանաչել եւ վճարել
զանձնիւր պարտս, սիրել զԱստուած, սիրել զԱղջիկ եւ զեկեղեցի, հե-
տեւել անխոնջ ի պայծայուութիւն տանն Աստուածոյ եւ ի յառաջա-
դէմ արդիւնաւուրութիւն Գէորգեան վարժարանի, օրհնեաց եւ խրա-
խուսեաց զհօտ իւր սիրելի յորդառաստ արտասուօք եւ սրտաբուլի
մաղթանօք, ոչ զարդարէր ժողովուրդ ի յորդաբուլիս արտասուաց,
զողջես խննեալ էին ի տան սգոյ: Արար զմաղթանս նաեւ վասն Օս-
մանեան պետութեան եւ վեհ. Սուլթան Աղիկ կայսեր:

Յետ արձակման Ս. Եկեղեցոյ, յելանելն Նորին Սրբութեան յԱ-
ռաջնորդարան, ըրջապատեաց ժողովուրդ եւ կարօտալիր համբուրէր
զԱղջն Հայրապետական հանդերձ արտասուօք եւ աղեկէղ հառաչա-
նօք:

Համախմբեալ էին յԱռաջնորդարան – վանս ազգային իշխանք,
քաղաքական պաշտօնեայք եւ անձինք նշանաւորք, հիւպատոսք, գը-
լուիք պլուսայարնակ ազգաց, զորս ողջունեաց Հոգեւոր Տէրն եւ
պատուասիրեաց յարդանօք:

Եհաս վերջին ժամն բաժանման ի Պրուսայէ, եւ էր ժամ հինդ եւ
կէս ի միջօրէի:

Քահանայք զգեստաւորեալ եւ թափօր կազմեալ յառաջոյ վանուց-
Առաջնորդարանի, զպիրք եւ երգեցիկ մանկունք, որպէս եւ համայն
դպրոցականք կանգնեալ էին ի հանդիպակաց երկուս կարգս սկսեալ

ի փողոցային մեծ դրանէ Առաջնորդարանի մինչեւ ցդուռն Գէորգեան վարժարանի ի մեծ պողոտայի, գողցես փակեալ էին անցք ճանապարհի, այնչափ էր բազմութիւն երկսեռ ժողովրդեան, թողցուք զտունս, զպատուհանս, զբարձրադիր տեղիս եւ զշշակայս եկեղեցւոյ եւ Առաջնորդարանի:

Եւ Հոգեւոր Տէրն յԱռաջնորդարանի, եւ առաջի դրանն օրհնեալ եւ խաչակնեալ զժողովուրդ՝ ասաց զՊահպանիչ եւ զշայր մեր: Ապա որոտածայն հնչեցին երդք մանկանց եւ գլորաց. նստաւ Նորին Սրբութիւն յերիվար ամեհի, զոր առաքեալ էր կուսակալ փաշայն ի պատիւ Նորին Սրբութեան, նստան ի մեծ պողոտայի ի ձիս Հրաւիրակք, հիւպատոսք, ազգային երեւելիք եւ պաշտօնեայք, նշանաւոր անձինք, քաղաքականք, ոմն ներկայացուցիչ ի գիմաց կուսակալի, եւ սկսաւ թափօրն յառաջանալ ի ձայն երդոց մանկանց տակաւ առ տակաւ՝ անցեալ մեծաւ դժուարութեամբ ի միջոյ խուռներամ բազմութեան, յորում կրկին եւ ոստիկանք զմեծամեծ դժուարութիւնս:

Հհաս թափօրն ի գլուխ Սէթ Պաշի կամըջոյ, ուր օրհնեաց Հոգեւոր Տէր զարտասուալից մանկունս, զդպիրս եւ զքահանայս, հրամայեաց դադարել այլեւս եւ ինքն շարունակեաց զուղին ընդ ուղեկցացն յիշելեաց՝ իմա՛ ձիւաւրեալ հիւպատոսաց, քաղաքական պաշտօնէից, նշանաւոր անձանց եւ ներկայացուցչաց այլոց ազգաց, յառաջընթաց ոստիկան ձիւաւրաց յատկապէս առաքելոց ի կուսակալ փաշայէ: Թողումք յիշել զմեծամբոխ ուղեկցութիւն հեծեալ եւ հետիոտ ժողովրդեան:

Հասեալ ի Թաթարլար, ի հիւսիսային սահման ինչ շինութեանց քաղաքի, հանդերձ շնորհակալութեամբ օրհնեաց զժողովուրդ, զհիւպատոսս, զքաղաքական ուղեկիցս, զներկայացուցիչս եւ արձակեաց զնոսա վերադառնալ յիւրաքանչիւր տեղիս, յետ այնորիկ նստեալ ինքն ի կառս, որպէս եւ Հրաւիրակք եւ այլք ուղեկիցք բազումք նստեալ էին ի կառս, շարունակեաց զուղի իւր. ուղեկցէր ոստիկանապետ պէտին եւ ներկայացուցիչ կուսակալի մինչեւ ցկմլէյիկ:

Էր ժամ 12 ընդ երէկս ժամանեաց ի կէմլէյիկ, ուր գիմաւորեաց Պ. Օնու զՀոգեւոր Տէրն, որ ելեալ ի կառաց՝ գնաց ուղղակի ի ոուսական շոգենաւ Թաման, որ կացեալ ի բացեայ՝ դրօշակազարդեալ էր եւ ոուսազգի նաւաստիք կանդնեալ էին ի բարեւ: (Եւ զի էր ծոմ (բամազան) մահմետականաց, ի մտանեն ի շոգենաւ՝ զուղադիպեցաւ եւ որոտաց թնդանօթն): Հանդիսոտ էառ Նորին Սրբութիւն իրեւ ժամ մի եւ ապա նստաւ ի սեղան ընդ համայն ուղեկիցսն, ընդ որս եւ Պ. Օնու, եւ վայելեաց զոուսական ընթրիս: (Անդէն յընթրեան անմի-

ջապէս ուսաք մեք ի ոուս ծառայից զոուսական բառս ինչ՝ իլէպ (հաց), վատա (ջուր), ապէթ (կերակուր), վինօ (գինի), վօթքա (օղի - ցքի), տալայ (կամիմ), նիէթ (ոչ), խարաշօ (բարի, լաւ), պլաղատարիեիւ (չնորհակալ եմ) եւ զայլս այսպիսիս):

Յետ գիշերոյ, ի յաջորդ աւուր ի 16 Յունվարի ընդ արշալոյսն զմի ժամաւ շարժեցաւ շոգենաւն եւ չափեաց զուղին: Զվեց ժամու միջօրէի եհաս ի կ. Պոլիս եւ խարսխեաց առաջի Գապաթաշի: Եւ ահա եկեալ մտին ի շոգենաւ եպիսկոպոսունք, վարդապետք եւ գլւ-խաւոր ազգայինք, ներկայացուցիչ Ազդ. Պատրիարքարանի եւ թաղ. խաւոր ազգայինք, ներկայացուցիչ Ազդ. Եկեղեցւոյ Բերայի, եւ մի ոմն ի գիմաց ոու-խորհրդոյ Ս. Երրորդ. Եկեղեցւոյ Բերայի, եւ մի ոմն ի գիմաց Ոսմ. պետութեան: Եւ ներկայացն զեսպանի, եւ ոչ ոք ի գիմաց Օսմ. պետութեան: Եւ ներկայացն Հոգեւոր Տեառն խորին յարգանօք:

Զկնի մէկ եւ կէս ժամեայ հանգստութեան եւ տեսակցութեանց ի շոգենաւի, ել Հոգեւոր Տէրն մակուկաւ ի նաւահանգիստ Գապաթաշի շի ընդ համայն ուղեկիցսն եւ ընդ նորեկս, օրհնեաց զբազմութիւն չայոց կուտակելոց, ընդ որոց լցեալ էին եւ օտարազգի ոչ սակաւք, նստաւ ի փառազարդ յատուկ կառս եւ սկսաւ յառաջանալ յամըլնթաց գնացիւք, խումբ ոստիկնաց առաքելոց ի կառավարութենէ երթաց յառաջեաւ: Դժուարութիւն մեծ էր ի բանալ զուղի ի բազմութենէ Հայոց եւ հետաքրքիր անձանց օտարազգեան, միանդամայն երթեւեկից:

Հասեալ առաջի պողոտական մեծի դրան Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ Հայոց Բերայի (որ նախ քան զիերջին հրկիզութիւն) ի Թօուրու - եօլ, ուր կազմ եւ պատրաստ սպասէր մեծահանդէս թափօր եկեղեցական հանդերձ սարօքն, սկսան դպիրք նուազել ի ձայն քաղցր զնորհահիւ երգս (Բարեալ երբ ի մէջ), եւ Վեհ. Հայրապետ շուրջառեալ եւ կանգնեալ ընդ ամպհովանեաւ ի գլուխ հանդիսի, եմուսի Ս. Եկեղեցի երգուք շարականաց (Ուրախ լեր Ս. Եկեղեցի եւ Հրաշափառ), եւ ստիպեալ ի բազմութենէ ժողովրդեան՝ ել ի բեմ, ուր յետ սազմուելոյ (Ուրախ եղէ ես) ըստ սովորական կարգին, դարձաւ առ ժողովուրդ, համառօտ իմն բանիւք օրհնեաց զԱզդ եւ զեկեղեցի Հայաստանեաց, զհանդիսականս, զերեսփոխանս եւ զհամայն պաշտօնեայս ազգայինս, յաւել զՊահպանիչ եւ զՀայր մեր:

Ելեալ ի Ս. Եկեղեցւոյ եւ ըստ ինդրանաց եւ զհրաւիրանաց Թաղ. խորհրդոյ՝ եկն ի խորհրդարանն թաղական, զոր կահաւորեալ պատրաստեալ էին յատկապէս, հանգիստ էառ ընդ ազգայինս:

Անդ ներկայացան Նորին Սրբութեան խումբ ազգային խմբագ-

բաց եւ մատուցին մեծարանօք յետ ընթեռնլոյ ի ձայն բարձր զուղերձս զայս.

« Վեհափառ Հայրապետ.

« Կ. Պոլսոյ Ազգային երեսփոխանական ժողովը եւ ի Ս. էջմիածն գումարեալ Համազգային ընտրողական ժողովը զՁեր սրբազնութիւն կոչելով ի Միածնէջ Դահ Սրբոյ Հօրն մերոյ Լուսաւորչի, « Պրուսայու ձեր սիրելի Հօտին հովուութենէն կը բարձրացնէ յընդաւութիւն բովանդակ Հայոց Ազգին, ուստի այսօր Հանաց եկան դիմաւորելու զՁեղ, Վեհափառ Տէր, եւ Զեր անձին եւ ընտրութեան վրայ խնդակցութիւն յայտնելու, Զեր բարձր Սրբազնութիւն բարօրութիւն եւ բարեյաջողութիւն գործոց մալթելու:

« Գիտէք, Վեհափառ Տէր, ո՛րչափ մեծ եւ բարձր է այդ կոչուածն եւ աստիճանը, առ որ Հոդին Սուրբ առաջնորդեց զՁեղ, նոյնչափ մեծ եւ ամենամեծ է Զեր պարտքը, մանաւանդ այս ժամանակիս մէջ, յորում Հայոց Ազգը ընդ ոլորտս երկրի, իրեւ ի միակ յոյս եւ ապաւէն առ Զեղ դարձուցած է իւր հայեցուածքը եւ Զեր փորձիւնքին ու կատարելութեան ձիրքերէն կակնկալէ:

« Նախ՝ պահպանութիւն եւ ամբողջութիւն Հայաստանեայց ուղղափառ Եկեղեցւոյ, անխախտ եւ ամբապինդ պահելով Քրիստոսական թիւնք եւ արարողութիւնք, որք ի նախնեաց մերոյ ի սրբոց Հարց դիր կարդ ու կանոն Առաքելական եւ Լուսաւորչական դաւանութիւնք, որք ի նախնեաց մերոյ ի սրբոց Հարց հատոր նշխարներ են բազմաթիւ հայերու արիւնովը շաղախուած եւ մեզի հասած, որք մեր ազգութեան միմիայն կնիքը կը կրեն, եւ անոնցմով ենք այսօր Հայ Ազգ մը աշխարհի առջեւ, եւ ջնջելով ու վերցնելով այն ամէն նոր ու Եկեղեցւոյ եւ Ազգի վնասակար կարգադրութիւնները, որոնք տղէտ եւ շահախնդիր ու թոյլ անձերու ձեռօք ներմուծուած ու զօրութիւն դտած են:

« Երկրորդ՝ Երաշխաւորեալ պահպանութիւն Ազգիս, ազգային եւ անհատական իրաւանց, ապահովութիւն իւրաքանչիւր բարեխնամ կառավարութեանց ներքեւ, որոնց հպատակք կը գտնուին Հայ Ազգի գաւակները. վասնի Զեր վեհափառութիւնը ոչ միայն Ծուսարնակ, « այլեւ Թուրքաբնակ, այլեւ Հնդկաբնակ եւ Պարսկաբնակ եւ Աւըստական իրաւանց վրայ ընդհանրական Տեսուչ էք ի հոգւոյն, « հովիւ էք Ազգէն ընտրուած, եւ անոր հայրենաւանդ Ս. Կրօնին, Ետական ամէն իրաւանց պաշտպանը առաջի Ծուսափոյ ի Ծուսափ,

« առաջի Թուրքիոյ ի Թուրքիա, առաջի Անդղիոյ ի Հնդկաստան, առաջի պարսից ի Պարսկաստան, առաջի Աւստրիոյ ի Ավստրիա. ուստի այս ամեն կառավարութեանց հետ իրեկ ընդհանրական գլուխ « եւ ներկայացուցիչ Ազգին՝ կարող էք բանակցիլ, եւ Զեր Հօտին ու Զեր ժողովրդեան համար բարեխսուել, միջնորդել եւ բարոյական, « նիւթական եւ մտաւորական զարգացման հոգ տանել:

« Երրորդ՝ ըստ կարգի, բայց ըստ պիտոյից առաջին համարելի, ազգային դաստիարակութեան ծաւալումը, այն է սրտով, մըտքով եւ հոգւով Հայեր պատրաստել. Հայաստանեայց Ս. Եկեղեցին եւ Հայոց Ազգը մեծ կարօտութիւն ունի քաջարթուն, հոգելից, բանիւն, վերջապէս արժանաւոր Եկեղեցականներու եւ աշխարհականներու կաններու. Արժանաւոր Եկեղեցականաց պիտոյքը Դուք ինքնին փորձիւ գգացած էք, Վեհափառ Տէր, հովիւ պէտք է ոչ անձնդիւր, գլուխ ոչ ինքնասէր, այլ ժողովրդասէր, Եկեղեցասէր, ազգասէր: Այս պիտոյքը մեծ ու զգալի եղած է, մանաւանդ ներկայ ժամանակիս մէջ, յորում անարժան Եկեղեցականաց Երեսէն Եկեղեցին նշաւակ, Ազգը յուսաբեկ, եւ մանաւանդ թեմեր ալ խայտառակ եղած են: Զգենք վանքերէն մեծ մասին եւ ամենէն հոչակաւորներուն ողբարձակը. թողունք Առաջնորդաց մեծ մասին անպիտանութիւնը, այլ անպատմելի խայտառակութիւնք, քստմնելի սրբապղծութիւնք, եւ անխիղճ գայթակութիւնք գործուեցան մօտ ատեններս երկու մասնաւոր Կաթողիկոսութեանց թեմերուն մէջ յԱղթամար եւ ի Սիս երկու անարժան եւ խսպառ անարժան Եկեղեցականաց միջոցաւ: Ազգը քստմնելով տեսաւ անոնց անվայել գործը, եւ վիճակային ժողովով այս ինքնընտիր, ինքնահրաւէր եւ ինքնակոչ անձանց անվաւերութիւնը եւ անարժանանութիւնը վճռուեցաւ: Զեր Վեհափառութիւնը՝ այսպիսի սրբապղծութեանց եւ Հայաստանից Եկեղեցւոյ եւ Հայ Ազգի կործանումն եւ աղէտ սպառնաւութեանց վրայ անշուշտ արժանաւոր սրտմտութեամբ կը նայի, եւ Տիրոջը Այդին այնպիսի աղուէսներէ զերծ պահանջութիւնը ոչ միայն խօսքով, այլեւ գործքով պիտի ցուցնէ:

« Այս Երեք գլխաւոր պիտոյից մէջ, որոնք կակնկալէ Ազգը այսօր Զեր Վեհափառութիւնէն, կը պարունակեն եւ այլ ամենայն պիտոյք, զորոնք Հարկ չենք համարեր մանրամասնել հոս. Զեր Վեհափառութիւնը այդ ամենը գիտէ ու կը զգայ, եւ արդէն Ազգը մեծ յոյսեր կը սնուցանէ իր սրտին մէջ, եւ վստահութեամբ կրնայ ըստէ իր ընտրութեան մէջ վրիպած չէ. Դուք ալ այս արժանաւութիւնը ոչ միայն խօսքով, այլեւ գործքով պիտի ցուցընէք՝

« Զեր փառքը Հայաստանեայց Եկեղեցւոյ պահպանութեան եւ ամ-
« բողջութեան մէջ փնտուելով, Զեր պատիւը Զեր հարազատ զաւակաց
« կենդանի երախտագիտութեանը մէջ, եւ Զեր յիշատակը Զեզի ար-
« ժանաւոր Յաջորդացը մէջ: Դուք այսօր կը դահակալէք այս Աթո-
« ուր, որ Զեզմէ առաջ բազմաթիւ կաթուղիկոսներ ժառանգած են,
« բայց անոնցմէ մէկ մասը միայն իրենց անուանը հետ իրենց բարի,
« առաքինի, սիրելի եւ պաշտելի յիշատակը թողուցած է, մնացեալ-
« ները միայն Անուննին: Անչուշտ, դուք ի շարս կաթուղիկոսաց՝ մի-
« այն անուն թողելու չէք, այլ արժանաւորաց օրինակին պիտի հե-
« տեւիք, եւ մանաւանդ Զեր նախորդին նախորդ Աշտարակեցի Հո-
« գելոյս Ներսէս *) կաթուղիկոսին, այն անմահ յիշատակաց արժա-
« նի անձին, որուն համար Ազգը յաւիտեան երախտագէտ պիտի մը-
« նայ: Կը տեսնէք, Վեհափառ Տէր, թէ ժողովուրդը՝ Զեր սիրելի զա-
« տակները ի՞նչ սիրալիր եւ որդիական գորուանօք զԶեզ շուրջ պատած
« են. այո՛, ոչ միայն գորուելի, այլեւ պաշտելի պիտի ըլլաք, երբ ի-
« րենց ակնկալութեանց կատարումը տեսնեն, իսկ եթէ զրկուին այս
« յոյսէն, ո՞ւ, եւ ոչ մէկը պիտի գտնէք Զեր շուրջը: Քիչ մը խիստ
« են այս խօսքերը, այո՛, բայց Ազգին այսօրուայ աղէտալի եւ վը-
« տանգաւոր վիճակին մէջ ի դիմաց ժողովրդեան այս ազդարարու-
« թիւնները պէտք է որ հոս ըլլան: Ժողովուրդը արթնցած է, կը
« զդայ, կիմանայ, կը յուզի, ասանկ տեսարաններու վրայ շամտու-
« թեամբ չնայիր, հոգեւոր եւ կենսական հանդէսներու ու տեսարան-
« ներու կը բաղձայ, Դուք այս փառքին ու պատոյն մէջ ոչ թէ հան-
« գստութիւն, խաղաղութիւն եւ երջանկութիւն գտնելու կուգաք,
« այլ գիշեր ցերեկ անքուն տքնութեան, Ազգային Եկեղեցւոյ, Հայ-
« րապետական կանոնաց, ազգային յառաջդիմութեան եւ ազգային
« ընդհանրական եւ անհատական իրաւանց պաշտպանութեան համար
« մինչեւ իսկ նահատակութեան: Վտանդը մեծ է, հարկաւ, եւ Զեր
« Վեհափառութեան աշխատութիւնն ալ մեծ պիտի ըլլայ, բայց աւե-
« լի փառք ու պարծանք պիտի գայ Զեր անուան եւ յիշատակին, զի
« այսպիսի ալեկոծեալ եւ փոթորկալից ժամանակի մէջ նաւապետու-
« թեան կոչուցաք: Ազգը պիտի չսխալի այս իր ընտրութեան մէջ:
« Զեր Վեհափառութեան փորձառութիւնը եւ ազգու ընաւորութիւնը
« կը խոստանայ մեզ ամէն բարեյաջողութիւն: Կը ձայնակցինք ու-
« րեմն այս խուռն բազմութեան՝ Զեր սիրելի ժողովրդեան հետ կո-
« չելով՝ կեցցես Վեհափառ Տէր:

*) Ակնարկ միամիտ, արդիւմք տգիտութեան, որպիսիք երեւին եւ յայլ բան
ինքնաբուս ազգային խմբագրաց:

« Մնամք Վեհափառ Հայրապետիդ ամենախոնարհ որդիիք

Ազգային խմբագիրք ի Կ. Պոլիս.

Կարապետ Չուխանձեան (Ծիածան)

Կ. Ս. Իւթիւնեան (Մասիս)

Մարկոս Աղաբէգեան (Ծիլն Աւարայրի)

Ս. Փափազեան (Ժամանակ)

Հ. Ս. Աւաճաճեան (Փունիչ)

Կարապետ Յ. Փանոսեան (Մանգումէ)

« 16 Յունվարի, 1867. »

Համառօտագոյն եղեւ պատասխանի Հոգեւոր Տիառն, եւ ա-
ռանց հետեւելոյ տեսական եւ վերացական ուղղութեանց՝ չնոր-
հակալ զեւ եւ օրհնեաց զլրազրապետու, կարդաց զօդնութիւն ա-
մենակալին Աստուծոյ առաջնորդել ինքեան եւ Հայոց յօդուտ եւ ի
պէտու Եկեղեցւոյ եւ Ազգի Հայաստանեայց:

Յետ երկամեայ միջոցի՝ տեսեալ եւ յարգեալ զհիւրասիրութիւն-
թաղ. խորհրդոյ, ել Նորին Սրբութիւն ի խորհրդարանէ եւ համա-
ձայն յատուկ փափաքանաց, խնդրանաց եւ հրաւիրանացն եկն ի հո-
յակապ բնակարան Մեծ Յակուբայ էֆ. Նորատունկեանի ի Թօդրու-
եօլ, մերձ ի Թագսիմ, եւ բնակեցաւ անդ մինչեւ մեկնեցաւ աստի ի
կ. Պոլսոյ:


Անդ պարզեալ ի նորոյ Հրաւիրակաց, Եկեղեցականաց եւ աշխար-
հականաց, ազգային երեւելեաց, անձանց նշանաւորաց եւ այլոց եւ
այլոց զմաղթանս, զիղձս եւ զմեծարանս իւրեանց, համբուրեալ
զՀովուապետական Ազ Հոգեւոր Տիառն, առին զօրհնութիւն եւ մեկ-
նեցան յիւրաքանչիւր բնակարան:

Գլուխ եգ.

ՅԱՂԱԳՍ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆՑ, ՏԵՍԱԿՑՈՒԹԵԱՆՑ,

ՎԵՂԱՐԱԽԱՉԻ ԵՒ ՈՄԱՆՑ ԱՆՑԻՑ

Հանդիսատ առեալ Հոգեւոր Տիառն սակաւուք, ի սմին իսկ առուր
(16, Բ2.) մերձ ի մուտս արեւու ել եւ գնաց յայցելութիւն ոուսական
դեսպան Նիկոլայ Իկնաթիէվ զօրավարի ի գեսպանատան ի Թօդրու-
եօլ: Եւ այսու առթիւ փոխանակեաց նմա զշնորհակալութիւն սակա-
թաման շոգենաւու եւ հիւրասիրութեանցն որ ի նմին շողենաւի, եւ
վասն Պ. Օնուցի:



Imp. ARTISTIQUE. — 42, Rue de la Jonquière, PARIS (17^e)